

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



*M. H. ...*







ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ ԲԻԷՐ

# ԲՕԼ ԵՒ ՎԻՐԹԻՆԻ

Թարգմ. ՋԱՐԵԷ ՆԵՄՅԷ

(Գ. Տպագրութիւն արդի աւխարհաբարոյ)



ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ "ԿԻՒԹԷՄՊԵՐԿ"

Կ. Ն. ՄԱՒԱՍՏՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929

Handwritten in the left margin: 643







ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿԻՍ

**ԼԻՒՍԻ ՄԱԳԱՍՃԵԱՆԻ**

ԴԷ ԶՈՆԵՄ ԱՅՍ ԳԻՐԲԸ

ԻՐԸ ՈՐԳԻԱԿԱՆ ԽԱՆԴԱԴԱՏԱՆԻ ԶԱՄԵՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԸ :

**Ա.Ա.Ստանբուլի գրքոստանոյ**

Հրատարակիչ՝

ԿԻՒԹԵՄՄԵՐԿ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

**Կ . Ն . ՄԱԳԱՍՃԵԱՆ**





## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՀԱՄԱՐ

Պէճնարսէն սր Սէն-Ֆիէրի այս վէպը, **Քօլ եւ Վիլհիմի,** սիրային զմայելի հովուերգութիւն մը, իբր դասական գլուխ գործոց՝ միշտ հիացումով կարդացուած է հին ու նոր սերունդներուն կողմէ: Իսկ արդիական բարբերու թոհուրոհին մէջ, ուր սէրը լղրնուած ու նիւթականացած է, թերեւս ամէնուն շրթունքներուն վրայ քմծիծաղ մը առաջ բերէ մաքուր սիրոյ մը հմայիչ նկարագրութիւնը բնութեան ծոցին մէջ: Բայց մենք կը հաւատանք որ, հակառակ բարբերու ապականութեան, անբիծ սէրը սակաւին գոյութիւն ունի, թէեւ շատ հազուադէպ: Ու անոնք որ այդ վնիս սիրոյն կարօսը կը փաշտեն, հոգեկան հրնուանով ու նշմարիտ յուզումով մը պիտի կարդան այս արժայոյզ վէպը, որ արցունքներ խլած է ընթերցողներուն աչքերէն, մանաւանդ իր եղերական վերջաւորութեան մէջ, երբ վէպին հերոսուհին կեանքը կը գոհէ կնոջական ամօթխածութեան համար:

Այս գեղեցիկ վէպը երեք անգամ հայերէնի թարգմանուած է կէս դարէ աւելի առաջ. մէկ թարգմանութիւնը ռամկօրէն, իսկ երկուսը գրաբար: Ամբոսիոս վարդապետ Քալճատեան առաջին անգամ 1856ին թարգմանած է գայն: Հ. Եղուարդ Հիւրմիւզ 1872ին լոյս ընծայած է գեղեցիկ թարգմանութիւն մը ոսկեղենիկ ու ներդաշնակ լեզուով մը, որ պատիւ կը բերէ վարպետ թարգմանչին:

Իսկ ներկայ շորրորդ թարգմանութիւնը արդիական աշխարհաբարով լոյս կը տեսնէ կէս դարու շրջանէ մը յետոյ:

Այս առթիւ շահեկան կը համարինք համառօտակի վերլուծել հեղինակին՝ Պէճնարսէն սր Սէն-Ֆիէրի կեանքը, որ յուզիչ դրուագներով լեցուն է:

Պէճնարսէն սր Սէն-Ֆիէր 1737ին Հալբի մէջ ծնած ու 1814ին մեռած է: Կը պատկանէր Էօսթաւ սր Սէն-Ֆիէր ազնուական ընտանիքին: Արկածալից կեանք մը վարած է պզտիկ հասակէն: Տասերկու տարեկանին՝ Ռօպէնսօն Քրիստօքի կեանքը կ'երազէր ու դէպի Մարթինիֆ կղզին նամբորդութիւն մը

կ'րնէր: Տասնրորր սարեկանին՝ Քաէնի մէջ Ճիզուիթներուն առակերս, կ'ուզէր միսիօնար ըլլալ ու նահասակուիլ: Բօն գ'է Շօնէ վարժարանին շրջանը աւարտելէ յետոյ՝ 1760ին Տիւսէլ-սօրժ գացած է իբր նարսարագէտ-սպայ: Սակայն իր անհնազանդութեան համար պաշտօնանկ թողած, արկածախնդրական կեանքի մը մէջ նետուած է դարձեալ, հոգին մելամաղձոս, միտքը յարասանջ, մարդասիրական ցնորհներու հետամուտ:

Մերթ թուառութեան մասնուած, մաթեմաթիքի դասեր կուսար Բարիզի մէջ. յետոյ օրագրող կ'ըլլար Ամսթերսամի մէջ: Բայց օրին մէկը, բախտը կը ժայտէր իրեն: Ռուսիոյ Կասարինէ Բ. կայսրուհիին մօտ ծառայելով անոր սիրականը կ'ըլլար: Յետոյ Լեհաստանի անկախութեան պաշտպան, լեհ իշխանուհիի մը սիրահարը եղած է: 1767էն 1770, նարսարագէտի պաշտօն վարելէ յետոյ գրական ասպարէզը ընդգրկած է: 1773ին հրատարակած **Ուղեւորութիւն Եւ սը Ֆրանսի** մէջ երկասիրութիւնը յաջողութիւն գտած է: Բայց իր թուառ կեանքէն ու աշխարհիկ ընկերութեան չարախօսութիւններէն դառնացած, մեկուսի կեանք մը կը վարէր, մեծ իմաստասէր ժան-ժազ Ռուսօն ունենալով իբր մտերիմ, որուն գաղափարները եւ անուշները խանդավառութեամբ կ'ընդունէր: Այդ առանձնացումին մէջ [Ռուսոյի ազդեցութեան ենթարկուած, Պէռնարսէն սը Սէն-Բիէր հինգ հասորնոց աշխատասիրութիւն մը յօրինած է. **Ուսումնասիրութիւններ Բնութեան վրայ**: Այս ինքնատիպ գործը յեղաշրջում առաջ բերած է: Աւելի մեծ յաջողութիւն մը վերապահուած էր **Բօլ եւ Վիրժինի** վէպին, որ 1788ին լոյս տեսած է: Իր նոր ու ինքնատիպ յղացումով, գողտրիկ հովուերգութիւն մը ու վսեմ եղերերգութիւն մըն է այս վէպը, որուն վրայ մարդ իր արժու կը հիանայ ու հոգիով արցունքէ կը թափէ: Հեղինակին կրօնական, բարոյական ու բանաստեղծական ամբողջ իտեալը ի յայտ կու գայ նոյն ու պատկառազդու բնութեան մը ծոցին մէջ:

**Բօլ եւ Վիրժինի** վէպին հրատարակութենէն տարի մը յետոյ, 1789ին ծագած ժրանսական յեղափոխութիւնը գոհութեամբ ողջունուած է Պէռնարսէն սը Սէն-Բիէրի կողմէ: Երկու տարին հրատարակած է **Մեծակեացի մը Բաղձանքները** անուն գործը, հին ու նոր գաղափարները իրարու հետ հաշտեցնելու համար: Քանի մը տարիներ յետոյ պատուաբեր պաշտօններ յանձնուած են Պէռնարսէն սը Սէն-Բիէրի. բուսաբա-

նական պարտեզին վերակացու եւ յետոյ էֆօլ Նորմալի մէջ  
բարոյագիտութեան ուսուցիչ կարգուած է: 1795ին կանառ  
մսած է: Քիչ յետոյ Լուվրի մէջ տեղաւորուած, լեցուն ամ-  
սաթոռակ մը կը ստանար: Այնուհետեւ իր կեանքը անցուցած  
է Լիօնի մէկ գեղազուարն կղզիին մէջ, բնականեկան գուր-  
գուրանքներով շրջապատուած: Սակայն չէ կրցած երջանիկ ըլ-  
լալ, որովհետեւ իբր մատենագիր աւելի բարձր արժէք ունէր  
քան իբր անհաս:

Պէճնարսէն զր Սէն-Բիէրըզրած է նաեւ հետեւեալ գոր-  
ծերը. **Արքայի**, անկասար ֆերթուած մը կասարեալ հան-  
րապետութեան մասին, **Հնդկական երնիքը**, անքերի ու  
բարոյալից վէպ մը, **Քնուրեան Ներդաւնակուրթիւնները**,  
**Սուրաթի Սրնարանը**, **Ուղեւորական Պատմութիւն-  
ներ**, **Գրափորձ մը ժ. ժ. մուսոյի վրայ**:

#### Հրատարակիչներ

Կ. Ն. ՄԱԳԱՍՏԵԱՆ Գ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



## ՆԱԽԱԲԱՆ

Մեծ խորհուրդներ առաջադրած եւս այս փոքր  
երկասիրութեանս սկզբ: Չսուսցած եւս հոնս նկարա-  
գրեչ հոնք սր ու բոյսեր, որոնք կը սարքերիս եւ-  
րոպայի հոնքն ու բոյսերէն: Մեր բանաստեղծները  
արդեւ իսկ իրենց սիրահարները բաւական հանգ-  
չեցուցած են վսակներու եզերքը, մարգագետիննե-  
րունս սկզբ ու փեկոններու սաղարթներունս սակ: Իսկ  
եւ չուզեցի զանոնք նստեցնել ծովափը, ժայռերուն  
ստորոքը, սղարակներուն, սղարակներուն եւ  
ծաղկաւեք կիսրոններուն հոյակապիս սակ: Եթե  
երբեք Թեոփիստներ ու Վիրգիլիոսներ չպակ-  
սէին աշխարհի սիւս սասիս սկզբ, սեր երկրիս  
բնակարարներուն չափ շահեկան բնակարար պիտի  
ունենայիս: Գիտե՛ս թէ իսիս հաշակաւոր հասարակ-  
ներ դիւրանակ նկարագրութիւններ ըրած են Հա-  
րաւայիս ծովուն սկիս կողմներուն սասիս, բայց  
անոնց բնակիչներունս բարձրը, ու հոնս գաւաթ երած  
Երոպացիներունս բարձրը առաւելապէս ու յաճախ  
կը իսարեւնս այդ բնակարար: Եւ բաղձացի արե-  
ւադարձայիս երկիրներունս բնական գեղեցկութեան  
սիւսցնել փոքր ընկերութեանս սր բարոյական գեղեց-  
կութիւնը: Նոյնպէս առաջադրած եւս ի յայտ բերեչ  
սակի սր սեծ հշարսութիւններ, ի սկզբ այդոց սս  
հշարսութիւնը թէ սեր երջանկութիւնը կը կայս-  
նայ բնութեան ու առաջինութեան հարաւայիս սս-  
րեչունս սկզբ: Սակայնս բնաւ պիտի չունեցայ վեպ սր  
երեւակայեչունս. երջանկի ընկանիներ նկարագրեչունս

հարևար: Կրևաւ հաւաստեալ թէ իսկապէս գոյութիւն  
 ունեցած եւս այն ընտանիքները, որոնց վրայ պիտի  
 խօսիմ. անոնց պատմութիւնը իրական է իր գլխա-  
 ւոր դիպքերուն վեպ: Այդ մասին ինծի հաւաստի-  
 ներ ընծայած եւս քանի որ ընտանիքներ գոր Իշ-սը  
 Թրակի վեպ ճանաչած եւս: Մեկ քանի աննշան պա-  
 րագրեր վիպիկ աննշան ընծայած եւս, որոնք իրական եւս  
 դարձեալ, աննշան ընտանիքն հարևար: Քանի որ  
 սարի առաջ, այս քանի որ հոյններգութեան խիստ  
 անկարեւոր ուրուագիծը պատմագիտի, ինչորեւոյ՛ որ  
 ահոր ընթերցումը վեպն ընտանիքն դասուն հետ  
 յարաբերութիւն ունեցող գեղանի կիսն որ եւ անկե  
 հետոս ապրող ընտանիքն մարդիկ, որպէսզի անխա-  
 պէս հասկնաւ թէ այդ երկասիրութիւնը ի՛նչ սպա-  
 ւորութիւն պիտի գործէր այնքան այրագան անխա-  
 գիրներն սեր ընթերցողներն վրայ, ու ես գոհու-  
 նակութիւնը ունեցայ քանի որ թէ անկեւս ալ ար-  
 ցունք քանի որ: Ահա՛ վիպիկ վեպն որ գոր Կրգի ձեռք  
 բերել, ու ես կ'ուզեմ այդ քանի որ վիպիկ գիտնալ: Եւ  
 որովհետեւ փոքր ստանդարտն յաճախ կը հետեւի վեպ  
 մտնութիւն վր, այդ յաջողութիւնը ինծի անխա-  
 թիւն ներշնչեց երկասիրութեան խորագիրը դե-  
 ղու. Բնութեան պատկեր: Բարեբախտաբար յիշեցի  
 որ ինծի ո՛րքան օտարն էր ընտանիքն այն կշի-  
 վային ուր ծնած եւս. այն երկիրներուն վեպ, ուր  
 արդիւնաբերութիւնները քանի որ իր ճանքորդ,  
 ընտանիքն ո՛րքան ճիշտ, այրագան, սիրուն, փառա-  
 ւոր, խորհրդաւոր է, ու ես կորովաւսնութեակ, ճա-  
 շակե եւ արտայայտութեակ ո՛րքան գորկ եւս, ճանչ-  
 նալու եւ անխաղաղութիւն հարևար գայն: Ահա այն աննշան  
 ինքնանկողնուցայ: Վերոյիշեալ աննշանի սակ քո-  
 վանդակեցի այս սկար փորձն ալ, Ուսումնասիրու-  
 թիւններ Բնութեան վրայ գործէր յետոյ, գոր հան-  
 րութիւնը ընտանիքն այնքան քանի որ քանի որ քանի որ,  
 որպէսզի այդ խորագրին հանդէպ յիշե իմ անխա-  
 ղողութիւնս, վիշտ մտնութեւն իր ներողութեան:



## ԲՕԼ ԵՒ ՎԻՐԺԻՆԻ

Իլ-տը-Ֆրանսի մէջ, Բօռ-Լուիի ետին բարձրացող լերան արեւելեան կողմը, ատենօք մշակուած դետնի մը վրայ կը տեսնուին երկու փոքր հիւղակներու աւերակները: Անոնք հաստատուած են մեծ ժայռերէ կազմուած լեռնաձորի մը մէջ-տեղը գրեթէ, որ դէպի հիւսիս դարձած միակ ելք մը ունի: Չախակողմը կը նշմարուի Մօրն տը լա Տէքուվէրթ լեռը, ուրկէ նշանացի իմաց կը տրուի ժամանումը այն շոգենաւերուն որոնք կղզի կը հանդիպին, իսկ այդ լերան ստորտը կը տեսնուի Բօռ-Լուի անուն քաղաքը: Աջակողմը՝ Բօռ-Լուիէն դէպի Բամբլըմուս տանող թաղը՝ յետոյ համանուն եկեղեցին, որ հնդկեղէզներով զարդարուն իր ծառուղիներով կը բարձրանայ մեծ դաշտագետնի մը վրայ. աւելի հեռուն՝ անտառ մը որ կը տարածուի մինչեւ կըղզիին ծայրը: Չեր առջեւ, ծովեզերքներուն վրայ կը նշմարէք Թօմպօ հրուանդանը, քիչ մը դէպի աջակողմ՝ Մալէօրէօ հրուանդանը, իսկ անկէ անդին՝ բաց ծովը, ուր ջուրին երեսը ծփուն կ'երեւան անբնակ քանի մը կղզեակներ, ի մէջ այլոց, Քուան տը Միր, որ մարտկոցի մը կը նմանի ալիքներուն մէջտեղը:

Այդ լեռնաձորի մուտքին վրայ, ուրկէ շատ



մը բաներ կը տեսնուին, լերան արձագանդները  
անընդհատ կը կրկնեն մօտակայ անտառները  
վրդովոզ հովերու. մոռնչները եւ հեռուն խա-  
րակներուն վրայ փշրուող ալիքներուն շառաչիւ-  
նը. բայց այդ խորճիթներուն ստորուտը ո եւ է  
շշուկ չի լսուիր, ու շուրջը կը տեսնուին պա-  
րիսպներու նմանող սեպ ապառաժներ: Մտա-  
փունջեր կ'աճին ժայռերու ստորուտը, անոնց  
ճեղքերուն մէջ, ու մինչեւ անոնց կատարները  
ուր կանգ կ'առնեն ամպերը: Սարերու վրայ տե-  
ղացող անձրեւները յաճախ ծիածանի երանգնե-  
րով կը գունագեղեն անոնց կանաչ ու թուխ կո-  
ղերը, ու անոնց ստորուտը կը բխեցնեն ազրե-  
րակներ, որով կը կազմուի Հաթանիէի դետակը:  
Պոր լռութիւն մը կը տիրէ այդ շրջապատին մէջ,  
ուր ամէն ինչ անդորր է. օդը, ջուրը և լոյսը:  
Հազիւ թէ արձագանգը հոն կը կրկնէ սօսաւիւնը  
կաղամբարմաւնիներուն, որոնք բարձրաբերձ սա-  
րահարթերու վրայ կ'աճին և որոնց երկար ցօ-  
ղունները յարաշարժ կ'օրօրուին հովերէն: Մեզմ  
լոյս մը կը պայծառացնէ այդ լեռնաձորին խորը,  
ուր կէսօրին միայն կը շողայ արեւը. բայց ար-  
շալոյսէն սկսեալ՝ իր ճառագայթները կը զարնեն  
կատարին, որուն սարերը լերան ստուերներէն  
վերամբարձ, ոսկեգոյն ու ծիրանեղոյն կը փայ-  
լին երկնակապոյտին վրայ:

Ես կը սիրէի այդ տեղը յաճախել, անհուն  
տեսարան մը և խորունկ առանձնութիւն մը վա-  
յելելու համար: Օրին մէկը, խորճիթներուն ստո-  
րուտը նստած, աւերակները կը դիտէի, երբ ծե-  
րունի մը շրջականերէն անցաւ: Նախկին բնա-  
կիչներու սովորութեան համաձայն, փոքր լէսթ  
մը ու երկայն տափաստ մը հազած էր ան: Բո-

կոտն կը քալէր երեւոսէ գաւազանի մը կրթնած :  
Սպիտակափառ մազեր , ազնիւ ու պարզուկ դի-  
մագծութիւն մը ունէր : Յարգանքով բարեւեցի  
զայն : Բարեւս փոխադարձեց , ու պահ մը զիս  
դիտելէ յետոյ , ինծի մօտեցաւ ու հանգչեցաւ  
այն բլրակին վրայ ուր նստած էի : Այդ վստա-  
հութեան ցոյցէն մզուած , խօսք ուղղեցի անոր .  
« Հա՛յր իմ , ըսի , կրնա՞ք ինծի ըսել թէ որո՞ւ  
կը պատկանին սա խրճիթները » : Ան պատաս-  
խանեց . « Զաւա՛կս , քսան տարի առաջ , այս  
տնակներուն մէջ ու այս խոպան գետնին վրայ  
կը բնակէին երկու ընտանիքներ , որոնք եր-  
ջանկութիւնը գտած էին հոն : Անոնց պատմու-  
թիւնը սրտառուչ է . բայց Հնդկաստանի ճամ-  
բուն վրայ հաստատուած այդ կղզիին մէջ ո՞ր  
Եւրոպացին կրնայ շահագրգռուիլ քանի մը ան-  
նշան մարդոց ճակատագրով : Ո՞վ կ'ուզէ երջա-  
նիկ , այլ խեղճուկ ու անշուք կեանք մը վա-  
րել հոն : Մարդիկ կը փափաքին միայն գիտնալ  
մեծ մարդոց և թագաւորներու պատմութիւնը ,  
որ բանի մը չի ծառայեր . — Հա՛յր իմ , յարեցի ,  
ձեր խօսքերէն դիւրաւ կը հասկցուի որ մեծ  
փորձասութիւն մը ձեռք բերած էք : Եթէ ատեն  
ունիք , կ'աղաչեմ , ինծի պատմեցէ՛ք այս անա-  
պատի նախկին բնակիչներու մասին ձեր շուրջ  
դիտցածները , ու հաւատացէ՛ք , ընկերութեան նա-  
խապաշարումներով ապականած մարդն իսկ կ'ու-  
զէ որ խօսին այն երջանկութեան վրայ , զոր  
կ'ընծայեն բնութիւնը և առաքինութիւնը » : Զա-  
նազան պարագաներ յիշելու ճիգ ընող մէկուն  
պէս , ձերունին ձեռքերը պահ մը ճակտին կըր-  
թնցուց ու յետոյ սա պատմութիւնը ըրաւ .

1726ին , Նորմանտիայէն երիտասարդ մը , Պ .

տը Հաթուր անուն, Ֆրանսայի մէջ պաշտօն և  
իր ընտանիքէն օգնութիւն խնդրելէ յետոյ ի  
զուր, որոշեց այս կղզին գալ, բախտ փնտռելու  
համար: Իր հետ կը գտնուէր մանկամարդ կին  
մը զոր շատ կը սիրէր և անկէ ալ կը սիրուէր:  
Այդ կինը իր գաւառին վաղեմի ու հարուստ մէկ  
ընտանիքին կը պատկանէր. բայց երիտասարդը  
գաղտնապէս ու անօժիտ ամուսնացած էր անոր  
հետ, որովհետեւ աղջկան ծնողքը հակառակած  
էին ամուսնութեան, երիտասարդը ազնուական  
չըլլալուն համար: Հաթուր այս կղզիին մէջ Բօռ-  
կուի ձգեց իր կինը, ու ինք նաևով Մատակաս-  
քար գնաց, այն յոյսով թէ քանի մը սեւա-  
մորթներ պիտի գնէր ու շուտով պիտի վերա-  
դառնար հոս, բնակութիւն հաստատելու համար:  
Մատակասքար ցամաք ելաւ ձմրան մօտ, որ Հոկ-  
տեմբերի կիսուն կը սկսի. հոն ժամանելէն  
քիչ յետոյ մեծաւ ժանտաջերմէ, որ տարուան  
վեց ամիսը կը տեւէ ու եւրոպական աղղերուն  
արգելք կ'ըլլայ հաստատ բնակութիւն հիմ-  
նելու հոն: Իր հետ տարած գոյքերը ցիրուցան  
եղան իր մահէն յետոյ, ինչպէս կ'ըլլայ սովո-  
րաբար, երբ մարդիկ իրենց հայրենիքէն հեռու  
մեռնին: Իլ-տը-Ֆրանս մնացած իր կինը այրիա-  
ցաւ յղի վիճակի մէջ, աշխարհի վրայ իբր միակ  
ինչք ունենալով սեւամորթուհի մը, այնպիսի  
երկրի մը մէջ ուր վարկէ և յանձնարարականէ  
զուրկ էր: Մանկամարդ կինը իր սիրած միակ  
մարդուն մահէն յետոյ չուղեց ոչ մէկէն բան մը  
խնդրել, ու իր դժբախտութեան մէջ սրտասլընդ-  
ուեցաւ: Ուստի որոշեց իր գերուհիին հետ մշա-  
կել հողի փոքր տարածութիւն մը, ապրուստը  
ճարելու համար:

*Handwritten signature or initials at the top of the page.*

Գրեթէ ամայի կղզիի մը մէջ, որուն հողը  
իր տրամադրութեան տակ կը գտնուէր, ման-  
կամարդ կիներ չընտրեց ամէնէն յուռթի և վա-  
ճառաշահ վայրերը, այլ լեռնակիրճ մը, թաքուն  
ապաստան մը փնտռեց, առանձին ու անձանօթ  
ապրելու համար. ուստի քաղաքէն դէպի այդ  
ապառաժները յառաջացաւ, իբր բոյն մը հոն  
քաշուելու համար: Զգայուն և տառապող էակ-  
ները ինքնայատուկ բնազդով մը կ'ապաստանին  
ամէնէն վայրի և ամէնէն ամայի տեղերը: Կար-  
ծես ժայռերը անբախտութեան դէմ պատուար-  
ներ են, ու բնութեան անդորրութիւնը գոգցես  
կը հանդարտեցնէ հոգիին տարաբախտ վրդովում-  
ները: Բայց նախախնամութիւնը, որ մեզի օգ-  
նութեան կը հասնի այն ատեն երբ անհրաժեշտ  
բաներ կ'ուզենք, Տիկին տը Լա թուրի վերա-  
պահած էր այնպիսի բարիք մը զոր չին կրնար  
ընծայել ո՛չ հարստութիւնները և ոչ ալ մեծու-  
թիւնը. բարեկամուհի մը ունէր ան:

Մէկ տարիէ ի վեր հոն կը բնակէր Մարկրիթ  
անուն վառվռուն, բարի և զգայուն կին մը:  
Պրըթանի մէջ ծնած էր գիւղացիներու պար-  
զուկ ընտանիքէ մը, որուն սէրը կը վայելէր և  
որուն շնորհիւ երջանիկ պիտի ըլլար, եթէ երբեք  
տկարութիւնը չունենար հաւատ ընծայելու դրա-  
ցի ազնուականի մը սիրոյն, քանի որ ան խոս-  
տացած էր իր հետ ամուսնանալ: Բայց ազնուա-  
կանը Մարկրիթէն բաժնուեցաւ, իր կրթին գո-  
հացում տալէ յետոյ, ու նոյնիսկ մերժեց ապ-  
րուստը հոգալ զաւակի մը, որով յղի ձգած էր  
զայն: Ասոր վրայ, Մարկրիթ որոշեց իր ծննդա-  
վայր գիւղէն հեռանալ մշտնջենապէս, իր յան-  
ցանքը սքողելու համար գաղթավայրերու մէջ:

իր ծննդավայրէն հեռու, ուր կորսնցուցած էր  
աղքատիկ ու պարկեշտ աղջկան մը միակ օժիտը  
եղող բարի համբաւը: Փոխ առնուած քիչ մը  
դրամով Մարկրիթ գնած էր սեւամորթ մը ու  
անոր հետ կը մշակէր փոքր գետին մը:

Տիկին տը Լա Թուր, որուն հետ կը գտնուէր  
իր սեւամորթուհին, հոն գտաւ Մարկրիթը իր  
դիեցիկ մանուկին հետ: Ուրախացաւ կնոջ մը  
հանդիպելէն, զոր վիճակակից կը համարէր: Հա-  
մառօտակի յայտնեց իր երբեմնի վիճակը ու ներ-  
կային պէտքերը: Մարկրիթ կարեկից յուզու-  
մով մը մտիկ ըրաւ Տիկին տը Լա Թուրի պատ-  
մութիւնը. յետոյ ուզելով տնոր վստահութիւնը  
վայելել քան թէ համարումը, առանց բան մը  
ծածկելու, խոստովանեցաւ իր անխոհեմութեան  
յանցանքը. «Իսկապէս արժանի եմ այն վիճա-  
կին որուն ենթարկուած եմ. բայց դուք, Տի-  
կին, ի՞նչպէս դժբախտ եղած էք ձեր զգաստու-  
թեամբ»: Մարկրիթ լալազին անոր ընծայեց իր  
խրճիթը և բարեկամութիւնը: Տիկին տը Լա Թուր  
այդքան գորովալից ընդունելութենէ մը զգած-  
ուած, թեւերուն մէջ սեղմեց զայն ու ըսաւ.  
«Ա՛հ, Աստուած կ'ուզէ վերջ տալ իմ վիշտե-  
րուս, քանի որ ինձի պէս օտար կնոջ մը հան-  
դէպ այնքան բարութիւն ցոյց կու տաք որքան  
չեմ տեսած իմ ծնողքիս մօտ»:

Մարկրիթը կը հանչնայի. թէեւ հոսկէ մէկ  
ուկէս փարսախ հեռու կը լնակիմ, անտառնե-  
րուն մէջ, Մօնթաներ-Լօնկ լերան ետին, սա-  
կայն իմ դրացիս կը նկատէի զայն: Եւրոպայի  
քաղաքներուն մէջ, փողոց մը, սովորական պատ  
մը միեւնոյն ընտանիքին պատկանող անձերուն  
տարիներով արգելք կ'ըլլան իրարու մօտ հա-


ւաքուելու . բայց նոր գաղթավայրերու մէջ դրացի կը համարուին անոնք որ անտառներով և լեռներով միայն բաժնուած են իրարմէ : Այն ատեն մանաւանդ , երբ այս կղզին քիչ առուտուր կ'ընէր Հնգկաստանի հետ , պարզ դրացնութիւնը բարեկամութեան տիտղոս մը կը համարուէր , ու օտարականներուն հանդէպ ասպընջականութիւնը՝ պարտականութիւն մը և հաճոյք մը : Երբ իմացայ որ դրացուհիս ընկերուհի մը ունէր , փութացի տեսնել զայն , երկուքին ալ օգտակար ըլլալու համար : Տիկին տը Լաթուր համակրելի դէմք մը ունէր , ազնուականութեամբ և մելամաղձութեամբ տոգորուած : Տղաբերքը մօտայուտ էր : Երկու կիներուն ըսի որ իրենց զաւակներու շահուն ու մանաւանդ ուրիշ բնակչի մը հոն հաստատուելուն արդելք դառնալու համար , լաւ կ'ըլլար որ մէջերնին բաժնէին այդ հովիտին գետինը , որ քսան լծվար տարածութիւն ունէր գրեթէ : Անոնք ինծի դիմեցին այդ բաժանումը կատարելու համար : Երկու հաւասար մասերու բաժնեցի գետինը : Մէկ մասը իր մէջ կը բովանդակէր այդ շրջապատին վերին մասը , սկսեալ ամպասքօղ ապառաժին սարէն , ուրկէ կը բխի Լաթանիէ գետակին աղը , մինչև այն դերբուկ բացուածքը զոր կը տեսնէք լերան բարձունքին վրայ . Որմածերայ կը կոչուի ան , որովհետեւ թնդանօթի մը որմածերային կը նմանի : Այդ հողին յատակը շատ մը ժայռերով և հեղեղատներով լեցուած ըլլալուն , մարդ հազիւ կըրնայ քալել հոն , սակայն մեծ ծառեր կ'արտադրէ , ու լեցուն է աղբերակներով և վտակներով : Միւս բաժնին մէջ պարփակեցի ամբողջ ստորին մասը , որ Լաթանիէ գետին երկայնքը կը տա-

բաժուի մինչեւ այն բացուած քը, ուր կը գըտ-  
նուինք, ու հոնկէ գետակը կը սկսի հոսիլ երկու  
բլուրներու միջեւ, ծով թափելու համար: Հոն  
կը տեսնէք մարդագետնի սահմանածայրեր ու  
բաւական հարթ գետին մը, որ միւսէն լաւա-  
գոյն չէ բնաւ, որովհետեւ անձրեւներու եղա-  
նակին ճախճախուտ կը դառնայ, իսկ չոր եղա-  
նակին՝ կապարի պէս կը կարծրանայ. երբ մարդ  
ուզէ խրամ մը բանալ, կը ոտիպուի կացինով  
ճեղքել հողը: Այս երկու բաժանումները ընելէ  
յետոյ՝ երկու կիները հրաւիրեցի վիճակ ձգել:  
Վերի մասը վիճակեցաւ Տիկին տը Լա թուրի,  
իսկ վարի մասը՝ Մարկրիթի: Երկուքն ալ գոհ  
մնացին իրենց բաժինէն, բայց ինէ խնդրեցին  
որ բնակարաննին չբաժնեմ, «որպէսզի միշտ կա-  
րենանք իրար տեսնել, իրարու հետ խօսիլ ու  
օգնել»: Սակայն իւրաքանչիւրը պէտք է ունե-  
նար առանձին բնակարան մը: Մարկրիթի տնա-  
կը կը գտնուէր լեռնաձորին մէջտեղը, ճիշդ իր  
հողին սահմաններուն վրայ: Անոր մօտիկ, ու-  
րիշ տնակ մըն ալ շինեցի Տիկին տը Լա թուրի  
համար. այսպէս երկու բարեկամուհիները թէ՛  
իրարու դրացուհի էին և թէ՛ իրենց ընտանեկան  
կալուածին մէջ կը բնակէին: Ես ձեռքովս ցի-  
ցեր կտրեցի լեռնէն, հովանոցաձեւ արմաւենիի  
տերեւներ բերի ծովեզերքէն, այդ երկու հիւ-  
ղակները շինելու համար, ուր ոչ գուռ և ոչ ալ  
տանիք կը տեսնէք հիմա: Ափսո՛ս, շատ բան մնա-  
ցած է իբր յիշատակ: Ժամանակը, որ այնքան  
արագօրէն կը փճացնէ պետութեանց յիշատակա-  
բանները, այս անապատներուն մէջ կարծես կը  
յարգէ բարեկամութեան յիշատակարանները, որ-  
պէսզի մինչեւ կեանքիս վերջը յաւերժանան  
կսկիծներս:



Maria Lelan






Երկրորդ խրճիթին շինութիւնը հազիւ աւարտած, Տիկին տը Լա Թուր աղջիկ մը ծնաւ։ Արդէն կնքահայրը եղած էի Մարկրիթի մանչուն, որ Բօլ կը կոչուէր։ Տիկին տը Լա Թուրինէ խնդրեց որ իր աղջիկն ալ կնքեմ բարեկամուհիին հետ միասին։ Մարկրիթ այդ նորածինին անունը վիրժինի դրաւ, ըսելով. «Առաքինի ու երջանիկ պիտի ըլլայ ան։ Ես դժբախտ եղայ, առաքինութենէն շեղած ըլլալուս համար»։

643

Տիկին տը Լա Թուր տղաբերքէն ոտքի ելլելէ յետոյ, այդ երկու փոքր կալուածները սկըսան արդիւնաբեր ըլլալ, շնորհիւ այն հողածութեան զոր մերթ կ'ընծայէի, ու մանաւանդ շնորհիւ անոնց գերիներուն կատարած անխոնջ աշխատանքին։ Մարկրիթի գերին Տօմինկ անուն Եօլօֆցի սեւամորթ մըն էր, տակաւին կայտառ, հակառակ տարիքոտ ըլլալուն։ Փորձառութիւն ու բնական ողջմտութիւն ունէր։ Անխտիր կը մշակէր երկու կալուածներու այն հողերը, որոնք ամէնէն աւելի բարեբեր կը թուէին իրեն, ու տեղին համեմատ ինքնա կը ցանէր հոն։ Կորեկ կը սերմանէր միջակ հողերու մէջ, եզիպտացորեն, քիչ մը ցորեն՝ լաւ հողերու վրայ, բրինձ՝ ճախճախուտ տեղեր, իսկ ժայռերուն ստորոտը՝ մեղրադդում, դդում և վարունգ որոնք կ'ախորժին մազլցելէ։ Զոր տեղերը բաթաթէս կը տնկէր, որ շատ շաքարոտ կ'ըլլայ. բամպակենիներ՝ բարձունքներու վրայ, շաքարեղէգ՝ զօրաւոր հողերու մէջ, խահուէի տունկեր՝ բլուրներուն վրայ, մանրահատ այլ ընտիր տեսակէ գետակին երկայնքը ու խրճիթներուն շուրջը պանանենիներ, որոնք ամբողջ տարին կը պըտղաբերին ու հաճելի հոգանի՝ չ'ընծայեն։ Վեր-

Բօլ եւ վիրժինի



Չապէս ծխախոտի քանի մը տուէնկեր, իր և իր  
 ազնիւ բարեկամուհիներուն հոգերը փարատե-  
 լու համար: Գերին լեռ կ'երթար, վառելափայտ-  
 կտրելու համար, ու հոս հոն ապառաժներ կը  
 կոտրէր, հողային կալուածներուն մէջ ճամբա-  
 ները հարթելու համար: Բոլոր այս գործերը կ'ը-  
 նէր բանիմաց ժրաջանութեամբ մը, որովհետեւ  
 եռանդով կը կատարէր: Տօմինկ շատ կը սիրէր  
 Մարկրիթը, ու ոչ նուազ Տիկին տը Լա Թուրը,  
 որուն սեւամորթ գերուհիին հետ ամուսնացած  
 էր, վիրժինիին ծնունդէն յետոյ: Ան շատ կը  
 սիրէր իր Մառի անուն կինը: Այս վերջինը,  
 Մատակասքար ծնած, իր հետ բերած էր մէկ  
 քանի ճարտարարուեստ, մանաւանդ կողովաշի-  
 նութիւն և անտառներու մէջ աճող խոտերու մի-  
 ջոցաւ կերպասագործութիւն: Շատ ճարպիկ  
 մաքրասէր ու հաւատարիմ էր: Կերակուր եփե-  
 լու հոգը իր վրայ էր, քանի մը հաւ կը մեծցը-  
 նէր ու մերթ Բօռ-Լուի կ'երթար, այդ երկու  
 կալուածներուն աւելորդ արդիւնաբերութիւն-  
 ները ծախելու համար, որոնք մեծ բան մը չէին:  
 Եթէ ասոնց վրայ աւելցնէք տղոց քով մեծցուած  
 այծերը ու խոշոր շուն մը, որ գիշերը կը հսկէր  
 դուրսը, այն ատեն գաղափար մը կը կաղմէք  
 այդ երկու փոքր ազարակներու եկամուտին և  
 ծառաներու մասին:

Այդ երկու բարեկամուհիները առտուընէ  
 մինչեւ իրիկուն բամպակ կը մանէին: Այս  
 գործը կը բաւէր անոնց և անոնց ընտանիք-  
 ներու ապրուստին. բայց արտաքին հանգըս-  
 տաւէտ պայմաններէ բոլորովին զուրկ, բոպիկ  
 կը պտտէին իրենց բնակարանին մէջ, ու կօշիկ  
 կը հագնէին կիրակի օրերը միայն, առտուն կաւ

նուխ ներկայ գտնուելու համար պատարագին ,  
Բամբլըմուսի եկեղեցիին մէջ , զոր հոս կէկը տեա-  
նէք : Բօր-Լուի աւելի հեռու չէ , բայց հազուադէ-  
պօրէն քաղաք կ'երթային , վախնալով որ կ'արհա-  
մարհուին , որովհետեւ Պէնկալի հաստ ու կապոյտ  
կտաւէ զգեստներ հագած էին գերուհիներու պէս :  
Մնաց որ , ընտանեկան երջանկութիւնը նախընտ-  
րելի է քան հանրութեան համարումը : Երկու  
կիները տուն կը դառնային բերկրալից , թէեւ  
դուրսը նեղացած ըլլային քիչ մը : Մառի և  
Տօմինկ սա բարձրունքին վրայէն իրենց տիրու-  
հիները նշմարելնուն պէս , մինչեւ լերան ստո-  
րոտը վար կ'իջնէին , օգնելու համար անոնց որ  
վեր ելլեն : Տիկին տը Լա Թուր և Մարկրիթ  
իրենց գերիներուն աչքին մէջ կը կարդային այն  
ուրախութիւնը զոր անոնք կը զգային , իրենց  
տիրուհիները նորէն տեսած ըլլալնուն համար :  
Անոնք իրենց տուններուն մէջ կը գտնէին մաք-  
րութիւն ու ազատութիւն , բարիքներ զոր կը  
պարտէին իրենց աշխատանքներուն , նոյնպէս  
ծառաներ եռտնդուն ու գուրգուրալից : Երկու  
կիները , որոնք միեւնոյն պէտքերը ունէին ու  
գրեթէ միեւնոյն նեղութիւնները կրած էին ,  
բարեկամուհի , ընկերուհի և քոյր քաղցր անուն-  
ները կուտային իրարու , մէկ կամք , մէկ շահ  
և մէկ սեղան ունէին անոնք : Ամէն ինչ հասա-  
րակաց էր անոնց միջեւ : Եթէ երբեք հին հը-  
րայրքներ , աւելի ուժգին քան բարեկամութեան  
հրայրքը , արթննային անոնց հոգիներուն մէջ ,  
մաքուր կրօնք մը , անբիծ բարքերու աջակցու-  
թեամբ , զանոնք կը մղէր դէպի ուրիշ կեանք  
մը , ինչպէս բոցը որ դէպի երկինք կը սլանայ ,  
երբ այլեւս ճարակ չի գտներ երկրի վրայ :

Բնութեան կարիքներն ալ կ'աւելնային իրենց ընկերային երջանկութեան վրայ: Իրենց փոխադարձ բարեկամութիւնը կը կրկնապատկըւէր ի տես իրենց զաւակներուն, որոնք դժբախտ սիրոյ մը արգասիքներն էին: Անոնք հաճոյք կը զգային, միեւնոյն լողարանին մէջ լուալով աւ միեւնոյն օրօրոցին մէջ պառկեցնելով իրենց մանուկները: Յաճախ փոխնիփոխ կաթ կուտային:

— Բարեկամուհի՛ս, կ'ըսէր Տիկին տը Լաթուր, մենէ իւրաքանչիւրը երկու զաւակ պիտի ունենայ, մեր զաւակներէն իւրաքանչիւրը՝ երկու մայր:

Երբ մորիկը կոտորէ թափէ երկու համասեռ ծառերու ոստերը, աւելի քաղցր պտուղ կուտան մնացած երկու բողբոջները, եթէ մօտակայ բունին վրայ պատուաստուի մայրական բունէն անջատուած իւրաքանչիւր բողբոջ. նմանապէս՝ այդ երկու մանուկները, իրենց բոլոր ազգականներէն զրկուած, մանչու և աղջկան, եղբոր ու քրոջ ներշնչած զգացումներէն աւելի խանդակաթ զգացումներով կը տոգորուէին, երբ փոփոխակի կաթ կը ծծէին իրենց ծնունդ տուող երկու քարեկամուհիներու ստինքներէն: Երկու մայրերը իրենց զաւակներուն ամուսնութեան վրայ կը խօսէին արդէն անոնց օրօրոցներուն առջեւ, ու ամուսնական երանութեան այս հեռանկարը, որով կը սփոփուէին իրենց վիշտերը, յաճախ արցունք թափել կուտար անոնց. մայրերէն մէկը կը յիշէր թէ ինք դժբախտ եղած էր, ամուսնութիւնը զանց ըրած ըլլալուն, իսկ միւսը ամուսնական օրէնքին ենթարկուելուն համար. մէկը իր ընկերային վի-

ճակէն վեր բարձրացած, իսկ միւսն ալ վար  
իջած ըլլալուն համար. բայց անոնք կը մխի-  
թարուէին, խորհելով որ օրին մէկը իրենց զա-  
ւակները աւելի երջանիկ՝ միաժամանակ պիտի  
վայելէին սիրոյ հաճոյքները և հաւասարութեան  
երջանկութիւնը, եւրոպական նախապաշարու-  
մաներէ զերծ:

Արդարեւ, այդ երկու մանուկները անզու-  
գական սէր մը կը տածէին իրարու հանդէպ:  
Երբ Բօլ սկսէր լալ, Վիրժինին ցոյց կուտային  
անոր. Բօլ իսկոյն կը ժպտէր ու կը հանդար-  
տէր: Բօլի արձակած ճիշերէն կը հասկնային թէ  
Վիրժինի կը տառապէր. բայց այդ զմայլելի ազ-  
ջիկը իսկոյն կը պարտկէր իր ցաւը, որպէսզի  
Բօլ ցաւ չզգար:

Ամէն անգամ հոն երթալուս, տեղական սո-  
վորութեան մը համաձայն՝ բոլորովին մերկ կը  
տեսնէի երկու տղաքը, որոնք հազիւ կրնային  
տոտիկ տոտիկ քալել, ձեռք ձեռքի տուած կամ  
իրարու թեւ բռնած, Երկուորեակ համաստեղու-  
թեան պատկերին պէս: Գիշերն իսկ իրարմէ չէ-  
ին բաժնուեր, յաճախ միեւնոյն օրօրոցին մէջ  
կը պառկէին, երես երեսի, կուրծք կուրծքի,  
ու ձեռքերով իրարու վիզին փարած, գիրկնդ-  
խառն կը քնանային:

Երբ երկու տղաքը լեզու ելան, առաջին ան-  
գամ եղբայր և քոյր բառերը սորվեցան ու այդ-  
պէս կոչեցին զիրար: Մանկութիւնը աւելի քըն-  
քուչ գգուանքներ կը շռայլէ, բայց աւելի քաղցր  
անուաններ չի գիտեր: Կրթութիւնը կրկնապատ-  
կեց անոնց բարեկամութիւնը, փոխադարձաբար  
իրարու օգնելու մղեց զանոնք: Շատ չանցած,  
Վերժինի իրաւասութեան մէջ կը գտնուէր առ-

տնին տնտեսութեան վերաբերեալ ամէն բան ,  
մաքրութիւն , պարզուկ ճաշի մը պատրաստու-  
թիւն . իր աշխատանքներուն միշտ կը յաջորդէին  
իր եղբօր գովեստները ու համբոյրները : Իսկ  
Բօլ միշտ գործի վրայ , Տօմինկի հետ պարտէզը  
կը փորէր , կամ ձեռքը փոքր կացին մը՝ անոր  
կը հետեւէր անտառներուն մէջ . եթէ երբեք իր  
պտոյտներուն ատեն աչքին զարնէին աղուոր ծա-  
ղիկ մը , ընտիր պտուղ մը , կամ թռչունի բոյն  
մը , իսկոյն կը մագլցէր ամենաբարձր ծառի մը  
կատարը , քրոջը տանելու համար :

Երկու տղաքներէն մէկուն հանդիպող մը  
վստահ էր թէ միւսը հեռու չէր գտնուեր : Օրին  
մէկը , այդ լեռնէն իջած պահուս , պարտէզին  
ծայրը տեսայ վիրժինին , որ դէպի տուն կը վա-  
զէր , գլուխը միջնազգեստով ծածկած , զոր ետե-  
ւէն վեր առած էր , յանկարծական անձրեւէն պա-  
տսպարուելու համար : Հեռուէն կարծեցի որ ա-  
ռանձին էր , եւ երբ յառաջացայ , անոր մօտենա-  
լու համար , տեսայ որ Բօլի թեւէն բռնած էր ,  
գրեթէ ամբողջովին զայն պարուրած միեւնոյն  
ծածկոյթին տակ , երկուքն ալ ծիծղուն , իրենց  
հնարած հովանոցին տակ պատսպարուած ըլլալ-  
նուն : Այդ երկու սիրուն գլուխները , ուռուցիկ  
միջնազգեստին տակ ամփոփուած , ինծի կը յի-  
շեցնէին Լէտայի զաւակները , միեւնոյն խեցիին  
մէջ պարփակուած :

Երկու տղաք ամէն ջանք կ'ընէին իրարու  
հաճոյ թուելու և օգնելու համար : Գաղթածին-  
ներու պէս տգէտ , կարդալ-գրել չէին գիտեր :  
Անոնք բնաւ չէին մտահոգուեր հեռաւոր ժամա-  
նակներու մէջ ու իրենցմէ հեռու պատահած դէպ-  
քերով . սա լեռնէն անդին չէր անցներ իրենց

հետաքրքրութիւնը: Կը կարծէին որ աշխարհի  
ծայրը կը գտնուէր հոն ուր իրենց կղզին կը  
վերջանար, ու կ'երեւակայէին որ հաճելի բան  
մը չկար հոն ուր իրենք չէին գտնուեր: Երկու  
տղոց փոխադարձ սէրը ու իրենց մայրերուն գո-  
րովը միայն կը գրաւէին իրենց հոգիները: Սնո-  
տի գիտութիւններ երբեք արցունք թափել տուած  
չէին անոնց. մռայլ բարոյականի մը դասերը  
տաղտուկ չէին պատճառած անոնց: Բնաւ չէին գի-  
տեր թէ ինչո՛ւ պէտք չէ գողնալ, քանի որ ամէն  
բան հասարակաց էր իրենց միջեւ. ժուժկալ էին  
իրենց տրամադրութեան տակ պարզ կերակուր-  
ներ ունենալնուն համար. ստախօս ալ չէին,  
քանի որ ծածուկ պահելիք ճշմարտութիւն մը  
չկար: Բնաւ չէին ահաբեկած տղաքը, ըսելով թէ  
Աստուած սոսկալի պատիժներ սահմանած է ա-  
պերախտ տղոց. անոնց մէջ որդիական բարեկա-  
մութիւնը ծնունդ առած էր մայրական բարե-  
կամութենէն: Կրօնքը սիրելի ընծայող բաները  
միայն սորվեցուցած էին անոնց. երկարապա-  
տում աղօթքներ չէին ըներ եկեղեցիին մէջ,  
բայց ո՛ւր որ ալ գտնուէին՝ տունը, դաշտերուն  
ու անտառներուն մէջ, դէպի երկինք կը բարձ-  
րացնէին իրենց անմեղ ձեռքերը, ծնողքներուն  
հանդէպ սիրազեղ սրտով մը:

Այսպէս անցաւ անոնց առաջին մանկութիւ-  
նը, գեղեցկագոյն օր մը աւետող գեղածիծաղ ար-  
շալոյսի մը պէս: Արդէն իսկ իրենց մայրերուն  
հետ կը կատարէին առտնին գործերը: Երբ հա-  
ւախօսը իմաց տար այգին վերադարձը, Վիր-  
ժինի անկողնէն կ'ելլէր ու կ'երթար մօտակայ  
աղբիւրէն ջուր կ'առնէր, և տուն կը վերադառ-  
նար, նախաճաշը պատրաստելու համար: Քիչ յե-



տոյ, երբ արեւը կ'ոսկեզօծէր շրջապատի սարե-  
րը, Մարկրիթ և իր զաւակը Տիկին տը Հա թուրի  
քնակարանը կ'երթային. հոն կը սկսէին միա-  
քերան աղօթել ու ապա կը ճաշէին. յաճախ դրան  
առջեւ կը նախաճաշէին, խոտին վրայ նստած,  
պանանենիներու հովանիին տակ, որոնք պատ-  
րաստ կերակուրներ կ'ընծայէին իրենց հիւթեղ  
պտուղներով. անոնց լայն, երկար ու ողորկ  
աերեւները իբր սեղանի ծածկոյթ կը ծառայէին:  
Առողջ ու առատ սնունդ մը արագօրէն կը զար-  
գացնէր այդ երկու տղոց մարմինները, ու հեշտ  
կրթութիւն մը անոնց դէմքերուն վրայ ի յայտ  
կը բերէր հոգեկան անբծութիւնը և ինքնագո-  
հացումը: Վիրժինի տասերկու տարու էր, բայց  
իր մէջքը ձեւաւորուած էր կիսովին, երկար ու  
խարտեաչ մազեր կը հովանաւորէին գլուխը. կա-  
պուտակ աչքերը ու բուստի պէս շրթունքները  
գեղափայլ կը շողային իր թարմունակ դէմքին  
վրայ. Վիրժինի աչքերը ու շրթունքը միաժա-  
մանակ կը ժպտէին խօսած պահուն. բայց երբ  
լուռ մնար, աչքերը քնական շեղումով մը դէպի  
երկինք կը բարձրանային ու շատ զգայնիկ ար-  
տայայտութիւն մը եւ նոյնիսկ թեթեւ մելա-  
մաղձութիւն մը կ'ընծայէին անոնց: Իսկ Բօլ,  
որուն մէջ չափահաս մարդու մը յատկանիշը կը  
զարգանար, պատանեկան շնորհներով օժտուած  
էր. Վիրժինիէն աւելի բարձրահասակ, թուխ  
մոյնք մը և արծուեռունզն քիթ մը ունէր. իր  
սեւաթոյր աչքերը քիչ մը աւելի խրոխտ ար-  
տայայտութիւն մը պիտի ունենային, եթէ եր-  
բեք անոնց շուրջը վրձիններու պէս ճառագայ-  
թող թարթիչները ամենամեծ քաղցրութիւն մը  
զընծայէին անոնց: Բօլ միշտ շարժումի մէջ,





քոյրը երեւան գալուէն պէս կը հանդարտէր ու  
կ'երթար անոր քով կը նստէր. յաճախ անխօս  
կը ճաշէին: Իրենց լռութեան, միամիտ կեց-  
ուածքին ու մերկ ոտքերու գեղեցկութեան մէջ  
օպիտակ մարմարէ վաղնջական խմբանկար մը  
կը ձեւացնէին գոգցես, Նիօպէի դաւակներէ ո-  
մանց պատկերը ընծայելով: Բայց իրենց նայ-  
ուածքներով, որոնք զիրար կը փնտռէին, իրենց  
ժպիտներով որոնք կը փոխադարձուէին աւելի  
քաղցր ժպիտներով, կարծես երկնքի զուար-  
թուններ և երանաւէտ հոգիներ էին անոնք,  
ի բնէ զիրար սիրելու հակամէտ, ու պէտք չու-  
նէին իրենց զգացումները արտայայտելու մտա-  
ծումներով ու բարեկամութիւնը՝ խօսքերով:

Սակայն Տիկին տը Լա Թուր տեսնելով որ  
իր աղջիկը այնքան շնորհներով կը զարգանար,  
իր մտահոգութիւնն ու գուրգուրանքը կ'աւել-  
նար: Երբեմն ինծի կ'ըսէր. «Եթէ ես մեռնիմ,  
ի՞նչ պիտի ընէ ընչազուրկ Վիրժինի»:

Տիկին տը Լա Թուր Ծրանսայի մէջ ունէր  
տոհմիկ, հարուստ, պառաւ ու բարեպաշտ հօրա-  
քոյր մը, որ խստօրէն մերժած էր օգնել իրեն,  
Պ. տը Լա Թուրի հետ ամուսնացած ատեն, ու  
Տիկին տը Լա Թուր ալ միտքը դրած էր բնաւ  
հօրաքրոջը չգիմել, ո՛րքան ալ մեծ կարօտու-  
թեան մատնուէր: Բայց մայր ըլլալէ յետոյ՝ մեր-  
ժումի ամօթը կրելէ չքաշուեցաւ: Ուստի գրով  
մը իր հօրաքրոջ իմացուց՝ ամուսնին անակնկալ  
մահը, աղջկան ծնունդը և իր չքաւոր վիճակը,  
հայրենիքէն հեռու, աննեցուկ ու զաւկով մը  
բեռնաւորուած: Սակայն Տիկին տը Լա Թուր  
ո եւ է պատասխան չստացաւ: Ինք որ բարձր  
նկարագիր մը ունէր, այլեւս չվախցաւ ո՛չ նուա-

տացումէ և ոչ ալ կշտամբանքներէն իր ազգա-  
կանուհիին, որ երբեք չէր ներած իրեն, անտոհմ  
այլ առաքինի մարդու մը հետ ամուսնացած ըլ-  
լալուն համար: Ուստի Տիկին տը Լա Թուր ամէն  
առթիւ կը գրէր հօրաքրոջ, Վիրժինիի վրայ  
անոր գութը շարժելու համար: Բայց շատ մը  
տարիներ անցան, ու հօրաքրոջմէն ո եւ է լուր  
չառաւ ան:

Վերջապէս 1738ին, Պ. տը Լա Պուրտօնէ  
այդ կղզին հասնելէն երեք տարի յետոյ, Տիկին  
տը Լա Թուր իմացաւ որ կառավարիչը իրեն  
պիտի յանձնէր նամակ մը՝ հօրաքրոջը կողմէ  
գրուած: Բօռ-Լուի փութաց ան, առանց փոյթ  
ընելու թէ գէշ հագուած էր, որովհետեւ մայրա-  
կան բերկրանքը կը յաղթէր մարդկային նկա-  
տումներու: Արդարեւ, Պ. տը Լա Պուրտօնէ անոր  
յանձնեց հօրաքրոջ մէկ նամակը: Ան իր եղբօր  
ազգկան կը յայտնէր թէ բախտախնդիրի մը, ցո-  
փակեացի մը հետ ամուսնացած ըլլալուն համար  
այդ վիճակին մատնուած էր, թէ կիրքերուն կը  
յաջորդեն պատիժները, թէ ամուսնին վաղահաս  
մահը Աստուծոյ մէկ արդար պատիժն էր, թէ  
լաւ ըրած էր այդ կղզին քաշուելով, փոխանակ  
իր ընտանիքը անպատուելու Ֆրանսայի մէջ, թէ  
լաւ երկրի մը մէջ կը գտնուէր, քանի որ հոն  
ամէն ոք կը հարստանար, բացի ծոյլերէն: Այս-  
պէս կշտամբելէ յետոյ Տիկին տը Լա Թուրը, նա-  
մակին վերջաւորութեան մէջ իր անձին գովքը  
կը հիւսէր: Ան կ'ըսէր թէ միշտ մերժած էր կար-  
գուիլ, ամուսնութեան յաճախ ազիտալի եղող  
հետեւանքներէն խուսափելու համար: Ծշմար-  
տութիւնը սա էր որ իբր փառասէր կին, ան ու-  
զած էր ազնուականի մը հետ միայն ամուսնա-

նալ. թէեւ շատ հարուստ էր, ու արքունիքին մէջ ալ հարստութեան միայն կարեւորութիւն կ'ընծայեն, ստկայն ոչ ոք փափաքած էր ամուսնանալ այդքան տգեղ եւ քարսիրտ աղջկան մը հետ:

Յետգրութեան մէջ կ'աւելցնէր թէ լաւ խորհելէ յետոյ՝ Տիկին տը Լա թուրը ջերմապէս յանձնարարած էր Պ. տը Լա Պուրտօնէի: Ստուգիւ, այդպէս ըրած էր, բայց այսօր շատ հասարակ դարձած սովորութեան մը համաձայն, պաշտպան մը աւելի վախ կ'ազդէ քան թէ յայտնի թշնամի մը. իր եղբօրաղջկան հանդէպ ցոյց տուած խստասրտութիւնը արդարացնելու համար կառավարչին մօտ, կարեկցութիւն կեղծելով կը զրպարտէր զայն:

Տիկին տը Լա թուր շատ ցուրտ ընդունելութիւն մը գտաւ Պ. տը Լա Պուրտօնէի կողմէ որ կանխակալ կարծիքներ ունէր իր մասին, մինչ ո եւ է անծանօթ մարդ կարեկցութեամբ ու ակնածանքով սլիտի դիտէր մանկամարդ կիներ: Կառավարիչը միավանկ խիստ բառերով պատասխանեց, երբ տիկինը իր և իր աղջկան վիճակը պարզեց.

— Տեսնե՛նք... խորհինք... թո՛ղ քիչ մը անցնի...: Շատ թշուառներ կան...: Ի՞նչ հարկ կայ անհանգիստ ընելու պատուական հօրաքոյր մը...: Յանցանքը ձերն է:

Տիկին տը Լա թուր բնակարան դարձաւ վշտակոծ ու դառնակսկիծ սրտով: Տուն հասնելուն պէս՝ սեղանին վրայ նետեց հօրաքրոջ նամակը, ու իր բարեկամուհիին ըսաւ. «Ահա՛ արդիւնքը տասնըմէկ տարուան համբերութեան»: Եւ որովհետեւ Տիկին տը Լա թուր միայն գրել

կարգալ գիտէր այդ բնկերակցութեան մէջ, նա-  
մակը առաւ ու կարգաց հոն հաւաքուած ամբողջ  
ընտանիքին առջեւ: Հազիւ թէ ընթերցումը  
աւարտած, Մարկրիթ ուժգին շեշտով մը ըսաւ.

— Միթէ կարօ՞տ ենք քու ազգականնե-  
րուդ: Աստուած մեզ լքած է: Ան միայն մեր  
հայրն է: Մինչեւ այսօր երջանիկ չապրեցա՞նք:  
Ինչո՞ւ կը տրտմիս: Որովհետեւ քաջութիւն  
չունիս:

Ու տեսնելով որ Տիկին տը Լա թուր կ'ար-  
տասուէր, Մարկրիթ անոր վիզը նետուեցաւ և  
գրկին մէջ սեղմելով գայն, գոչեց. «Միրելի՛ բա-  
րեկամուհիս, սիրելի՛ բարեկամուհիս»: Բայց  
ձայնը կը խեղդուէր հեկեկանքներու մէջ: Այս  
տեսարանին հանդէպ Վիրժինի ալ փղձկած, մօրը  
և Մարկրիթի ձեռքերը փոփոխակի կը սեղմէր  
բերնին ու սրտին վրայ, իսկ Բօլ բարկացայտ  
աչքերով կ'աղաղակէր, բռունցքները կը սեղ-  
մէր, ոտքերը գետին կը զարնէր, առանց գիտ-  
նայու թէ որո՞ւ օձիքէն բռնէր: Այս աղմուկին  
վրայ Տօմինկ և Մառի հոն փութացին, ու խըր-  
ճիթին մէջ ցաւակոծ ողբեր միայն լսելի եղան.  
«Ա՛հ, տիկին... իմ բարի տիրուհիս... մայրս...  
մի՛ լաք»: Բարեկամութեան այս խանդաղատա-  
լից ցոյցերը փարատեցին Տիկին տը Լա թուրի  
վիշտը: Բօլը և Վիրժինին թեւերուն մէջ առաւ  
ու գոհունակ երևւոյթով մը ըսաւ անոնց.

— Չաւակնե՛րս, դուք էք պատճառը իմ  
վշտիս. ինչպէս նաեւ ամբողջ խնդութեանս: Օ՛հ  
իմ սիրելի որդեակներս, դժբախտութիւնը հե-  
ռուէն միայն հասաւ ինձի, իսկ երջանկութիւնը  
կը գտնուի իմ շուրջս:

Բօլ և Վիրժինի չհասկցան այդ խօսքերուն







իմաստը, բայց երբ տեսան որ Տիկին տը Լա  
թուր հանդարտած էր, ժպտեցան ու սկսան գրգ-  
ուել զայն:

Այսպէս շարունակուեցաւ անոնց երջանկու-  
թիւնը, ու վերոյիշեալ դէպքը անցաւ ամբան  
մէջ պատահած փոթորիկի մը պէս:

Այդ տղոց ազնիւ բնաւորութիւնը ի յայտ  
կուգար օրէ օր: Կիրակի օր մը, արշալոյսին,  
մինչ անոնց մայրերը Բամբլըմուսի եկեղեցին  
գացած էին առաջին պատարագին ներկայ դըտ-  
նուելու համար, անտառաքնակ սեւամորթուհի  
մը երեւան եկաւ անոնց բնակարանը շրջապա-  
տող պանանենիներու ներքեւ: Կմախքի մը պէս  
մտաթափ, իրր զգեստ՝ մէջքին շուրջը կը կրէր  
պատառատուն գոգնոց մը: Վիրժինիին ոտքերը  
իյնալով ըսաւ, երբ ան կը պատրաստէր ընտա-  
նիքին նախաճաշը:

— Դեռաւոր օրինորդ, մեղքցէ՛ք փախստա-  
կան խեղճ գերուհի մը. մէկ ամիսէ ի վեր կը  
թափառիմ այս լեռներուն վրայ, անօթութենէ  
կիսամեռ, յաճախ որսորդներէ և անոնց շուներ-  
րէն հալածական: Տիրոջմէս խոյս կուտամ, որ  
Ռիվիէր-Նուարի հարուստ բնակիչներէն մէկն է.  
Կը տեսնէք թէ ի՞նչ վիճակի մատնած է զիս:

Ու գերուհին անոր ցոյց տուաւ իր մարմի-  
նը, զոր խորունկ սպիներով տկօսուած էր խա-  
րաղանի հարուածներէն: Յետոյ յարեց.

— Կ'ուզէի ջուրը նետել ինքզինքս ու խեղ-  
դուիլ. բայց գիտնալով որ հոս կը բնակիք, մը-  
տովի ըսի. «Պէտք չէ տակաւին մեռնիլ, քանի  
որ բարեգութ սպիտակամորթներ կը գտնուին  
հոս»:

Վիրժինի չափազանց յուզուած, սա պատաս-  
խանը տուաւ.

բայց երբ նկատեց Վիրժինի վայելուչ հասակը, գեղեցիկ ու խարտեաշ գլուխը կապոյտ քօղին տակ, և լսեց քաղցրածոր ձայնը, որ ամբողջ մարմնին պէս կը դողար իրմէ ներում խնդրած պահուն, ծխափողը բերնէն հանեց, ու իր խաշարը վեր բռնելով սոսկալի երդում մը ըրաւ ու ըսաւ թէ իր գերուհիին պիտի ներէր ո՛չ թէ Աստուծոյ, այլ Վիրժինի սիրոյն համար: Այն ատեն իսկոյն Վիրժինի նշանացի հասկցուց գերուհիին որ դէպի իր տէրը յառաջանայ: Յետոյ խոյս տուաւ ու Բօլ ալ ետեւէն վաղեց:

Բօլ և Վիրժինի միասին բարձրացան սարին հանդիպակաց կողմէն, ուրկէ վար իջած էին. կատարը հասնելնուն պէս՝ ծառի մը տակ նստան յոգնաբեկ, անօթի ու ծարաւ: Արեւածագէն ի վեր հինգ փարսախ ճամբայ կտրած էին անսուաղ. Բօլ ըսաւ Վիրժինի.

— Քուրի՛կ, կէս օրը անցաւ. անօթի ծարաւ ես, ու մենք հոս ուտելիք չպիտի գտնենք բնաւ. ուստի սարէն վար իջնենք, ու երթանք գերուհիին տիրոջմէն ուտելիք ուզենք:

— Օ՛հ, ո՛չ, բարեկամս, յարեց Վիրժինի, այդ մարդը սոսկում ազդեց ինծի: Միտքդ բե՛ր թէ մայրիկը ի՛նչ կ'ըսէ երբեմն. ո՛վ որ չարին հացը ուտէ, մանրախիճով կը լեցուի բերանը:

— Ի՞նչ պիտի ընենք ուրեմն, ըսաւ Բօլ. այս ժայռերը անշահ պտուղներ կուտան. մէկ հատ հնդկարմաւ կամ մէկ կիտրոն չկայ հոս, զովանալու համար:

— Աստուած ողորմի՛ մեզի, յարեց Վիրժինի. ան կը լսէ թռչնիկներուն ձայնը, որոնք սնունդ կը խնդրեն իրմէ:

Հազիւ թէ այս խօսքերը ըսած էր Վիրժինի.

բայց երբ նկատեց Վիրժինի վայելուչ հասակը, գեղեցիկ ու խարտեաչ գլուխը կապոյտ քողին տակ, և լսեց քաղցրածոր ձայնը, որ ամբողջ մարմնին պէս կը դողար իրմէ ներում խնդրած պահուն, ծխափողը բերնէն հանեց, ու իր խաշարը վեր բռնելով սոսկալի երդում մը ըրաւ ու ըսաւ թէ իր գերուհիին պիտի ներէր ո՛չ թէ Աստուծոյ, այլ Վիրժինի սիրոյն համար: Այն ատեն իսկոյն Վիրժինի նշանացի հասկցուց գերուհիին որ դէպի իր տէրը յառաջանայ: Յետոյ խոյս տուաւ ու Բօլ ալ ետեւէն վաղեց:

Բօլ և Վիրժինի միասին բարձրացան սարին հանդիպակաց կողմէն, ուրկէ վար իջած էին. կատարը հասնելուն պէս՝ ծառի մը տակ նստան յոգնաբեկ, անօթի ու ծարաւ: Արեւածագէն ի վեր հինգ փարսախ ճամբայ կտրած էին անսուաղ. Բօլ ըսաւ Վիրժինի.

— Քուրի՛կ, կէս օրը անցաւ. անօթի ծարաւ ես, ու մենք հոս ուտելիք չպիտի գտնենք բնաւ. ուստի սարէն վար իջնենք, ու երթանք գերուհիին տիրոջմէն ուտելիք ուղենք:

— Օ՛հ, ո՛չ, բարեկամս, յարեց Վիրժինի, այդ մարդը սոսկում ազգեց ինծի: Միտքդ բե՛ր թէ մայրիկը ի՛նչ կ'ըսէ երբեմն. ո՛վ որ չարին հացը ուտէ, մանրախիճով կը լեցուի բերանը:


— Ի՞նչ պիտի ընենք ուրեմն, ըսաւ Բօլ. այս ժայռերը անշահ պտուղներ կուտան. մէկ հատ հնդկարմաւ կամ մէկ կիտրոն չկայ հոս, զովանալու համար:

— Աստուած ողորմի՛ մեզի, յարեց Վիրժինի. ան կը լսէ թռչնիկներուն ձայնը, որոնք սնունդ կը խնդրեն իրմէ:

Հազիւ թէ այս խօսքերը ըսած էր Վիրժինի:

նի, երբ երկուքը լսեցին աղմուկը աղբերակի  
մը, որ մօտակայ ժայռէ մը վար կը թափէր։  
Հոն վազեցին, ու բիւրեղէ աւելի վճիտ ջուրովը  
անցընելէ յետոյ իրենց պապակը, անոր եզերք-  
ներուն վրայ աճող ջրկոտեմէն քաղեցին և կե-  
րան։ Երբ ասդին անդին կը նայէին աւելի պինդ  
սնունդ մը գտնելու համար, Վիրժինի անտառին  
ծառերուն միջեւ նշմարեց մատղաշ կաղամբար-  
մաւենի մը։ Այդ ծառին գագաթը, սաղարթնե-  
րուն միջեւ գտնուող կաղամբը շատ լաւ ուտե-  
լիք մըն է. իր բունը սրունքէն աւելի մեծ չէր  
բայց վաթսուն ոտք բարձրութիւն ունէր։ Ար-  
դարեւ, այդ ծառին փայտը մանրաթելերու խուր-  
ձէ մը կազմուած է. բայց իր ծուծը այնքան  
կարծր էր որ կացիններու իսկ կը տոկար, մինչ-  
դեռ Բօլ դանակ մը իսկ չունէր։ Ան մտաբերեց  
կրակի տալ կաղամբարմաւենիին ստորին մասը.  
ուրիշ տաղտուկ մըն ալ սա էր թէ հրահան չու-  
նէր. մնաց որ, այդ ապառաժուտ կղզիին մէջ չեմ  
կարծեր որ կարելի ըլլար գտնել կայծքար մը։  
Պէտքը հնարամիտ կը դարձնէ մարդը. ամէնէն  
թշուառ մարդիկը յաճախ օգտակարագոյն գիւ-  
տերը ըրած են։ Բօլ որոշեց կրակ վառել սեւա-  
մորթերու պէս։ Բարի մը անկիւնովը փոքր ծակ  
մը բացաւ ծառի մը խիստ չոր ճիւղին վրայ, ու  
ոտքերուն տակ առաւ զայն. յետոյ այդ քառին  
չեղբովը ծակեց նոյնպէս չոր ոստի մը կտորը,  
որուն փայտը տարբեր տեսակէ էր։ Ապա այդ  
սրածայր փայտին կտորը դրաւ իր ոտքերուն  
տակ գտնուող ճիւղի փոքր ծակին մէջ, ու արա-  
գօրէն ձեռքերուն միջեւ շրջելով զայն, ինչպէս,  
կը դարձնեն աղօրեակը, փրփրեցնելու համար  
շօքօլան, պահ մը ետքը տեսաւ որ ծուխ ու կայծ





կ'ելլէր շփման կէտէն : Բօլ հաւաքեց չոր խոտեր և ծառերու ուրիշ ճիւղեր : Կրակի տուաւ բունը կաղամբարմաւենիին , որ քիչ յետոյ վարինկաւ մեծ շառաչումով : Կրակին շնորհիւ , կաղամբին վրայէն հանեց փայտեղէն երկայն , խայթող և կարծր տերեւները , որով կաղամբած էր անոր պատեանը : Բօլ և Վիրժինի միասին կերան այդ հում կաղամբին մէկ մասը ու կրակին տակ եփած միւս մասը , երկուքն ալ հաւասարապէս համեղ գտնելով : Այս ժուժկալ ճաշը ըրին բերկրալից , մտաբերելով այն բարի գործը զոր կատարած էին առտուն , բայց այդ ուրախութիւնը վրդովուած էր այն մտահոգութեամբ , որուն պիտի մատնուէին իրենց մայրերը , տունէն երկար ատեն իրենց տղաքը բացակայած ըլլայնուն համար : Վիրժինի յաճախ կ'անդրադառնար այդ բանին : Սակայն , Բօլ , որ կազդուրուած կը զգար ինքզինքը , հաւաստեց թէ քիչ յետոյ պիտի հանդարտեցնէին իրենց ծնողքներուն սիրտը :

Ճաշէն յետոյ անճրկեցան , որովհետեւ ուղեցոյց չունէին ինքզինքնին տուն առաջնորդելու համար : Բօլ , որ բնաւ չէր յուսահատեր , Վիրժինին ըսաւ .

— Կէս օրին ատենները , մեր հիւղակին վրայ կը հասնի արեւը . ուստի այս առտուն պէս՝ պէտք է անցնինք երկայն սարերէն սալերան , զոր կը տեսնես հոն Վ'ն , յառաջանանք , բարեկամուհիս :

Եռաստին(\*) լեռն էր ան , ու այսպէս կը կոչ-

(\*) Շատ մը լեռներ կան , որոնք ստիճի պէս կլոր սարեր ունին , ու այդ անունով կը յորջորջուին ամէն լեզուներու մէջ : Ստուգիւ , նշմարիս ստիճներ են , Բանի որ հոնկէ կը հո-



ուէր, ստինքի ձեւ ունենալուն համար :  
 Ուստի Բօլ և Վիրժինի սարէն իջան Ռիվիէր-  
 Նուար գետին հիւսիսակողմէն, ու մէկ ժամուան  
 գնացքէ մը յետոյ հասան լայն գետի մը եզերքը,  
 որ իրենց ճամբան կը գոցէր : Կղզիին այդ մէկ  
 մասը, անտառներով ծածկուած, այսօր իսկ շատ  
 քիչ ճանչցուած է, ու իր գետերը և լեռները  
 անուն չունին տակաւին : Այն գետակը, որուն  
 եզերքը հասած էին, փրփրացայտ կը հոսէր սպա-  
 ռաժներու շոգի մը մէջէն : Զուրին ձայնը սոս-  
 կում պատճառեց Վիրժինի, ու ան չհամարձա-  
 կեցաւ ոտքերը ջուրին մէջ դնել, հունէն անց-  
 նելու համար : Այն ատեն Բօլ կռնակը առաւ  
 Վիրժինին, ու այսպէս բռնաւորուած, գետին  
 լպրծուն ժայռերուն վրայէն անցաւ, հակառակ  
 ջուրին հանած ժխորին :

— Մի՛ վախնար, կ'ըսէր Բօլ, ինքզինքս  
 շատ զօրաւոր կը զգամ, երբ քովս ըլլաս : Եթէ  
 երբեք Ռիվիէր-Նուարի բնակիչը չուզէր ներում  
 չնորհել իր գերուհիին, ես անոր հետ պիտի  
 մենամարտէի :

— Ի՛նչ, այդ մեծղի ու չար մարդուն հետ  
 պիտի՞ կռուէիր, ըսաւ Վիրժինի : Ի՛նչ վտանգի  
 մատներ եմ քեզ : Տէր Աստուած, ո՛րքան դժուար  
 է բարիք ընել : չարիք գործելէն աւելի դիւրին  
 բան չկայ :

Բօլ գետեզրը հասնելէն յետոյ ուղեց իր ճամ-

---

սին շատ մը գետերու գետակներ, հողը բեղմնաւորելով :  
 Անոնք ակերն են հողը ոռոգող գլխաւոր գետե-  
 րու եւ միջոց ջուր կը հայթայթեն, ամպեր հաւաքելով  
 սարին շուրջը, որ կեդրոնը կը ցցուի սիւնի մը պէս : Բնու-  
 թեան այս նախաստեղծութիւնները մասնաճաճած են մեր նախորդ  
 ուսումնասիրութեանց մէջ :

բան շարունակել, քոյրը շալկած, ու կը խորհէր  
այսպէս բարձրանալ Եռաստին լեռնէն, զոր իր  
առջեւ կը տեսնէր, կէս փարսախ հեռուն, բայց  
ընդհուպ ուժասպառ եղած, ստիպուեցաւ վար  
դնել Վիրժինին ու անոր քով հանգչիլ: Այն ա-  
տեն Վիրժինի ըսաւ.

— Եղբա՛յր, օրը իրիկուն ըլլալու վրայ է-  
ղուն ուժ ունիս տակաւին, ու ես ալ ուժասպառ  
չեմ. հոս ձգէ՛ զիս ու առանձին դարձի՛ր մեր  
տնակը, հանդարտեցնելու համար մեր մայրերուն  
սիրտը:

— Օ՛հ, ո՛չ, քենէ չպիտի բաժնուիմ, սլառաս-  
խանեց Բօլ: Եթէ երբեք գիշերը վրայ հասնի այս տն-  
տաններուն մէջ, կրակ պիտի վառեմ ու կաղամ-  
բարմաւենի մը պիտի տապալեմ. դուն պիտի  
ուտես անոր կաղամբը ու տերեւներովը քեզի  
համար տաղաւար մը պիտի շինեմ, իբր ապաս-  
տանարան:

Սակայն Վիրժինի քիչ մը հանգչելէ յետոյ,  
գետին վրայ ծռած հնաւուրց ծռռի մը բունէն  
քաղեց որդնխոտի երկար տերեւներ, որոնք բու-  
նէն վար կը կախուէին: Վիրժինի տեսակ մը  
կիսակօշիկներ շինեց այդ տերեւներէն ու անոնց-  
մով ծածկեց ոտքերը, որոնք արիւնոտած էին,  
ճամբուն քարերուն զարնուելով. որովհետեւ ու-  
րիշին օգտակար ըլլալու փութկոտութեան մէջ,  
ան մոռցած էր կօշիկները հագնիլ: Այդ տերեւ-  
ներու զովութեան շնորհիւ սփոփուած, Վիրժինի  
հնդկեղէգի ճիւղ մը կոտրեց ու սկսաւ քալել,  
մէկ ձեռքով եղէգին, իսկ միւս ձեռքով եղբօրը  
վրայ կրթնած:

Այսպէս յուշիկ յորաջաղան անտաններուն  
մէջէն, բայց ժայռերուն բարձրութիւնը ու տե-


րևաներուն խտուժիւնը ընդհուպ անոնց տեսողութեանէն ծածկեցին Եռաստին լեռը, որուն վրայէն կը քալէին. լեռան տեսքը կը խափանէր նոյն իսկ արեւը, որ մայրը մտնելու վրայ էր Քիչ յետոյ, առանց նշմարելու, հեռացան այն ճամբէն, ուրկէ յառաջացած էին, ու ծառերու, բաղեղներու և ժայռերու անել բաւիղի մը մէջ գտան ինքզինքնին: Բօլ նստեցուց Վիրժինին, ու վրդոված, սկսաւ վազվզել հոս հոն, այդ խիտ թաւուտքին մէջ ելք մը փնտռելու համար, բայց զուր յոգնեցաւ: Բարձր ծառի մը գագաթը ելաւ, Եռաստին լեռը տեսնելու համար գոնէ. բայց իր չուրջը նշմարեց միայն կատարները ծառերուն, որոնցմէ մէկ քանին լուսաւորուած էին արեւու մայրամուտին վերջին շողերով: Սակայն լեռներու ստուերը արդէն իսկ կը ծածկէր հովիտներուն մէջ գտնուող անտառները: Հովը կը հանդարտէր, ինչպէս կը պատահի մայրամուտի ատեն. խոր լռութիւն մը կը տիրէր այդ մենութեան մէջ. հոն, եղջերուներու գոչիւններէն զատ ուրիշ աղմուկ չէր լսուեր. կենդանիները ապաստան փնտռած էին այդ մեկուսի վայրերուն մէջ:

Բօլ յուսալով որ որսորդ մը կրնայ իր ձայնը լսել, ամբողջ ուժովը պօռաց. «Եկէ՛ք, օգնութեան հասէք Վիրժինիին»: Բայց անտառին արձագանգները միայն պատասխանեցին անոր ձայնին ու քանիցս կրկնեցին. «Վիրժինի՛ . . . Վիրժինի՛»:

Այն ատեն Բօլ ծառէն վար իջաւ, յոգնութեանէն ու վշտէն ընկճուած, միջոցներ փնտռեց, գիշերը հոն անցնելու համար. բայց ոչ աղբերակ կար, ոչ կաղամբարմաւենի, ոչ իսկ չոր ճիւղեր, կրակ վառելու համար:



M



Ահա՛ այն ատենն փորձառու թեամբ նասկցաւ որ  
 իր հնարքները շատ անզօր էին, ու սկսաւ արտաս-  
 լել: «Մի՛ լար, բարեկամս, ըսաւ Վիրժինի, եթէ  
 չես ուզեր վիշտով ընկճել զիս: Ես եմ պատճառը  
 քու բոլոր հոգերուդ, ինչպէս նաև այն հոգերուն  
 զոր հիմա կը զգան մեր մայրերը: Պէտք չէ բան  
 մը ընել, նոյն իսկ բարիք մը գործել, առանց  
 ծնողքին խորհուրդ հարցնելու: Օ՛հ, շատ անխու-  
 հեմ գտնուեցայ...»: Ու Վիրժինի սկսաւ նորէն  
 արցունք թափել: Բայց Բօլի ըսաւ. «Եղբա՛յրս,  
 Աստուծոյ աղօթենք, որպէսզի ան գթայ մեր  
 վրայ»: Հազիւ թէ իրենց աղօթքը աւարտած,  
 շան մը հաչիւնը լսեցին: Բօլ ըսաւ. «Որսորդի մը  
 շունը սպաննած ըլլալու է դարանի մէջ ինկած  
 եղջերուներ»: Քիչ յետոյ շունը սկսաւ սաստիկ  
 հաչել: «Ինձի այնպէս կը թուի որ մեր տնակին  
 շունը, Ֆիտէյն է, յարեց Վիրժինի: Այո՛, ձայնը  
 կը ճանչնամ. արդեօք շա՞տ մօտեցած ենք ու  
 մեր լերան մօտ կը գտնուինք»: Արդարեւ, սլան  
 մը յետոյ, Ֆիտէլ երկու տղոց ոտքերուն առջեւ  
 կը գտնուէր, կ'ոռնար, կը հեծէր ու գգուանք-  
 ներ կը շոայլէր անոնց: Զարմանքի մատնուած  
 տակաւին, Տօմինկը նշմարեցին, որ դէպի իրենց  
 կողմը կը վազէր: Բարի սեւամորթը հոն հասնե-  
 լուն պէս, որ ուրախութենէն կուլար, երկու  
 տղաքը սկսան արտասուել, առանց բառ մը  
 արտաբերելու: Տօմինկ ինքզինքը գտնելէ յետոյ  
 ըսաւ.

— Ո՛վ իմ դեռատի տէրերս, ձեր մայրերը  
 ո՛րքան մտահոգ են հիմա. անոնք մեծ ապշու-  
 թեան մատնուեցան, երբ ձեզ տունը չգտան, պատա-  
 րագէն վերադարձին՝ ինձի հետ: Մառի, որ բնա-  
 կարանին մէկ անկիւնը կ'աշխատէր, չկրցաւ

ըսել թէ ո՛ւր գացած էիք: Ես տան շուրջը  
կը դառնայի, առանց գիտնալու թէ ո՛ր կողմը  
փնտռելու էի ձեզ: Ի վերջոյ, ձեր երկուքին հին  
զգեստները(\*) առնելով հոտոտել տուի Ֆիտէլին.  
խեղճ անասունը, որ կարծես հասկցած էր միտքս,  
սկսաւ հետապնդել ձեր քայլերը: Միշտ պոչը  
երերցնելով՝ զիս առաջնորդեց մինչեւ Ռիվիէր-  
Նուար: Հոն, բնիկէ մը իմացայ թէ դուք ան-  
տառարնակ սեւամորթուհի մը տարած էիք իր  
քով ու ինք ներում շնորհած էր անոր: Բայց  
ի՛նչ ներում, մարդը ինծի ցոյց տուաւ գերուհին,  
որուն ոտքը շղթայով մը կապուած էր կոճղի  
մը ու երեք կեռիքներով երկաթէ անուր մը  
անցուած էր անոր վզին: Ֆիտէլ շարունակելով  
իր փնտռողքը, Ռիվիէր-Նուարի բլուրը առաջ-  
նորդեց զիս, ու հոն կանգ առաւ ուժգին հաչելով:  
Սղբերակի մը եզերքը, տապալած կաղամբար-  
մաւինիի մը քով կը գտնուէինք, ուր կրակ մը  
կը միար տակաւին. ի վերջոյ Ֆիտէլ հոս առաջ-  
նորդեց զիս: Եռաստին լերան ստորոտը կը գրտ-  
նուինք, ու տակաւին չորս երկար փարսախ ճամ-  
բայ ունինք մինչեւ մեր տունը: Օ՛ն, կերէք ու  
կազդուրուեցէք:

Տօ՛՛մ ինկ իսկոյն անոնց հրամցուց կարկանդակ,  
պտուղներ և կօշ մը (սնամէջ դդում), որ լեցուած  
էր հեղուկով մը, ուր իրարու խառնուած էին  
ջուր, գինի, կիտրոնի հիւթ, շաքար և մշկըն-  
կոյզ. երկու մայրերը պատրաստած էին զանոնք,

---

(\*) Սեւամորթ Տօմիկի ու իր Եան Ֆիտէլի այս արթ-  
նամտութիւնը Եան կը նմանի վայրենի Քէվեհիսայի եւ իր  
Եան՝ Օնիահի շարքնամտութեան, զոր կը պատմէ Պ. Եր Քրէվ-  
ֆէօր մարդապիտութեամբ տոգորուած իր երկապիտութեան մէջ  
(Ամերիկացի հողագործի մը նամակները:)

տղաքը կազդուրելու և զովացնելու համար : Վիր-  
ժինի հառաչեց , մտաբերելով խեղճ գերուհին ու  
իրենց մայրերը , որոնք մտահոգութեան մատ-  
նուած էին : Քանիցս կրկնեց ան . « Օ՛ն , ի՛նչ  
գժուար բան է եղեր բարիք գործելը : » Մինչ Բօլ  
և Վիրժինի կը ճաշակէին , Տօմինկ կրակ վառեց ,  
ժայռերուն մէջ գտաւ գալարուն տունկ մը , որ  
բեւեկնի կը կոչուի ու դալար վիճակի մէջ կը  
վառի , մեծ բոց մը արձակելով . ջահի մը պէս  
բոնկցուց զայն , որովհետեւ մթնած էր արդէն :  
Բայց շատ աւելի մեծ նեղութեան մը մատնուե-  
ցաւ , երբ հարկ եղաւ ճամբայ ելլել . Բօլ և Վիր-  
ժինի այլեւս չէին կրնար քալել . անոնց ոտքե-  
րը ուռեցած ու կարմրած էին : Տօմինկ ընելիքը  
չէր գիտեր . աւելի՞ հեռուն երթալու էր , օգնու-  
թիւն խնդրելու համար , թէ տղոց հետ այդ տե-  
ղէն անցնելու էր գիշեր ատեն : Տօմինկ կ'ըսէր  
անոնց . « Ո՛ւր է այն ատենը , երբ երկուքնիդ  
ալ գիրկս կ'առնէի միաժամանակ : Բայց ՚իմա  
դուք մեծցած էք , ու ես ծերացած եմ » : Այս  
շուարումին մէջ , Տօմինկ իրմէ քսան քայլ հե-  
ռու տեսաւ անտառաբնակ սեւամորթներու խումբ  
մը : Խմբապետը Բօլի և Վիրժինի մօտենալով  
ըսաւ .

— Մի՛ վախնաք , սպիտակամորթ բարի  
տղաք . այս առտու տեսանք որ հոսկէ կ'անցնէ-  
իք Ռիվիէր-Նուարի բնիկներէն սեւամորթու-  
հի մը հետ , որուն համար ներում պիտի խընդ-  
րէիք իր գէշ տիրոջմէն : Իբր երախտագիտու-  
տութեան նշան , մեր ուսերուն վրայ առնելով  
երկուքնիդ , տուն պիտի տանինք ձեզ :

Այն ատեն Տօմինկ նշան մը ըրաւ , ու ամէ-  
նէն հուժկու չորս սեւամորթեր իսկոյն սլատղա-



բակ մը շինեցին ծառերու ստերով և բաղեղներով  
ու անոնց վրայ դրին Բօլ և Վիրժինին • յետոյ  
իրենց ուսերուն վրայ հանեցին , մինչ Տօմինկ  
առջևէն կը քալէր իր ջահով , ու այսպէս ճամբայ  
ելան ուրախութեան աղաղակներուն մէջ ամբողջ  
խումբին , որ օրհնութիւններ կը անդացնէր :  
Վիրժինի խանդաղատագին կ'ըսէր Բօլի • «Ո՛վ  
բարեկամս , Աստուած երբեք անվարձ չի ձգեր  
բարիք մը »

Կէս գիշերուան մօտ , իրենց լերան ստորտը  
հասան , որուն գագաթները լուսաւորուած էին  
քանի մը կրակներով : Հազիւ թէ լեռ բարձրացած ,  
ձայներ լսեցին , որ կ'աղաղակէին •

— Դո՛ւք էք , գաւակներս :

Ասոնք սեւամորթերուն հետ պատասխանե-  
ցին •

— Այո՛ , մենք ենք :

Ընդհուպ նշմարեցին իրենց մայրերը ու Մա-  
ռին , որոնք կը դիմաւորէին զիրենք բոցավառ  
խանձողներով :

— Տարաբախտ տղաք , ուրկէ՞ կուգաք ,  
ըսաւ Տիկին տը Լա Թուր • Ի՛նչ անձկութեան  
մատնեցիք մեզ :

— Ռիվիէր-Նուարէն կուգանք , ըսաւ Վիր-  
ժինի • Ներում խնդրելու գացած էինք խեղճ սե-  
ւամորթ գերուհիի մը համար , որուն այս առտու  
կերակուր տուի տան մէջ , որովհետեւ անօթու-  
թեանէ կը մեռնէր • հիմա մեզ հոս բերին սա ան-  
տառաբնակ սեւամորթերը :

Տիկին տը Լա Թուր համբուրեց աղջիկը , ա-  
ռանց կարենալու բառ մը արտաբերել • իսկ Վիր-  
ժինի մօրը ըսաւ , զգալով որ գէմքը արցունք-  
ներով թրջած էր •

— Բոլոր վիշտերս փոխարինեցիք :





Մարկրիթ ուրախութենէն յափշտակուած ,  
թեւերուն մէջ կը սեղմէր զայն ու կ'ըսէր .

— Գուն լաւ գործ մը ըրած ես , զաւակս :

Տղոց հետ միասին իրենց տնակները հասնելէ յետոյ՝ կերակուր տուին սեւամորթներուն , որոնք իրենց անտառները վերադարձան , ամէն բարօրութիւն մաղթելով :

Ամէն օր խաղաղ ու երջանիկ կ'անցնէր այդ ընտանիքներուն համար : Ոչ նախանձը և ոչ ալ փառասիրութիւնը չէին չարչրկեր զանոնք : Սակայն անոնք բնաւ չէին բաղձար սնտոյի համբաւ մը , որ հնարքներով ձեռք կը բերուի ու զըրպարտութեամբ ձեռքէ կը հանուի : Գոհ էին իրենց անձին վկաները ու դատաւորները ըլլալնուն համար : Այդ կղզիին , ինչպէս նաև եւրոպական բոլոր գաղութներուն մէջ , ուր չարամիտ պատմութիւններով միայն կը հետաքրքրուին , անոնց առաքինութիւնները ու անուններն իսկ անյայտ էին : Մերթ անցորդ մը Բամբլըմուսի ճամբուն վրայ կը հարցնէր զաշտագետնի բնակիչներէն ոմանց .

— Վերը , սա տնակներուն մէջ ո՞վ կը բնակի :

Այն ատեն միայն կը պատասխանէին , ատանց ճանչնալու զանոնք :

— Բարի մարդիկ :

Այսպէս են փշոտ մաղառներու տակ գտնուող մանուշակները , որոնք մինչև հետուն կ'արձակեն իրենց բոցերը , թէև աննշմարելի ըլլան :

Իրենց խօսակցութիւններէն վտարած էին բամբասանքը , որ արշարութեան գրակրեւոյթին տակ , սիրտը ատելութեան ու ստութեան տրա-

մաղիբ կ'ընէ ի հարկէ, որովհետեւ անկարելի է մարդիկը չատել, երբ մարդ հաւատայ անոնց չարութեան, ու չարերուն հետ ապրիլ, եթէ անոնցմէ չժածկէ ատելութիւնը՝ բարեացակամութեան կեղծ երեւոյթին ներքեւ: Այսպէս՝ բամբասանքը մեզ կը ստիպէ չարութիւն ընել ուրիշներուն և նոյն իսկ մեր անձին: Բայց անոնք անհատապէս չէին դատեր մարդիկը, ու իրարու հետ կը խօսէին այն միջոցներուն վրայ, որով կարելի էր բարիք ընել ամենուն առհասարակ. այդ կարողութիւնը չունէին, բայց մըշտնջենական կամքով մը օժտուած էին այդ մասին, ինչ որ բարեացակամութեամբ կը լեցնէր զանոնք, միշտ պատրաստ՝ ուրիշներուն օգտակար ըլլալու: Ուրեմն առանձնութեան մէջ ապրելով, մարդասէր դարձած էին, առանց վայրենի ըլլալու: Մարդկային ընկերութեան դայթակղեցուցիչ պատմութիւնը նիւթ չէր հայթայթեր անոնց խօսակցութիւններուն, բայց բնութեան պատմութիւնը դմայլանքով և գրգանքով կը լեցնէր զանոնք: Յափշտակութեամբ կը հիանային զօրութեանը վրայ նախախնամութեան, որ իրենց ձեռքերովը անջրդի ապառաժներուն մէջ սփռած էր առատութիւն, շնորհներ, անբիծ հաճոյքներ, պարզ ու մշտանորոգ:

Բօլ, տասերկու տարեկանին մէջ աւելի կայտառ և խելացի քան Եւրոպացի տասնըհինգ տարու տղաքը, սեւամորթ Տօմինկի մշակած երկիրը կը գեղեցկացնէր:

Ան մերձակայ անտառները կ'երթար, կ'տորոնենիներու, նարնջենիներու, հնդկարմաւենիներու մատաղ տունկերը արմատախիլ ընելու համար. հնդկարմաւենիին բոլորչի գագաթը աղ-

ւոր կանաչութիւն մը ունի, ու ի՞նչ պտուղն ալ  
շաքարոտ սերով լեցուն, նարնջենիի ծաղկին  
պէս անուշահոտ է: Բօլ այդ շրջապատին մէջ կը  
տնկէր արդէն իսկ մեծցած այդ ծառերը: Հոն  
սերմանած էր նաև հունտերը այն ծառերուն, որոնք  
երկրորդ տարիէն սկսեալ, ծաղիկ ու պտուղ կու-  
տան, ինչպէս կ՛ըսէր, որուն շուրջը ջահի մը բիւ-  
րեղներուն պէս կը կախուին սպիտակ ու եր-  
կայն ծաղիկներ ողկուզածեւ, ինչպէս պարսկա-  
կան եղբեւանին, որուն գորշ կտաւի գոյնով  
փնջած ծաղիկները օղին մէջ կը ցցուին ուղղաբերձ,  
ինչպէս հնդկասեխենին, որուն անոստ բունը կա-  
նաչ սեխերով լեցուն սիւնէ մը կազմուած, իր  
վրայ ունի խոյակ մը՝ թղենիի տերեւներու պէս:

Բօլ հոն տնկած էր նաև պանանիներու,  
մանգենիներու, աւգատանձենիներու, հնդկախն-  
ձորիներու, յագենիներու, յամրոսներու կուտե-  
րը և կորիզները: Այդ ծառերէն շատեր հովանի ու  
պտուղ կ'ընծայէին իրենց դեռատի տիրոջ: Իր ժրա-  
ջան ձեռքը բեղմնաւորութիւն սփռած էր այդ շրջա-  
պատին ամէնէն ամուլ վայրերուն մէջ: Ապառաժ-  
ներու սեւաթոյր կատարներուն վրայ կը բարձ-  
րանային այլատեսակ հալուէներ, կարմրագիծ  
դեղին ծաղիկներով բեռնաւորուած հնդկաթղենի,  
փշոտ մոմատունկեր, կարծես անոնք կ'ուզէին  
հասնիլ երկայն բաղեղներուն, կապուտակ  
կամ բոսորագոյն ծաղիկներով լեցուն, որոնք  
հոս հոն վար կը կախուէին լերան զառիթափե-  
րուն երկայնքը:

Այդ ծառերը այնպէս մը տնկած էր որ կա-  
րելի էր մէկ ականարկով վայելել անոնց տեսքը:

Այդ լեռնաձորին մէջ տեղը տնկած էր կարճաբերձ  
 ծառեր, թուփեր, միջակ բարձրութեամբ, ու վեր-  
 ջապէս բարձր ծառեր, որոնք շրջանակ մը կը  
 ձեւադնէին. այսպէս՝ այդ ընդարձակ շրջապատը  
 իր կեդրոնին մէջ կ'երեւար ամփիթատրոնի մը  
 պէս, դալարիքով, պտուղներով ու ծաղիկներով  
 զարդարուն ու իր մէջ կը բովանդակէր բան-  
 ջարանոցներ, անտառներու սահմանածայրեր,  
 բրինձի և ցորենի արտեր: Բայց այդ տունկերը  
 իր յատակադժին յարմարցնելով՝ բնութեան կար-  
 դէն չէր շեղած: Բնութեան ցուցմունքներէն ա-  
 ռաջնորդուած, ցնդական սերմեր ունեցող բոյ-  
 սերը կը տնկէր բարձր տեղերու վրայ, իսկ ծը-  
 փուն հունտ ունեցողները՝ ջուրերուն եզերքը:  
 Այսպէս՝ իւրաքանչիւր բոյս կ'աճէր իրեն յատուկ  
 դիրքին մէջ, ու իւրաքանչիւր դիրք իր բոյսե-  
 րէն կը ստանար իր բնական զարդարանքը: Այդ  
 ապառաժներու գագաթէն իջնող ջուրերը ձորա-  
 կին խորը կը կազմէին հոս աղբիւրներ, հոն  
 լայնատարած հայելիներ, ուր դալարիքին մէջտեղ  
 կը ցոլային ծաղկաւէտ ծառերը, ժայռերը և եր-  
 կնքին կանգոյտը:

Հակառակ գետնին անհարթութեան, բոլոր  
 այդ տունկերը մեծ մասամբ թէ՛ դիւրամատչելի  
 և թէ՛ դիւրատեսիլ էին: Արդարեւ, մեր բոլոր  
 խորհուրդներով ու՞ աջակցութեամբ կ'օգնէինք ա-  
 նոր, որպէսզի ի գլուխ հանէ իր գործը: Բոլ ա-  
 րանետ մը բացած էր, որ այդ լեռնաձորին շուր-  
 ջը կը դառնար, և որուն մէկ քանի ճիւղաւո-  
 րումները շրջանակէն գէպի կեդրոնը կը յանդէին:  
 Ամէնէն խորտուբորտ տեղերն իսկ օգտագործած  
 էր, ու բարեղէպ ներդաշնակութեամբ մը՝ ան-

հարթ գետինը պտոյտի յարմար դարձուցած, ու  
ընտանի ծառերը վայրիներուն հետ պատշա-  
ճեցուցած էր: Քարերու սա ահագին շեղջակոյտը  
հիմա կը խափանէ այս ճամբաները ու կղզիին  
հողային տարածութեան մեծ մասը: Բօլ հոս հոն  
այդ քարերէն կազմուած բուրգերուն մէջտեղ տըն-  
կած էր հողախառն արմատները վարդենիներու  
և ժայռերուն վրայ աճող ուրիշ թուփերու: Շատ  
չանցած, այդ մռայլ ու անտաշ բուրգերը ծած-  
կուեցան դալարիքով և ամենագեղեցիկ ծաղիկ-  
ներու փայլով: Հեղեղատները, որոնք եղերուած  
էին իրենց եզերքներուն վրայ հակած հնաւուրց  
ծառերով, կամարակապ նկուղներ կը ձեւացնէին՝  
ջերմութեան անմատչելի, ուր զովանալու կ'եր-  
թային ցերեկ ատեն: Հոն արահետ մը կար, որ վայրի  
ծառերու պուրակ մը կ'առաջնորդէր, ու անոր  
կեդրոնը աճող ընտանի ծառ մը, հովերէն պա-  
տսպարուած, պտուղներով ծանրաբեռնուած էր.  
հոս մշակուած արտ մը կար, հոն՝ բանջարանոց  
մը: Սա ծառուղիէն կը նշմարուէին տուները,  
իսկ միւս ճամբէն՝ լերան անմատչելի գագաթնե-  
րը: Բաղեղապատ թաթամենիներու թանձրախիտ  
պուրակին մէջ ո՛չ մէկ բան կը նշմարուէր. կէս  
օրին լեռնէն դուրս ցցուած սա մօտակայ մեծ  
ապառաժին կատարին վրայէն կը տեսնուէին  
չրջապատին բոլոր սարերը, ու հեռուն ծովը,  
ուր երբեմն երեւան կուգար Եւրոպայէն հոն ե-  
կած կամ հոն դարձող նաւ մը: Իրիկունը, այդ  
ապառաժին վրայ կը հաւաքուէին այդ ընտա-  
նիքները ու լռիկ կը վայելէին զովութիւնը օ-  
դին, բոյրը ծաղիկներուն, կարկաչը աղբերակնե-  
րուն, վերջին դաշնակութիւնները լոյսի և ստուեր-



ներուն :

Ամէնէն աւելի հաճելի կը թուէին այն ա-  
նունները , որով կը յորջորջուէին մեծ մասամբ այդ  
լարիւրինթոսին սխրալի առանձնարանները : Այն  
ժայռուտքը որուն վրայ խօսեցայ , և ուրկէ իմ գալս  
կը նշմարէին հեռուէն , Բարեկամութեան Յայտնու-  
թիւն կը կոչուէր : Բօլ և Վիրժինի խաղացած ատեն-  
նին հոն տնկած էին հնդկեղէզ և անոր ծայրը կը  
բարձրացնէին փոքր ու սպիտակ թաշկինակ մը ,  
իմ գալուստս իմաց տալու համար , զիս նշմարել-  
նուն պէս , ինչպէս մօտակայ լեռնէն դրօշ մը կը  
բարձրացնեն , ծովուն վրայ նաւ մը տեսած ա-  
տեննին : Մտադրեցի արձանագրութիւն մը քան-  
դակել այդ եղէզին բունին վրայ : Իմ ուղեւորու-  
թիւններու մէջ հաճոյքով կը դիտեմ արձան մը  
կամ հնութեան յիշատակարան մը , բայց ա՛լ աւել-  
ի ախորժելի թուեցաւ ինձի կարդալ լաւ կատար-  
ւած արձանագրութիւն մը : Կարծես թէ մարդ-  
կային ձայն մը դուրս կ'ելլէ քարէն , դարերու  
մէջէն լսելի կ'ըլլայ , ու անապատներու մէջտեղ  
գտնուող մարդուն ուղղուելով , անոր կ'ըսէ թէ  
ինք մինակ չէ և թէ ուրիշ մարդիկ ալ զգացած ,  
խորհած ու տառապած են այդ միեւնոյն վայրե-  
րուն մէջ : Ի՞նչ փոյթ թէ այդ արձանագրու-  
թիւնը կը վերաբերի վաղեմի ազգի մը , որ այ-  
լեւս գոյութիւն չունի , քանի որ ան մեր հոգին  
կը սփռէ անհունին դաշտերուն մէջ , ու անմա-  
հութեան զգացումը կ'ընծայէ անոր , ցոյց տալով  
թէ մտածումը վերապրած է նոյնիսկ կայսրու-  
թեան մը կործանումէն յետոյ :

Ուստի Բօլ և Վիրժինի դրօշակի փոքր կայ-  
մին վրայ գրեցի Ուլրատիոսի սա ոտանաւորը :

«Բեզ Հելինեայ եղբարքն ասեղի լուսասփիւռ.

Եւ հայրն հողմոց քեզ ի բարձանց ուղեցոյց,

Զայլսն կապեալ՝ եւ արձակեալ ըզգեփիւռ

ՏԱՂԵՐԳ. Գ. 2

Վիրգիլիոսի սա ոտանաւորն ալ քանդակեցի  
Թաթամենիի կեղեւին վրայ, որուն հովանիին  
տակ երբեմն կը նստէր թօլ, հեռուն, ալեծուփ ծո-  
վը դիտելու համար.

«Նաեւ այնմ իսկ երանի ոք զդատեային ծանեաւ զդիս:

ՄՇԱԿ. Բ. 496

Ու սա ոտանաւորն ալ՝ տիկին տը Լա թու-  
րի խրճիթին դրան վրայ, որ անոնց հաւաքա-  
տեղին էր.

Աս հանգիստ ապահով, եւ կեանք անփորձ խարէութեան,

ՄՇԱԿ. Բ. 480

Բայց Վիրգիլիի չհաւնեցաւ իմ լատիներենիս.  
ան կ'ըսէր թէ իր հողմացոյցին տակ գրած տո-  
ղերս շատ երկայն ու հմտալից էին: «Պիտի նա-  
խընտրէի որ, յարեց Վիրգիլիի, հոն արձանագ-  
րէիր. մտայոյզ, անյողդողդ. — Այս նշանաբա-  
նը ա'լ աւելի կը պատշաճի առաքինութեան,  
պատասխանեցի»: Իմ խորհրդածութիւնս շիկնեցուց  
զայն:


Սոյն երջանիկ ընտանիքները իրենց շուրջը  
գտնուող բոլոր բաներուն վրայ կը սփռէին ի-  
րենց զգայուն հոգիները: Ամէնէն գողարիկ ա-

նուսնները տրուած էին երեւութապէս ամէնէն  
աննշան առարկաներուն : Միաբանութիւն կը կոչու-  
ւէր նարնջնենիներէ , պանանենիներէ և յամ-  
րոսներէ կազմուած բոլորովայր մը , մարգա-  
գետնի մը շուրջը տնկուած , որուն մէջտեղը պա-  
րելու կ'երթային երբեմն Բօլ և Վիրժինի : Սրբ-  
բուած Արցունքներ կը կոչուէր հնաւուրց ծառ  
մը , որուն հովանիին տակ Տիկին տը Լա Թուր  
և Մարկրիթ իրարու պատմած էին իրենց դժ-  
բախտութիւնները : Պրքաքաներ և Նորմանսի յոր-  
ջորջած էին այն փոքրատարած գետինները , ուր  
ցորեն , ելակ , և ոլոռ սերմանած էին :

Տօմինկ ու Մառի իրենց տիրուհիներուն օ-  
րինակին հետեւելով ուղեցին դիտել Ափրիկէի  
իրենց ծննդավայրը : Անկոյա և Ֆուլյ-Բուանք  
անուանեցին երկու վայրեր , ուր կը բուսնէր  
այն խոտը , որով կը շինէին կողովներ . հոն տըն-  
կած էին նաև դդմենի : Այսպէս , կլիմաներուն ար-  
դիւնարեւութեան շնորհիւ , այդ տարագրուած  
ընտանիքները իրենց հայրենիքին քաղցր պատ-  
րանքները կը սնուցանէին , ու օտար երկրի մը  
մէջ կը սփոփէին իրենց վշտերը : Աւա՛ղ , ի՛նչ  
սիրուն յորջորջումներով կ'ողեւորւէին ծառերը ,  
աղբերակները և ժայռերը այդ վայրին , որ հի-  
մա տակնուվրայ եղած է , և Յունաստանի մէկ  
դաշտին հման , աւերակներ ու սրտայոյզ անուն-  
ներ միայն կ'ընծայէ :

Բայց այդ շրջապատին մէջ գտնուող բոլոր  
վայրերէն և ոչ մէկը այնքան հաճելի էր որքան  
այն վայրը , որ կը կոչուէր Վիրժինի Հանգսա-  
րանք : Ժայռին ստորոտը գտնուող Բարեկամու-  
թեան Դիսարանը խրամատ մըն է , ուրկէ կը հոսի  
աղբիւր մը , որ իր ակէն սկսեալ կը ձեւայնէ





փոքր ջրակոյտ մը՝ նուրբ խոտերով մարգագետ-  
նի մը մէջ: Երբ Մարկրիթ ծնաւ Բօլը, անոր  
նուիրեցի ուրիշի մը կողմէ ինծի տրուած հրնդ-  
կընկոյզ մը: Մարկրիթ այդ պտուղը տնկեց ջրա-  
կոյտին եզերքը, որպէսզի արդիւնաբեր ծառը  
օրին մէկը իբր թուական ծառայէ իր զաւկին  
ծննդեան: Վիրժինի ծնելուն պէս, Տիկին տը Լա-  
թուր, անոր օրինակին հետեւելով, ուրիշ ծառ  
մը տնկեց հոն, միեւնոյն մտադրութեամբ: Այդ  
երկու պտուղներէն առաջ եկան երկու հնդկըն-  
կուզենիներ, որոնք այդ երկու ընտանիքներու  
վաւերաթուղթերը կը ձեւացնէին. մէկը Բօլի ծառը  
կը կոչուէր, իսկ միւսը՝ Վիրժինի ծառը: Եր-  
կուքն ալ իրենց մատաղատի տէրերուն համեմա-  
տութեամբ մեծցան, քիչ մը անհաւասար բարձ-  
րութեամբ, բայց տասերկու տարի յետոյ՝ իրենց  
խրճիթներէն աւելի բարձր էին անոնք: Ուղէշ-  
ները իրարու հետ շաղապատուած հնդկըն-  
կոյզներու աղածրի ողկոյզները աղբիւրի աւա-  
զանին վերեւ կը կախուէին:

Բացի այդ երկու ծառերէն, ապառաժին  
խոռոչը բնականէն ինքնաղարդ վիճակի մէջ ձգած  
էին: Իր թուխ և տամուկ կողերուն վրայ լայ-  
նատերեւ ձարխոտեր կը շողային կանաչ ու սև  
աստղերու պէս, և հովերու քմայքին ենթակայ,  
որդնխոտի խուրճեր կը ծփային, կանաչ ծիրա-  
նեզոյն ու երկայն ժապաւէններու պէս: Մօտերը  
կ'աճէին կուսածաղիկներ, որոնք գրեթէ  
կը նմանին կարմիր շահոքրամի ծաղիկնե-  
րուն, ինչպէս նաև դարապղպեղ, որուն պա-  
տիճները բուստի գոյնէն աւելի շողշողուն են:  
Շրջակաները շատ անուշ կը բուրէին սրտածեւ

տերեւներով ապրաամի ու մեխակի հոտով ուս-  
հանը :

Լերան զառիթափին բարձունքէն կը կախ-  
ւէին ծալծալ զգեստներու պէս ծփուն բաղեղ-  
ներ , որոնք ժայռերու կողերուն վրայ կը ձեւաց-  
նէին մեծ և դալարագեղ սրահակներ : Ծովային  
թռչունները հոն կը զիշերէին , այդ խաղաղիկ  
առանձնարաններէն հմայուած : Մայրամուտին ,  
հոն կը տեսնուէր ձկնկուլին ու ծովային արտոյ-  
տին ճախրանքը՝ ծովուն եզերքը , իսկ օդին մէջ  
բարձր՝ սեւաթոյր ճղլակը ու արեւադարձային  
սպիտակ թռչունը , որոնք արեգակին պէս կը  
հեռանային Հնդկական մենաւոր Ովկէանոսէն :  
Վիրժինի ախորժով կը հանգչէր այդ աղբիւրին  
եզերքը , որ փառաւոր ու վայրի շքեղութեամբ մը  
պճնուած էր : Յաճախ Վիրժինի հոն կ'երթար ,  
հնդկընկոյզներու հովանիին տակ լուալու համար  
ընտանիքին ձերմակեղէնները : Երբեմն ալ այժե-  
րը արածելու կը տանէր : Անոնց կաթովը պանիր  
պատրաստած պահուն հաճոյքով կը տեսնէր որ  
այժերը ապառաժին ցից զառիթափերուն վրայ  
կը ճարակէին ձարխոտը , ու օդին մէջ կը կենա-  
յին՝ ժայռի մէկ ծնօտին կրթնած , իբր թէ պատ-  
ւանդանի մը վրայ գտնուէին :

Բօլ տեսնելով որ այդ վայրը Վիրժինի կող-  
մէն սիրուած էր , մօտակայ անտառէն հոն տարաւ  
ամէն տեսակ թռչուններու բոյներ : Այդ թռչուն-  
ներուն հայրերը և մայրերը հետեւեցան իրենց  
ձագուկներուն ու դացին հաստատուեցան այդ  
նոր գաղութին մէջ : Վիրժինի մերթ անոնց կը  
բաժնէր բրինձի , եգիպտացորենի և կորեկի հա-  
տիկներ : Նորատի աղջիկը երեւան գալուն պէս ,

իրենց մացառներէն կը հեռանային սուլող սար-  
եակներ, քաղցրագայլայլ պէնկալեան սար-  
եակներ և հրագոյն փետուրներով ծիրանահաւեր,  
իսկ զմրխտագոյն ու կանաչագեղ պապկաներ մօ-  
տակայ լատանենիներէն (հողմահարածեւ  
արմաւենի) վար կ'իջնէին, կաքաւներ կը վազ-  
վզէին խոտին տակ, և ամէնքն ալ խառնիխուռն,  
հաւերու պէս կը յառաջանային մինչեւ Վիրժինիի  
ոտքերը: Բօլ ու Վիրժինի հիացիկ, անոնց  
խաղերով, ախորժանքով ու սէրերով կը զուար-  
ճանային:

Սիրելի զաւակներ՝, այսպէս բարեգործութեամբ  
ու անմեղութեամբ կ'անցնէիք ձեր առաջին օրերը:  
Հոս, ձեր մայրերը իրենց գրկին մէջ սեղմելէ  
յետոյ ձեզ, քանիցս օրհնած էին երկինքը, տես-  
նելով որ իրենց ծերութեան մխիթարանքը կը  
պատրաստէիք, ու կեանքի մէջ մուտ կը գոր-  
ծէիք այնքան բարենշան կերպով: Սա ժայռերու  
հովանիին տակ, քանիցս այդ երկու կիներուն  
հետ ճաշակած եմ ձեր դաշտային ճաշերը, ուր  
ոչ մէկ սպաննուած անասունի միս կար: Կաթով  
լեցուն կօշեր, թարմ հաւկիթ, պանանենիի տե-  
րեւներուն վրայ դրուած բրինձով կարկանդակ-  
ներ, բաթաթէսով լեցուն կողովներ, մանգեր,  
նարինջներ, նուռեր, պանաններ, արմաւներ,  
անանասներ կ'ընծայէին ամէնէն առողջարար  
սնունդները, ամէնէն զուարթ գոյները ու ամէ-  
նէն ախորժելի հիւթերը:

Խօսակցութիւնն ալ այդ խնջոյքներուն պէս  
քաղցր ու անվնաս էր: Բօլ յաճախ կը խօսէր  
այդ օրուան և յաջորդ օրուան աշխատանքներուն  
վրայ: Ընտանիքին համար օգտակար եղող բա-



նի մը վրայ կը խորհէր : Հոս նրբուղիները լաւ  
յարդարուած չէին , հոն գէշ հանգստավայր մըն  
էր , սա մատղաշ ծառերը բաւական հովանի չէին  
ընծայեր . Վիրժինի պիտի կրնար աւելի լաւ  
հանգչիլ հոն :

Անձրեւային եղանակին , ցերեկը տնակին  
մէջ կ'անցնէին միասին , տէր և ծառայ խոտէ  
փսիաթներ ու հնդկեղէգէ կողովներ շինելու  
զբաղած : Պատին առջեւ կանոնաւոր շարուած  
կը տեսնուէին տրմուխներ , կացիններ , բահեր ,  
ու այդ երկրագործական գործիներուն մօտ ա-  
նոնց արգասիքը եղող արդիւնաբերութիւննե-  
րը , բրինձի պարկեր , ցորենի որաներ ու ոստա-  
լից պանաններ : Առատութեան կը միանար փափ-  
կակերութիւնը : Մարկրիթէն և իր մօրմէն սոր-  
ված ըլլալուն , Վիրժինի հոն կը պատրաստէր  
օշարակներ ու կազդուրիչ ըմպելիներ՝ շաքարե-  
ղէգի հիւթով , լեմօնով ու կիտրոնով խառնուած ,

Մութը կոխելուն պէս , ճրագի մը լոյսովը  
կը ճաշէին . յետոյ Տիկին տը Լա Թուրկամ Մար-  
կրիթ քանի մը պատմութիւններ կ'ընէր , ըսե-  
լով թէ ի'նչպէս ուղեւորներ գիշերանց մոլորած  
էին աւազակներով լեցուն Եւրոպայի անտառնե-  
րուն մէջ , թէ ի'նչպէս փոթորիկէն քշուած նաւ  
մը խորտակուած էր ամայի կղզիի մը ժայռե-  
րուն վրայ : Երկու տղոց զգայուն հոգիները կը  
վրդովէին : Անոնք երկնքէն կը խնդրէին որ իրենց  
շնորհ ընէ օրին մէկը ասպնջականութիւն ըն-  
ծայելու այդպիսի տարաբախտներու : Յետոյ եր-  
կու ընտանիքները իրարմէ կը բաժնուէին , հանգ-  
չելու համար , յաջորդ օրը իրար տեսնելու մա-  
սին անհամբերութեան մատնուած : Երբեմն ա-

նոնք կը քնանային անձրեւին աղմուկովը, որ  
յորդանոս կը տեղար իրենց տնակներու տանիք-  
ներուն վրայ, և կամ քուն կը քաշէին հովերու  
աղմուկով, որոնք ափերուն վրայ փշրուող ալիք-  
ներու հեռաւոր մրմունջը կը բերէին: Ուստի,  
Աստուած կ'օրհնէին, իրենց անձնական ապահո-  
վութեանը համար, երբ կը մտաբերէին հեռաւոր  
վտանգը:

Մերթ Տիկին տը Լա թուր ամենուն առջեւ կը  
կարդար Հին և Նոր Կտակարաններէն սրտայոյզ  
պատմութիւններ: Այդ նուիրական գրքերուն  
վրայ շատ չէին տրամաբաներ, որովհետեւ անոնց  
աստուածաբանութիւնը համակ զգացում էր բնա-  
կան զգացումին պէս, և բարոյականը գործն  
իսկ էր, Աւետարանի բարոյականին պէս: Երկու  
ընտանիքները հաճոյքներու և տխրութեան  
նուիրուած առանձին օրեր չունէին: Ամէն օր  
տօն էր անոնց համար, ու զիրենք շրջապատող  
ամէն բան՝ աստուածային տաճար մը, ուր միշտ  
կը հիանային անհուն, ամենազօր ու մարդասէր  
Իմացականութեան վրայ: Գերազոյն զօրութեան  
նկատմամբ անոնց ունեցած վստահութիւնը անց-  
եալի մասին սփտիանքով կը լեցնէր, ու քաջու-  
թիւն կը ներշնչէր ներկայի և յոյս՝ ապագայի մա-  
սին: Դժբախտութեան ստիպումով բնութեան ծոցը  
վերադարձած այդ կիները իրենց ու իրենց զաւակ-  
ներուն մէջ զարդացուցած էին բնութեան ըն-  
ծայած այդ զգացումը, որ թոյլ չի տար մեզի՝  
դժբախտութեան մէջ իյնալու:

Բայց որովհետեւ ամէնէն զգաստ հոգիին  
մէջ իսկ ամպրոպներ կը բարձրանան երբեմն,  
որոնք կը վրդովեն զայն, երբ այդ ընտանիքին

անդամներէն մէկը տխուր երեւար, միւսները  
 կը հաւաքուէին անոր շուրջը ու դառն մտածում-  
 ները կը փարատէին, զգացումներու արտայայ-  
 տութեամբ առաւելապէս քան թէ խորհրդածու-  
 թիւններով: Ամէն ոք իր նկարագիրը ցոյց կու-  
 տար. Մարկը իթ իր վառվառուն զուարթութիւնը,  
 Տիկին տը Լա թուր՝ քաղցր աստուածագիտու-  
 թիւն մը, Վիրթինի՝ գողտրիկ գգուանքներ, Բօլ՝  
 անկեղծութիւն, սրտակցութիւն: Մառի և Տօ-  
 մինկ ալ օգնութեան կը հասնէին: Եթէ երբեք  
 մէկը վշտակրէր, ամէնքն ալ վշտակից կ'ըլլային,  
 ու եթէ մէկը արտասուէր՝ ամէնքն ալ կ'արտաս-  
 ւէին: Այսպէս՝ տկար տունկերը իրարու կը փարին,  
 մրրիկներու դիմադրելու համար:

Գեղեցիկ եղանակին, ամէն կիրակի պատա-  
 րագի կ'երթային Բամբլըմուսի եկեղեցին, որուն  
 զանգակատունը կը տեսնէք վարը, դաշտագետ-  
 նին մէջ: Հոն դեսպակով կուգային հարուստ  
 բնիկներ, որոնք քանիցս փութացին ծանօթու-  
 թիւն հաստատել այդ միաբան ընտանիքներուն  
 հետ, ու զուարճութիւններու հրաւիրել զա-  
 նոնք: Բայց երկու կիները միշտ պատշաճու-  
 թեամբ ու յարգանքով կը մերժէին այդ հրաւեր-  
 ները, համոզուած թէ զօրաւորները կը փրն-  
 տուն տկարները, իրենց հաճոյակատար անձեր  
 գտնելու համար միայն, ու կարելի չէ հաճոյա-  
 կատար ըլլալ, առանց փայփայելու ուրիշներու  
 լարի կամ չար կիրքերը: Միւս կողմէ, ոչ նուազ  
 կը խորշէին աննշան մարդոց ընտանութենէն,  
 որոնք ընդհանրապէս նախանձոտ, բամբասող ու  
 գոհիկ կ'ըլլան: Նախ՝ երկշոտ համարուեցան  
 ոմանց կողմէ, ու հպարտ՝ ուրիշներու կողմէ:


բայց իրենց վերապահ ընթացքին հետ խիստ մարդասէր քաղաքավարութիւն մը ցոյց կուտային, մանաւանդ թշուառներուն հանդէպ, բան մը որուն շնորհիւ անզգալապէս ձեռք բերին հարուստներուն համարումը և աղքատներուն վստահութիւնը:

Պատարագէն յետոյ, յաճախ անոնց միջնորդութեան կը դիմէին: Վշտահար անձ մը խորհուրդ կը հարցնէր, կամ տղայ մը կը խնդրէր որ այցելէին մօտակայ թաղի մը մէջ պառկած իրենց հիւանդ մօր: Անոնք միշտ հետերնին կը տանէին տեղին բնակիչներուն մէջ սովորական եղող հիւանդութեանց օգտակար դեղեր, ու բարեքիկ վարմունք մը ցոյց կուտային, ինչ որ այնքան յարգ կ'ընծայէ փոքր ծառայութիւններու: Ամէնէն աւելի կը յաջողէին մտքէն վիշտերը վանել, որոնք այնքան անհանդուրժելի կ'ըլլան առանձնութեան ու տկար մարմնի մը մէջ: Տիկին տը Լա թուր Աստուծոյ վրայ այնքան վրստահութեամբ կը խօսէր որ հիւանդը մտիկ ըրած պահուն կը կարծէր որ Աստուած հոն էր: Վիրժինի յաճախ արցունքներէն տամկացած աչքերով, այլ սիրտը ուրախութեամբ լեցուած, տուն կը դառնար. որովհետեւ բարիք գործելու առիթը ունեցած էր: Առաջուց ինք կը պատրաստէր հիւանդներուն անհրաժեշտ եղող դեղերը ու անպատում շնորհով մը կը մատուցանէր անոնց: Այս մարդասիրական այցելութիւններէն յետոյ, մերթ կ'երկարէին իրենց ճամբան, Մօնթաներլօնկի հովտէն անցնելով իմ տունս դալու համար, ուր ճաշի կը սպասէի անոնց, այն գետակի եզերքներուն վրայ, որ մօտերը կը հոսի: Այս

առթիւ քանի մը շիշ հին գինի կը հայթայթէի ,  
մեր հնդկական ճաշերուն պատճառած զուարթու-  
թիւնը աւելցնելու համար եւրոպական ախորժելի  
ու կազդուրիչ ըմպելիներով : Երբեմն ալ , ժամա-  
դիր կ'ըլլայինք ծովեզերքը , ուրիշ քանի մը գե-  
տակներու մուտքին վրայ , որոնք մեծ վտակնե-  
րու կը նմանին հոս : Բնակարանէն հոն կը տա-  
նէինք բանջարեղէնի պաշար ու անոր վրայ կ'ա-  
ւելցնէինք այն բերքը զոր ծովը առատօրէն կը  
հայթայթէր մեզի : Այդ ափերուն վրայ կ'որսա-  
յինք կապտածուկ , բազմոտանի , կարմրախայտ ,  
խեցգետին , խէչ , խեչափառ , եքինոս , ոստրէ և  
ամէն տեսակ խեցեմորթ : Ամէնէն ահարկու դիր-  
քերը յաճախ կ'ընծայէին ամէնէն հանդարտ հա-  
ճոյքները : Մերթ ապառաժի մը վրայ նստած ,  
թաւշածառի մը հովանիին տակ , կը տեսնէինք որ  
ծովուն բացէն եկած կոհակներ ահազդու շառա-  
չումով կը փշրուէին մեր ոտքերուն տակ : Բօլ ,  
որ ձուկի պէս կը լողար , երբեմն խուժերուն  
վրայ կը յառաջանար , կոհակները դիմաւորելով .  
յետոյ մօտենալուն պէս՝ դէպի ծովեզերք խոյս  
կուտար անոնց փրփրալից ու մանչուն խոյանք-  
ներուն առջեւ , որոնք ծովափին վրայ բաւական  
տեղ կը հալածէին զինքը : Բայց Վիրժինի սուր  
ճիչեր կ'արձակէր , այդ բանը տեսնելուն պէս ,  
ու կ'ըսէր թէ այդ խաղերը մեծ վախ կը պատ-  
ճառէին իրեն :

Մեր ճաշերէն յետոյ՝ երկու երիտասարդնե-  
րը կ'երգէին ու կը պարէին : Վիրժինի կ'երգէր  
դուշտային կեանքի երջանկութիւնը ու ծովային  
մարդոց արկածները , որոնք ազահուժենէ  
մղուած , կատաղի տարրի մը վրայ կը նաւարկեն ,





փոխանակ հողը մշակելու, որ այնքան բարիք-  
ներ կ'ընծայէ խաղաղիկ: Երբեմն, Բօլի հետ  
միասին, նէ սեւամորթներու պէս մնջկատակ կ'ը-  
նէր: Մարդու սռաջին լեզուն մնջկատակն է,  
ու բոլոր ազգերուն ծանօթ է ան: Շատ բնական  
և շատ արտայայտիչ ըլլալուն, սպիտակամորթերու  
տղաքը շուտով կը սորվին զայն, երբ սեւամորթ-  
ներուն խաղալը տեսնեն: Վիրժինի կը յիշէր  
մօրը կատարած ընթերցումներէն այն պատմու-  
թիւնները, որոնք ամէնէն աւելի յուզած էին  
զինքը, ու անոնց գլխաւոր դէպքերը կը ներկ-  
այացնէր մեծ միամտութեամբ մը: Մերթ, Տօ-  
մինկի նուագարանին ձայնով՝ մարդադետնին վրայ  
երեւան կուգար, սափորը գլխուն վրայ, ու երկ-  
չտտութեամբ կը յառաջանար դէպի մօտակայ աղ-  
բերակ մը, ջուր առնելու համար: Տօմինկ ու Մառի  
կը կատարէին Մատիանի հովիւներուն դերը,  
Վիրժինիին թոյլ չէին տար մօտենալ աղբիւրին  
ու զայն վանել կը ձեւացնէին: Բօլ օգնութեան  
կը հասնէր անոնց, հովիւները կը ծեծէր, Վիր-  
ժինիին սափորը կը լեցնէր, ու անոր գլխուն  
վրայ դնելով, կարմիր կուսածաղիկներով կը  
պսակազարդէր զայն, ինչ որ կը շեշտէր անոր  
մոյնքին սպիտակութիւնը: Այն ատեն ես ալ  
Հոագուէլի դերը կը ստանձնէի ու Բօլի կնութեան  
կուտայի աղջիկս Սէֆօրան:

Ուրիշ անգամ մը Վիրժինի կը ներկայաց-  
նէր Հոուզը, որ այրի ու աղքատ կը դառնայ իր  
երկիրը, ուր ինքզինքը օտար կը զգայ երկար  
բացակայութենէ մը յետոյ: Տօմինկ և Մառի  
հնձողներու դերը կը կատարէին: Վիրժինի անոնց  
ետեւէն յառաջանալով՝ հոս հոն կը քաղէր ցորե-



նի հասկեր: Բօլ նահապետի լրջութեամբ մը կը հարցափորձէր Վիրժինին, ու այս վերջինը դողալով կը պատասխանէր անոր հարցումներուն: Ընդհուպ, կարեկցութիւն զգալով, ասպնջականութիւն կ'ընծայէր այդ անմեղին և ապաստան՝ այդ անբախտին. Վիրժինին գոգնոցը կը լեցնէր ամէն տեսակ բերքերով, ու մեր առջեւ կը հանէր, իբր թէ մենք քաղաքին Մերակոյտը ըլլայինք, յայտարարելով թէ Վիրժինին հետ պիտի ամուսնանար, հակառակ անոր չքաւորութեան: Սոյն տեսարանին հանդէպ Տիկին տը Լաթուր կը յիշէր իր լքումը ծնողքին կողմէ, իր այրիութիւնը, Մարկրիթի կողմէ գտած լաւ ընդունելութիւնը, և հիմա ալ իրենց տղոց միջեւ ամուսնութեան մը յոյսը. ասոր վրայ՝ չէր կրնար զսպել իր արցունքները, ու մենք ալ վշտի և ուրախութեան արտասուքներ կը թափէինք, չարիքներով ու բարիքներով խառն այդ յիշատակը մտաբերած ատեննիս:

Այս տուամները այնքան ճշդրտօրէն կը ներկայացուէին որ Սուրիոյ և Պաղեստինի դաշտերը փոխադրուած էինք կարծես: Պատշաճ յարգարանքը, լուսնավառութիւնը և նուազախումբն ալ չէին պակսեր հոն: Թատերաբեմը կը գտնուէր սովորաբար, քառուղիին մէջ անտառի մը, որուն ծառերը սաղարթներու քանի մը կամարներ կը ձեւացնէին մեր շուրջը: Անոնց մէջտեղը կը գտնուէինք, ցերեկուան ջերմութենէն պատասպարուած, բայց արեւը հորիզոնին վրայ խոնարհելէ յետոյ ծառերու բուններուն վրայ եղող բեկբեկուն ճառագայթները կը ցրուէին անտառին ստուերներուն մէջ, լուսաւոր ու երկայնացիօ խուրձերով, որոնք շատ վեհաշուք տալաւորու-

Թիւն մը կը ձգէին: Մերթ արեւուն ամբողջ սկաւառակը կ'երեւէր ծառուղիի մը ծայրը, և լուսաշող կը դարձնէր զայն: Ծառերուն սաղարթները, տակէն քրքումագոյն ճառագայթներով լուսւորուած, զմբուխտի ու տպաղիոնի փայլերով կը շողար: Ծառերուն մամռապատ ու թխագոյն բուները անագապղինձէ հնաւուրց սիւներու կը նմանէին. իսկ թռչունները որոնք մթաստուեր տերեւներուն տակ քաշուած էին լոկ, գիշերը անցնելու համար, երկրորդ արշալոյս մը տեսնելէ զարմացած, ամէնքը միարեւրան՝ ցերեկուան աստղը կ'ողջունէին հաղարումէկ երգերով:

Գիշերը յաճախ վրայ կը հասնէր այդ դաշտային խրախճանքներուն ատեն. քայց ջինջ օդը և մեղմ կլիման թոյլ կուտային որ անտառներուն մէջտեղ հիւղի մը մէջ պառկէինք, առանց վախնալու հեռաւոր կամ մօտաւոր գողերէ: Յաջորդ օրը, երբ ամէն ոք իր տնակը կը դառնար, զայն կը գտնէր իր ձգած վիճակին մէջ: Վաճառականութենէ զուրկ այդ կղզիին մէջ այնքան բարեմտութիւն ու պարզամտութիւն կար որ շատ մը տուներու դռները բանալիով կղպուած չէին, ու փականք մը հետաքրքրական առարկայ մը կը թուէր գաղթածիներուն:

Տարուան մէջ օրեր կային, որոնք մեծ ցնծութիւն կը պատճառէին Բօլի և Վիրժինիի իրենց մայրերուն անուան տօնախմբութեան օրերն էին: Վիրժինի նախընթաց իրիկուընէ կը թրէր ու կ'եփէր ցորենի ալիւրէ պատրաստուած կարկանդակներ ու կը ղրկէր կղզիին մէջ ծնած սպիտակամորթ ընտանիքներու. ասոնք եւրօպական հաց չէին կերած բնաւ, ու սեւամորթներու

աջակցութեանէն զուրկ, դատապարտուած էին  
 մանիօքով ապրելու անտառներուն մէջտեղ,  
 որովհետեւ աղքատութեան տոկալու համար, չու-  
 նէին գերութեան ընկերացող տխմարութիւնը և  
 կրթութեան ընծայած արիութիւնը: Միակ նը-  
 ւէրները զոր Վիրժինի կրնար ընծայել գիւրաւ,  
 այդ կարկանդակներն էին, բայց իր բարեշնորհ  
 արտայայտութեամբ մեծ յարգ մը կը պարուելէր  
 անոնց: Նախ որ՝ Բօլի միջոցաւ այդ կարկանդակ-  
 ները կը զրկուէին ընտանիքներուն, ու ասոնք  
 նուէրը ընդունած ատեննին կը խոստանային յա-  
 ջորդ օրը անցնել Տիկին տը Լա Թուրի և Մար-  
 կրիթի մօտ: Եւ ահա՛ ընտանիքի մայր մը հոն  
 կը հասնէր երկու-երեք եղկելի աղջիկներուն  
 հետ, դալկադէմ, նիհար ու այնքան երկչոտ որ  
 չէին համարձակեր աչքերնին վեր առնել: Վիր-  
 ժինի ընդհուպ համարձակութիւն կը ներշնչէր  
 անոնց կը հրամցնէր զովացուցիչներ, ի վեր հա-  
 նելով ըմպելիներու լաւութիւնը, մասնաւոր պա-  
 րագայի մը շնորհիւ, ինչ որ աւելի հաճելի կը դարձ-  
 նէր զանոնք. սա ըմպելին պատրաստուած էր Մար-  
 կրիթի կողմէ, միւսը՝ մօրը կողմէ. եղբայրը  
 ծառի մը դագաթէն քաղած էր Այդ պտուղը:  
 Յետոյ Բօլը կը հրաւիրէր պարել անոնց հետ:  
 Վիրժինի չէր ձգեր որ անոնք մեկնէին, մինչեւ  
 որ մասնակից չըլլային իր ընտանիքին ուրա-  
 խութեան:

— Մարդ երջանիկ կ'ըլլայ այն ատեն, երբ ուրիշ-  
 ներու երջանկութեամբ կը զբաղի, կ'ըսէր Վիրժինի:

Երբ անոնք մեկնելու կը պատրաստուէին,  
 Վիրժինի կը հրաւիրէր որ հետերնին տանին բո-  
 լոր այն բաները, որոնք հաճոյ կը թուէին, ու  
 այդ նուէրներուն նորութիւնը և տարօրինակու-

Թիւնը պատրուակելով՝ կ'ուզէր սքողել անոնց  
անհրաժեշտութիւնը: Երբ կը տեսնէր որ անոնց  
հագուստները գճգճուած էին, մօրը հաճութեամբ  
կը զատէր իր զգեստներէն մէկ քանին, ու Բօ-  
լի կը յանձնէր, որպէս զի գաղտնապէս անոնց  
տնակներու դրան առջեւ դնէ զանոնք: Ուրեմն  
աստուածութեան պէս բարիք կը գործէր, բա-  
րերարը ծածկելով ու բարեգործութիւնը ցոյց  
տալով:

Դուք, Եւրոպացիներդ, մանկութեան հասա-  
կէն՝ երջանկութեան հակառակ նախապաշարում-  
ներով մտքերն իդ լեցուած, չէք կրնար  
ըմբռնել թէ բնութիւնը ո՛րքան իմաստու-  
թիւն ու հաճոյք կը պարգեւէ: Ձեր հոգին,  
մարդկային ծանօթութիւններու փոքր շրջանա-  
կին մէջ ամփոփուած, շուտով կը հասնի արհես-  
տական հրճուանքներու վերջնակէտը: Բայց  
բնութիւնը և սիրտը անսպառ են: Բօլ ու Վիր-  
ժինի ոչ ժամացոյց ունէին, ոչ օրացոյց և ոչ  
ալ ժամանակարգական, պատմական ու փիլիսո-  
փայական գրքեր: Իրենց կեանքի շրջանները  
կը կանոնաւորէին բնութեան շրջաններուն հա-  
մաձայն: Յերեկուան ժամերը կը հասկնային ծա-  
ռերու ստուերէն, եղանակները՝ իրենց ծաղիկ-  
ներէն ու պտուղներէն, իսկ տարիները՝ իրենց  
հունձքերէն: Այս քաղցր պատկերները մեծ հրա-  
պոյր մը կ'ընծայէին անոնց խօսակցութիւն-  
ներուն:

— Ճաշի ատեն է, կ'ըսէր Վիրժինի ընտա-  
նիքին, պանանենիներու ստուերները բուններուն  
տակ կը գտնուին, և կամ կ'ըսէր. գիշերը կը  
մօտենայ, հնդկարմաւենիներու տերեւները կը  
կճկուին:

— Ե՞րբ պիտի գաս մեզ տեսնելու, կ'ըսէին  
դրացի մէկ քանի բարեկամուհիներ:

— Շաքարեղէց քաղած ատեննիս, կը պա-  
աստասանէր Վիրժինի:

— Ձեր այցելութիւնը աւելի քաղցր ու ա-  
ւելի հաճոյ պիտի ըլլայ, կը պատասխանէին  
թարմատի աղջիկները:

Երբ իր և Բօլի տարիքը հարցնէին, դեռատի  
աղջիկը կ'ըսէր. «Եղբայրս աղբերակին քով գրտ-  
նուող մեծ հնդկընկուզենիին տարիքը ունի, իսկ  
ես՝ փոքրիկ հնդկընկուզենիին տարիքը: Իմ  
ծնունդէս ի վեր, հնդկատանձենիները տասերկու  
անգամ պտուղ տուած են, իսկ նարնջենիները՝  
քսանըչորս անգամ ծաղիկ»:

Կարծես թէ անոնց կեանքը զօդուած էր  
ծառերուն, շահապետներու և յաւերժահարսերու  
կեանքին պէս: Իբր պատմական դարաշրջան՝ կը  
ճանչնային իրենց մայրերուն կեանքը միայն,  
իբր ժամանակագրութիւն՝ իրենց մրգաստաննե-  
րուն կեանքը, իբր փիլիսոփայութիւն՝ ամէնուն  
բարիք ընել և Սստուծոյ կամքին համակերպիլ:

Մնաց որ, այդ երիտասարդները ի՞նչ պէտք  
ունէին հարուստ ու գիտուն ըլլալու, մեր հաս-  
կցած եղանակով: Իրենց պէտքերուն և տգի-  
տութեան շնորհիւ երջանկութիւննին կ'աւել-  
նար: Ամէն օր իրարու կ'օգնէին կամ քանի մը  
ծանօթութիւններ կը հաղորդէին. բայց այդ  
ծանօթութիւններուն մէջ սխալներ սպըր-  
դելու պարագային՝ անբիծ մարդը չի վախ-  
նար, վտանգաւոր սխալներ չգործելուն համար:  
Սյսպէս կը մեծնային բնութեան այդ երկու  
զաւակները: Ո՛չ մէկ հոգ չէր կնճռտեր անոնց

ճակատը. ո՛չ մէկ անժուժկալուծիւն ապականած  
չէր անոնց արիւնը. ո՛չ մէկ չարաշուք կիրք չէր  
եղծած անոնց սիրտը. սէրը, անմեղուծիւնը,  
գուժը ամէն օր անոնց հոգիին գեղեցկուծիւնը  
անձառ շնորհներով ի յայտ կը բերէին դիմագ-  
ծերուն, կեցուածքին ու շարժումներուն մէջ:  
Կեանքի առաւօտուն մէջ գտնուող այդ տղաքը  
անոր թարմուծիւնը ունէին: Ինչպէս մեր նա-  
խածնողքը եղեմական դրախտին մէջ երեւցան  
իր ձեռակերտը Սատուծոյ, զիրար տեսան, իրա-  
րու մօտեցան ու նախ խօսակցեցան քոյր և եղ-  
քօր պէս, այնպէս ալ Վիրժինի հեղահամբոյր,  
համեստ ու ինքնավստահ էր, իսկ Բօլ ալ Ադամի  
նման առնական հասակ ունէր մանկական պար-  
զուծեան հետ:

Բօլ մերթ Վիրժինի հետ առանձին (հազար  
անգամ պատմած է ինծի), իր աշխատանքէն  
դարձին, կ'ըսէր անոր.

— Երբ յոգնած ըլլամ, քեզ տեսնելով յոգ-  
նուծիւնս կ'առնեմ: Երբ լերան բարձունքէն  
քեզ նշմարեմ սա ձորամէջին խորը, վարդի կո-  
կոնի մը պէս կ'երեւաս ինծի, մեր մրգաստան-  
ներուն մէջտեղ: Դէպի մեր մայրերու տունը  
յառաջացած պահուղ, իր ձագուկներուն վրայ  
վազող կաքաւ մը նուազ գեղեցիկ իրան մը ու  
նուազ թեթեւ քալուածք մը ունի: Թէեւ ծա-  
ռերուն մէջ աչքէ կը կորսնցնեմ քեզ, բայց ետիս  
դառնալու պէտք չունիմ, քեզ գտնելու համար.  
Քու էուծեմէդ չեմ գիտեր ինչ մը ինծի կը միանայ  
այն օդին մէջ, ուրկէ կ'անցնիս, ու այն խոտին  
վրայ ուր կը նստիս: Երբ քեզի մօտենամ, բոլոր  
զգայարանքներս կը յափշտակուին: Երկնքին  
կապոյտը քու աչքերուդ կապոյտէն նուազ աղ-

ուոր է, Պէնկալեան սարեկիկներուն երգը նուազ  
քաղցրալուր՝ քան քու ձայնդ: Երբ մատիս ծայ-  
րովը միայն քեզի դպչիմ, մարմինս ամբողջ կը  
սարսռայ հաճոյքէս: Յիշէ՛ այն օրը, ուր Եռաս-  
տինի գետին թաւալուն գայլախաղերուն մէջէն  
անցանք: Անոր եզերքը հասած ատենս շատ յոգ-  
նած էի արդէն. բայց երբ կոնակս առի քեզ,  
այնպէս կը թուէր ինձի թէ թռչունի թեւեր ու-  
նէի: Ըսէ՛ ինձի, ի՞նչ հմայքով դիւթեցիր զիս:  
Քու խելքո՞վդ. բայց մեր մայրերը մենէ աւելի խելք  
ունին: Գգուանքներո՞վդ. բայց անոնք աւելի յա-  
ճախ կ'ողջագուրեն զիս: Կարծեմ քու բարու-  
թեանդ համար է: Բնաւ չպիտի մոռնամ որ դուն  
բոկոտն քալեցիր մինչեւ Ռիվիէր-Նուար, փա-  
խստական խեղճ գերուհիի մը ներումը խնդրելու  
համար: Սիրելիս, ա՛ն սա կիտրոնենիի ծաղկա-  
փթիթ ճիւղը, զոր քաղած եմ անտառէն, գիշերը  
անկողնիդ քով պիտի դնես զայն: Ճաշակէ՛ սա  
մեղրախորիսիսը, զոր ապառաժի մը բարձունքէն  
խլած եմ: Բայց նախ կուրծքիս վրայ հանգչէ՛,  
որպէս զի յոգնութիւնս առնեմ:

Վիրժինի անոր կը պատասխանէր.

— Ո՞վ իմ եղբայրս, առտուն, սա ժայռե-  
րուն բարձունքին վրայ սփռուած ճառագայթնե-  
րը քու ներկայութենէդ աւելի նուազ բերկրանք  
կը պատճառեն: Շատ կը սիրեմ մայրս ու քու մայրդ,  
բայց ա՛լ աւելի կը սիրեմ զանոնք, երբ «գա-  
ւակս» կը կոչեն քեզ: Ես աւելի կ'ազդուիմ քեզի  
ընծայուած գգուանքներէն քան թէ իմ ընդու-  
նած գգուանքներէս: Ինձի կը հարցնես թէ ին-  
չո՞ւ կը սիրես զիս, չե՞ս գիտեր որ իրարու հետ  
մեծցողները զիրար կը սիրեն: Տե՛ս սա թռչուն-  
ները. միեւնոյն բոյներուն մէջ մեծցած՝ մեզի



Maurice Iyloir





պէս դիրար կը սիրեն: Մտիկ ըրէ՛, ինչպէս իրա-  
րու ձայն կուտան ու մէկ ծառէն միւսը կը պա-  
տասխանեն: Նոյնպէս, երբ լերան բարձունքէն լսեմ  
սրինգիդ վրայ նուագած եղանակներուդ արձա-  
գանդը, ես լեռնաձորին խորը կը կրկնեմ խօսքերը:  
Դուն սիրելի եղած ես ինձի մանաւանդ այն օրէն  
ի վեր երբ կ'ուզէիր ինձի համար կռուիլ գերիին  
տիրոջ հետ: Այն օրէն ի վեր, յաճախ ինքնիրենս  
ըսած եմ. «Ա՛հ, եղբայրս բարի սիրտ ունի, եթէ  
ան չըլլար՝ վախէս կը մեռնէի: Ես ամէն օր կ'ա-  
ղօթեմ մօրս, քու մօրդ և մեր խեղճ ծառանե-  
րուն համար: Բայց երբ քու անունդ կ'արտա-  
սանեմ, ինձի այնպէս կը թուի որ բարեպաշտու-  
թիւնս կ'աւելնայ: Աստուծմէ թախանձագին կը  
խնդրեմ որ փորձանքի մը չմատնուիս: Ինչո՞ւ  
այնքան հեռուն կ'երթաս ու այնքան բարձր տե-  
ղերը կ'ելլես, պտուղներ և ծաղիկներ բերելու  
համար ինձի: պարտէզին մէջ բաւական պտուղ-  
ներ և ծաղիկներ չկա՞ն միթէ: Տե՛ս, որքա՞ն յոգ-  
նած ես ու քրտինքի մէջ կը լողաս:

Վիրժինի իր փոքր և ճերմակ թաշկինակով  
կը սրբէր Բօլի ճակատը և այտերը ու քանիցս  
կը համբուրէր զայն:

Սակայն ատենէ մը ի վեր, անծանօթ հիւան-  
դութեամբ մը կը տառապէր Վիրժինի: Իր կա-  
պոյտ ու գեղեցիկ աչքերը կճերանգ սեւութիւն  
մը ունէին. դէմքին գոյնը գեղնած էր. ամբողջ  
մարմինը դալուկի մատնուած էր: Ոչ պայծառու-  
թիւն կը տեսնուէր իր ճակատին վրայ, և ոչ ալ  
ժպիտ՝ իր շրթունքներուն ծայրը: Յանկարծ կը  
զուարթանար՝ առանց ուրախութեան, ու կը  
տխրէր՝ առանց վշտի: Ան կը խօսափէր իր ան-  
մեղ խաղերէն, քաղցր աշխատանքներէն ու իր

սիրեցեալ ընտանիքին ընկերակցութենէն : Բնակարանին շուրջը, ամէնէն ամայի վայրերը կը թափառէր, ամէն տեղ հանգիստ փնտոնելու համար, զոր չէր գտներ, սակայն : Մերթ, Բօլը տեսնելուն պէս, անոր վրայ կը վազէր ցնծազին . յետոյ յանկարծ, մօտեցած պահուն, յեղակարծ վըրդովուժով, իր գունատ աչտերը կրակի պէս կը կարմրէին ու իր աչքերը կը թառէին անոր աչքերուն վրայ : Բօլ կ'ըսէր ազջկան .

— Տե՛ս, դալարիքով ծածկուած են սա ժայռերը . մեր թռչունները կ'երգեն՝ քեզ տեսնելուն պէս . ամէն ինչ զուարթ է քու շուրջդ, ու զուն միայն տխուր ես :

Բօլ կ'ողջագուրէր զայն, ջանալով ոգեւորել, բայց վիրթիւնի գլուխը անդին կը դարձրնէր ու գէպի մայրը կը դառնար դողդոջուն : Եղբօր դգուանքները վրդովում կը պատճառէին տարաբախտ ազջկան : Բօլ բան մը չէր հասկնար այդ նոր ու տարօրինակ քմայքներէն :

Բայց չարիքները իրարու կը յաջորդէին :

Սոյն կղզիին մէջ ալ իր աւերը սփռեց այն ամառներէն մէկը, որ մերթ կ'աւերէ արեւադարձային երկիրներու միջեւ հաստատուած երկրամասերը : Դեկտեմբերին վերջերն էր, երբ այժեղ ջիւր կենդանակերպին մէջ գանուող արեւը երեք շաբաթ Իլ-տը-Ֆրանսը կը տաքցնէ իր ուղղածից ճառագայթներով : Հարաւ-արեւելեան քամին, որ հոն կը փչէ գրեթէ ամբողջ տարին, այլեւս դադրած էր : Փոշիէ ձիւ յորձանքներ կը բարձրանային ճամբաներուն վրայ ու առկախ կը մնային օդին մէջ : Հողը կը ձեղքրատէր ամէն տեղ, խոտը կը խանձէր, լեռներու կողերէն դուրս կուգային տաք արտաբուլումներ, ու

անոնց վտակները կը ցամքէին մեծ մասամբ : Ոչ  
մէկ ամպ ծովուն կողմէն : Միայն ցերեկ ատեն ,  
շիկագոյն գոլորշիներ կը բարձրանային դաշտա-  
գետիններուն վերև , ու արեւու մայրամուտքին  
մէջ կ'երեւային հրդեհի մը բոցերուն պէս : Գի-  
շերն ալ զովութիւն տաաջ չէր բերեր հրակէզ  
մթնոլորտին մէջ : Լուսնին կարմրած գունդը  
մշուշապատ հորիզոնի մը վրայ կը բարձրանար  
տարապայման մեծութեամբ մը : Բլուրներու կո-  
ղերուն վրայ փռուած հօտեր , վիզերնին դէպի  
երկինք , օդ կը ծծէին ու տխուր բառաչիւններով  
կը թնդացնէին ձորակը : Ոչխարները առաջնորդող  
Քաֆրը հողին վրայ կը պառկէր , զովանալու հա-  
մար . բայց ամէն տեղ հողը կ'այրէր կը մրկէր ,  
ու հեղձուցիչ օդը միջատներու բզզիւններով կը  
լիցուէր , որոնք կը ջանային իրենց ծարաւը յա-  
գեցնել մարդոց և անասուններու արիան մէջ :

Այդ տօթագին գիշերներէն մէկը , Վիրժինի  
զգաց որ իր հիւանդութեան ախտանշանները կը  
սաստկանան : Անկողնէն կ'ելլէր , կը նստէր ու  
դարձեալ կը պառկէր , առանց քուն ու հանգիստ  
գտնելու . և է դիրքի մէջ : Վիրժինի լուսնկա-  
յին տակ յառաջացաւ դէպի իր սղբիւրը : Հակա-  
ռակ երաշտութեան , ալը արծաթագոյն նրբա-  
ցայտումով մը կը հոսէր ապառաժին թուխ կողե-  
րուն վրայ : Աղբիւրին աւաղանին մէջ մտաւ ան :  
Նախ ջուրին զովութիւնը ողեւորեց զգայարանք-  
ները , ու հաղարումէկ հաճելի յիշատակներ ար-  
թնցան մտքին մէջ : Յիշեց թէ իր մանկութեան  
օրերուն , մայրը և Մարկրիթ կը զուարճանային  
զինքը լողցնելով միեւնոյն վայրին մէջ . յետոյ  
Բօլ այդ լողանքը առանձին բնելով ջուրին յա-  
տակը փորած ու աւաղով ծածկած էր , և եղերք-

ներուն վրայ անուշաբոյր խոտեր տնկած էր :  
Վիրժինի հիմա իր մերկ ուսերուն և լանջքին  
վրայ կը նշմարէր ցոլքերը երկու արմաւենիներ  
ընդ, որոնք իր և իր եղբօր ծննդեան ատեն տըն-  
կուած էին . այդ ծառերը իր գլխուն վերեւ կը  
շաղապատէին թրեկնց դալարագեղ ոստերը և դեռա-  
հաս պտուղները :

Վիրժինի կը խորհէր Բօլի բարեկամութեան  
վրայ, որ աւելի քաղցր էր քան անուշահոտու-  
թիւնները, աւելի վճիտ՝ քան աղբերակներուն  
ջուրը, աւելի զօրաւոր՝ քան բոլոր արմաւենիներ  
ընդ : Ու Վիրժինի հառաչանք մը արձակեց : Ան  
գիշերուան և մենութեան վրայ կը խորհէր,  
ու լափող տաքութիւն մը կը տոչորէր զինքը :  
Իսկոյն դուրս ելաւ այդ վտանգաւոր հովանո-  
ցակներէն, այրեցեալ դօտիի արեւէն աւելի հրա-  
կէզ ջուրերէն : Վիրժինի իր մօր քով վազեց,  
անոր աջակցութիւնը խնդրելու համար : Քանիցս  
ուզեց իր վիշտերը պատմել մօրը, ու անոր ձեռքերը  
սեղմեց իր ձեռքերուն մէջ . քանիցս քիչ մնաց որ  
Բօլի անունը արտասանէր, բայց ճնշուած սիրտը  
արգելք եղաւ լեզուին արտայայտութեան . գլու-  
խը մայրական ծոցին վրայ դրաւ ու արցունք-  
ներով ողորկեց զայն :

Տիկին տը Լա Թուր իր աղջկան հիւանդու-  
թեան պատճառը կը հասկնար, բայց չէր համար-  
ձակեր խօսիլ անոր վրայ :

— Աղջի՛կս, կ'ըսէր մայրը, Աստուծոյ ա-  
պաւինէ՛ . ան միայն առողջութիւն ու կեանք կը  
պարգեւէ : Այսօր քեզ կը փորձէ, վաղը վարձատ-  
րելու համար : Խորհէ որ աշխարհ եկած ենք, առա-  
քինութիւն դործելու համար :

Սակայն այդ մաստիկ տաքերուն հետեւան-

քով՝ ովկէանոսէն գոլորշիներ բարձրացան ու  
կղզին ծածկեցին լայնատարած հովանոցի մը պէս ։  
Լեռներու գագաթները իրենց շուրջը կը ժողվէին  
այդ գոլորշիները , ու կրակի երկայն ակօսներ  
մերթ կը խոյանային անոնց մշուշապատ սարե-  
րէն ։ Եւ անա , սոսկալի շանթեր իրենց որոտում-  
ներով թնդացուցին անտառները , դաշտագետին-  
ները ու ձորակները . երկինքէն տեղացին զար-  
հուրելի անձրեւներ՝ ջրվէժներու հանգոյն ։  
Փրփրադէղ հեղեղներ կը գահավիժէին այդ  
լեռան կողերէն վար . լեռնաձորին յատակը  
ծով մը դարձած էր , ու այն սարահարթը , ուր  
հաստատուած էին խրճիթներ , կղզեակի մը փոխ-  
ուած էր , իսկ այդ ձորակին մուտքը՝ փակոց  
մը , ուր հողերը , ծառերը և ժայռերը կը  
խուժէին խառնիխուռն , մոնչող ջուրերուն հետ  
միասին ։

Ամբողջ ընտանիքը դողերու մատնուած՝ Աս-  
տուծոյ կ'աղօթէր Տիկին տը Լա Թուրի հիւղա-  
կին մէջ , որուն տանիքը զարհուրելիօրրէն կը  
ճարձատէր հովին ճնշումին տակ ։ Թէեւ դուռը և  
արտափեղկերը լաւ դոցուած էին , սակայն հոն  
գտնուող բոլոր առարկաները կը զանազանուէին  
տախտակներու կցուած քներուն մէջէն , ուժգին  
և յաճախադէպ փայլատակումներուն շնորհիւ ։  
Հակառակ փոթորկին կատաղութեան , անվեհեր  
Բօլ իր հետ ունենալով Տօմինկը , մէկ խրճիթէն  
միւսը կ'երթար , հոս նեցուկ մը կը դնէր պատին ,  
հոն ցից մը կը դարնէր . իսկ տուն վերադարձին՝  
կը մխիթարէր ընտանիքը , յոյս յայտնելով որ  
ընդհուպ օդը պիտի գեղեցկանար ։ Արդարեւ , ի-  
րիկուան դէմ գողրեցաւ անձրեւը , հարսու-արե-  
ւելեան կանոնաւոր հովը սկսաւ փչել սովորակա-

նին պէս, փոթորկալից ամպերը դէպի հիւսիս-  
արեւմուտք նետուեցան, ու մայրամուտ արեւը  
երեւցաւ հորիզոնին վրայ:

Վիրժինիի առաջին բաղձանքը եղաւ իր հան-  
դստավայրը տեսնել դարձեալ: Բօլ երկչոտ երե-  
ւոյթով մը մօտեցաւ անոր, ու թեւը երկարեց,  
որպէսզի իր օգնութեամբ քալէ ան: Վիրժինի  
ժպտադին ընդունեց զայն, ու խրճիթէն դուրս  
ելան միասին: Օդը զով էր ու թրթռուն: Սպի-  
տակ ծուխեր կը բարձրանային կատարներուն  
վրայ լերան, որ հոս հոն ակօսուած էր ամէն  
կողմ ցամքած հեղեղներու փրփուրովը:

Իսկ պարտէզը տակնուվրայ եղած էր ահա-  
զին հեղեղներէն. պտղատու ծառերը մեծ մասամբ  
արմատախիլ եղած էին. աւազի մեծ դէզեր կը  
ծածկէին մարդօգետիններու եզերքները ու  
կը լեցնէին Վիրժինիի աւազանը: Սակայն երկու  
մշկընկուղենիները կանգուն կը մնային, միշտ դա-  
ւարազեղ: Բայց շրջականները չէին դռնուեր ո՛չ  
մարմանդ, ոչ հովանուտ ծառ, ոչ թռչուն, բացի  
քանի մը պէնկալիկներէ, որոնք մօտակայ ժայ-  
ռերու գաղաթը կ'եզերերդէին իրենց ձագերուն  
կորուստը: Այդ աւերումին ի տես, Վիրժինի ը-  
սաւ Բօլի.

— Դուք թռչուններ բերիք հոս, բայց մրիկը  
սպաննեց զանոնք: Չեր ձեռքով տնկած պարտէզը  
քանդուեցաւ: Աշխարհի մէջ ամէն ինչ կը կոր-  
սուի. երկինք միայն անսասան կը մնայ:

Բօլ պատասխանեց.

— Ափսո՛ս որ չեմ կրնար երկնային բան մը  
ընծայել քեզի, բայց ես երկրին վրայ ալ բան  
մը չունիմ:

Վիրժինի կարմրելով յարեց.

— Բայց դուք Ս. Պօղոսի պատկերը ունիք ։  
Վիրժինի իսկոյն իր մօր հիւղակը վազեց ,  
պատկերը բերելու համար ։ Ճգնաւոր Բօլը ներ-  
կայացնող մանրանկար պատկեր մըն էր ։ Մար-  
կրիթ շերմադին կը պաշտէր զայն ։ Երկար ատեն  
վիզէն կախած էր զայն՝ աղջիկնութեան ատեն ,  
իսկ մայր ըլլալէն յետոյ՝ տղուն վիզէն կախած  
էր ։ Յղութեան ատեն ամէնուն կողմէ լքուած  
Մարկրիթ այդ երանելի ճգնաւորին պատկերը  
այնքան դիտած էր որ իր զաւակը անոր կը նմա-  
նէր գրեթէ ։ Ահա ինչո՛ւ , Մարկրիթ որոշած էր  
այդ ճգնաւորին անունով կոչել իր զաւակը և  
անոր պաշտպան ընծայել սուրբ մը , որ մարդոց-  
մէ հետո ապրած էր , մինչ այդ մարդիկը խա-  
բած էին մանկամարդ կինը , յետոյ լքելու համար  
զայն ։ Վիրժինի այդ փոքրիկ պատկերը Բօլի  
ձեռքէն առած պահուն յուղումնալից շեշտով մը  
ըսաւ ։

— Եզրա՛յրս , ո՛րքան ատեն որ ապրիմ իմ  
քովս պիտի մնայ պատկերը , ու ես երբեք  
չպիտի մոռնամ որ դուն ինծի տուիր աշխարհի մէջ  
ունեցած միակ բանդ ։

Բօլ ուզեց ողջագուրել Վիրժինին , տեսնելով  
որ բարեկամական շեշտ մը կը գործածէր ան , ու  
ընտանութիւն և գուրգուրանք ցոյց կուտար  
դարձեալ , ինչ որ չէր յուսացած բնաւ ։ Բայց  
թոշունի մը պէս թեթեւաշարժ , հեռացաւ , Բօլը  
ապշահար թողլով , որ բան մը չէր հասկնար այդ  
տարօրինակ ընթացքէն ։

Սակայն Մարկրիթ կ'ըսէր Տիկին տը Լա  
թուրի ։

— Ինչո՞ւ չենք ամուսնացնել մեր զաւակ-  
ները ։ Մայրայեղ սէր մը ունին իրարու հանդէպ ,



թէ եւ տղաս տակաւին չի նշմարեր այդ բանը :  
Երբ բնութիւնը խօսի իր մէջը , ի գուր պիտի ըլ-  
լայ մեր հսկողութիւնը անոնց վրայ . այն ատեն  
ամէն բանէ կը վախցուի :


Տիկին տը Լա Թուր պատասխանեց .

— Եստ երիտասարդ և շատ չքաւոր են ա-  
նոնք : Մենք ո՛րքան վիշտ պիտի զգայինք , եթէ  
երբեք Վիրժինիի ծնելիք զաւակները թշուառ  
ըլլային ու ինք թերեւս ուժ չունենար զանոնք  
խնամելու : Քու սեւամորթ Տօմինկդ ծերութենէն  
ուժասպառ եղած է . Մանի հիւանդոտ է , ու ես ալ  
շատ տկարացած կը զգամ ինքզինքս , տասը տա-  
րիէ ի վեր : Մարդ շուտով կը ծերանայ տաք եր-  
կիրներուն մէջ , իսկ ա՛լ աւելի շուտ կը ծերա-  
նայ , երբ վիշտը կրճէ զինքը : Բօլն է մեր միակ  
յոյսը : Սպասենք որ տարիներու ընթացքին՝  
կազմաւորուի իր մարմինը , ու կարենայ մեզի օգ-  
նել իր աշխատութեամբ : Ինչպէս յայտնի է , օրը  
օրին կ'ապրինք հիմա : Բայց եթէ Բօլը Հնդկաստան  
դրկենք ատենի մը համար , ան պիտի կրնայ ա-  
ռուտութեամբ զբաղիլ և բաւական դրամ շահիլ , քա-  
նի մը գերիներ գնելու համար . վերադարձին՝  
Վիրժինիին հետ կ'ամուսնացնենք զայն . որով-  
հետեւ ես կը կարծեմ որ քու Բօլ զաւակէդ զատ  
ոչ ոք կրնայ երջանկացնել իմ սիրասունն աղջիկս :  
Այդ խնդրին վրայ կը խօսինք մեր գրացիին  
հետ :

Արդարեւ , երկու կիները խորհուրդ հարցու-  
ցին ինծի , ու ես համակարծիք գտնուեցայ :

— Հնդկաստանի ծովերը աղւոր են , ըսի :  
Նպաստաւոր եղանակի մը մէջ ճամբորդութիւն  
մը առ առաւելն վեց շաբաթ կը տեւէ . նոյնքան  
կը տեւէ վերադարձը : Մեր թաղին մէջ անգըր-





ճովեայ ապրանք պիտի հայթայթենք Բօլիւն, որ  
դրացիներու կողմէ շատ կը սիրուի: Բօլի պիտի  
տանք չքանուած բամպակ, որ մեզի անպէտ է,  
մաքրելու աղօրիք չունենալնու համար, ինչ-  
պէս նաև երենոս, փայտ մը զոր կը վառենք, առատ  
ըլլալուն, ու քանի մը տեսակ ռետիններ, մեր  
անտառներուն մէջ փճանալու դատապարտուած.  
բոլոր այս այս ապրանքները լաւ կը ծախուին  
Հնդկաստանի մէջ, թէև հոս անօգուտ ըլլան  
մեզի:

Ես Պ. տը Պուրտօնէէն պիտի խնդրէի նա-  
ւարկութեան արտօնագիր մը Բօլի ճամբորդու-  
թեան համար, բայց նախապէս ուղեցի տղուն  
իմաց տալ: Սակայն ո՛րքան մեծ եղաւ իմ զար-  
մանքս, երբ պատանին ողջմտութեամբ ըսաւ ին-  
ծի, ինչ որ իր տարիքէն շատ վեր բան մըն էր:

— Ինչո՞ւ կ'ուզէք որ ընտանիքս ձգեմ, չեմ  
գիտեր ի՛նչ հարստութեան ծրարի համար: Աշ-  
խարհի վրայ կա՞յ առուտուր մը, աւելի շահարե-  
քան դաշտի մը մշակութիւնը, որ մէկին գէմ  
յիսուն և հարիւր արդիւնք կուտայ: Եթէ երբեք  
կ'ուզենք առուտուր ընել, չե՞նք կրնար քաղաք  
տանիլ հոստեղի աւելորդ բաները ու ծախել. ես  
այն ատեն պէտք չպիտի ունենամ մինչև Հնդ-  
կաստան վաղելու: Մեր մայրերը կ'ըսեն թէ Տօ-  
մինի ուժասպառ և ձեր է. բայց ես երիտասարդ  
եմ ու ամէն օր կ'ուժովնամ: Իմ բացակայու-  
թեանս՝ փորձանք մը պիտի հասնի անոնց գրլ-  
խուն, մանաւանդ վերժինիին, որ տկար է ար-  
դէն: Օ՛հ, ո՛չ, ո՛չ, չեմ կրնար անոնցմէ բաժ-  
նուելու որոշում տալ:

Բօլի պատասխանը մեծ շփոթութեան մատնեց  
զիս, որովհետև Տիկին տը Լա Թուր ինէ չէր

ծածկած Վիրժինին վիճակը և այն փափագը զոր  
ինքն ունէր, իրարմէ հեռացնելու համար երկու  
տղաքը, մինչև որ մէկ քանի տարու աւելի մեծ  
ըլլային անոնք: Ես չէի ուզեր Բօլի իմացնել այս  
չարժատիթները:

Այս միջոցին, Փրանսայէն հասած նաև մը  
բերաւ նամակ մը, որ Տիկին տը Լա Թուրի ուղ-  
ղուած էր հօրաքրոջմէն: Այս վերջինը մահուան  
երկիւղին մատնուած էր, առանց որու չեն կրնար  
զգայուն դառնալ խստասիրտ մարդիկ: Հիւժուով  
փոխուած ծանր հիւանդութենէ մը նոր ելած էր  
ան, հիւանդութիւն մը որ անբուժելի էր իր  
տարիքին բերումով: Ան իր նամակին մէջ եղբօր  
աղջկան կը պատուիրէր Փրանսա վերադառնալ:  
Իսկ եթէ իր առողջական վիճակը չէր ներեր այդ-  
քան երկար ճամբարդութիւն մը ընելու, կը  
յանձնարարէր Վիրժինին դրկել, որպէսզի լաւ  
կրթութիւն մը տար անոր, արքունիքէն մէկուն  
հետ ամուսնացնէր զայն ու իր բոլոր ինչքերը  
անոր թողուր: Հօրաքոյրը կ'աւելցնէր թէ ուրիշ  
բարիքներ ալ պիտի ընէր, եթէ իր հրամաններուն  
անսային:

Այս նամակը ընտանիքին մէջ կարդացուելուն  
պէս՝ արտաբեկութեան մատնուեցան ամէնքն ալ:  
Տօմինկ և Մանի սկսան արտասուել: Բօլ ապշու-  
թենէն անշարժացած, զայրանալու տրամադիր  
կ'երեւար: Վիրժինի աչքերը իր մօր վրայ սեւե-  
ռուն, չէր համարձակեր բառ մը իսկ արտասրել:

— Կրնա՞ք մենէ բաժնուիլ, ըսաւ Մարկրիթ,  
խօսքը Տիկին տը Լա Թուրի ուղղելով:

— Ոչ, բարեկամուհիս, ոչ, զաւակներս,  
յարեց Տիկին տը Լա Թուր: Երբեք ձեռնէ չպիտի  
բաժնուիմ: Չեղի հետ ապրեցայ, ու կ'ուզեմ ձե-

զի հետ մեռնիլ : Ձեր բարեկամութեան մէջ գտայ  
երջանկութիւնը : Հին վիշտերս պատճառ եղան  
որ առողջութիւնս խանգարուի : Ծնողքիս խստու-  
թիւնը ու սիրելի ամուսնիս կորուստը խոցեցին  
սիրտս : Բայց այնուհետեւ ա՛լ աւելի մխիթա-  
բանք և երանութիւն վայելեցի այս խեղճուկ  
խրճիթներուն քան իմ հայրենիքիս մէջ, ուր այդ  
վայելքը ինձի չընծայեցին ընտանիքիս ճոխու-  
թիւնները :

Այս խօսքերը ուրախութեան արցունքներ  
հոսեցուցին ամենուն աչքերէն : Բօլ իր թեւե-  
րուն մէջ սեղմելով Տիկին տը Լա Թուրը, ըսաւ .

— Ես ալ ձենէ չպիտի բաժնուիմ : Հնդկաս-  
տան չպիտի երթամ : Սիրելի մայրիկ, ամէնքս  
ալ ձեզի համար պիտի աշխատինք : Ոչ մէկ բանի  
պակասը պիտի զգաք մեր քով :

Հոն գտնուողներէն Վիրժինի միայն շատ ու-  
րախացաւ, բայց ամէնէն քիչ յայտնի ըրաւ իր  
ուրախութիւնը : Օրուան մնացեալ մասը Վիրժի-  
նի քաղցր զուարթութեամբ մը անցուց, ու  
ամէնքն ալ շատ գոհ մնացին, տեսնելով որ դե-  
ռատի աղջիկը հանգարտած էր նորէն :

Յաջորդ օրը, արեւածագին, երբ իրենց սո-  
վորութեան համաձայն՝ ամէնքը միասին առտուան  
աղօթքը կ'ընէին նախաձաշէն առաջ, Տօմինկ ի-  
մաց տուաւ որ ձի հեծած պարոն մը երկու դերի-  
ներու հետ դէպի բնակարան կը յառաջանար :  
Պ. տը Լա Պուրտօնէն էր : Երբ այս վերջինը հիւ-  
ղակ մտաւ, ամէն ոք սեղան նստած էր : Տեղա-  
կան սովորութեան համաձայն, Վիրժինի սեղան  
բերած էր ջուրով եփուած բրինձ : Ասկէ զատ՝  
հրամցուցած էր տաք բաթաթէսներ և թարմ  
պանաններ : Իբր անօթ կը դորձածուէին կէս

կտրուած կօշեր, իսկ իբր սփռոց՝ պանանիներու տերեւներ: Կառավարիչը նախ զարմանքով տեսաւ այդ բնակարանին խեղճութիւնը: Յետոյ խօսքը Տիկին տը Լա Թուրի ուղղելով ըսաւ թէ հանրային գործերը երբեմն արգելք կ'ըլլային իրեն՝ խորհելու մասնաւորներու գործերուն վրայ, բայց պարտաւոր էր տիկնոջ վրայ խորհելու:

— Տիկին, յարեց կառավարիչը, դուք ազնուական ու շատ հարուստ հօրաքոյր մը ունիք Բարիզի մէջ. ան ձեզի կը վերապահէ իր հարստութիւնը, ու կը սպասէ որ իր քով երթաք:

Տիկին տը Լա Թուր կառավարչին պատասխանեց թէ իր խանգարուած առողջութիւնը թոյլ չէր տար որ այդքան երկար ճամբորդութիւն մը ընէր: Պ. տը Լա Պուրտօնէ աւելցուց.

— Այնքան թարմատի և այնքան սիրուն ձեր օրիորդ աղջկան հանդէպ՝ դէթ չէք կրնար անիրաւութիւն մը գործել ու զայն զրկել այդքան մեծ ժառանգութենէ մը: Ձենէ գաղտնի չպիտի պահեմ. ձեր հօրաքոյրը իշխանութեան գիւմած է, որպէսզի իր քով զրկուի օրիորդը: Պաշտօնապէս ինձի գրուած է որ ի հարկին իշխանութիւնս ի գործ դնեմ. բայց այս գաղութին բնակիչներու երջանկութեան համար է որ իշխանութիւն կը վարեմ հոս ու ձեր կամեցողութենէն կը սպասեմ քանի մը տարուան զոհողութիւն. ուրկէ կոխում ունին ձեր աղջկան ամուսնութիւնը ու ձեր աւրողը կեանքին բարօրութիւնը: Ինչո՞ւ համար կղզիները կուգան. հարստանալու համար. շատ աւելի հաճելի չէ՞ այդ հարստութիւնը գտնել իր հայրենիքին մէջ:

Պ. տը Լա Պուրտօնէ այս խօսքերը ընելէ յետոյ սեղանին վրայ դրաւ դահեկաններով

լեցուն տուպրակ մը զոր սեւամորթ մը բերած էր : Յետոյ յարեց .

— Անա՛ ձեր հօրաքրոջ կողմէ դրկուած դրամը ձեր օրիորդ աղջկան ճամբորդութեան ծախքերուն համար :

Յետոյ Պ. տը Լա Պուրտօնէ մեղմագին յանդիմանեց Տիկին տը Լա Թուրը, անձուկ վիճակին մէջ իրեն դիմած չըլլալուն համար, սակայն միեւնոյն ատեն դրուատեց տիկնոջ արիութիւնը : Բօլ իսկոյն խօսք առնելով ըսաւ կառավարչին .

— Պարո՛ն, մայրս ձեզի դիմեց, բայց գէշ ընդունելութիւն ըրիք անոր :

— Ուրի՞ զաւակ ունիք, տիկին, հարցուց Պ. տը Լա Պուրտօնէ :

— Ոչ, պարոն, յարեց Տիկին տը Լա Թուր . իմ բարեկամուհիս սղան է . ան և Վիրժինի մեր երկուքին զաւակները կը համարուին ու հաւասարապէս սիրելի են :

— Պատանի՛, ըսաւ կառավարիչը, Բօլի ուղղելով իր խօսքը, կեանքի փորձառութիւնը ձեռք բերելէ յետոյ պիտի հասկնաք պաշտօնի վրայ գտնուող մարդոց դժբախտութիւնը . այն ատեն պիտի ըմբռնէք թէ ո՛րքան դիւրին է նախապաշարել մարդոց միտքը, ու այս վերջիններն ալ ո՛րքան դիւրաւ բանսարկութիւն կը նկատեն բան մը որ ծածուկ արժանիք մը միայն ի յայտ կը բերէ :

Պ. տը Լա Պուրտօնէ սեղան նստաւ Տիկին տը Լա Թուրի քով, անոր կողմէ հրաւիրուելէ յետոյ : Ան գաղթածիններու պէս ճաշակեց ջուրին մէջ եփած բրինձով խահուէն : Կառավարիչը հիացաւ տնակին մէջ տիրող բարեկարգութեան ու մաքրութեան, այդ երկու սիրուն ընտանիք-



ներու միաբանութեան և անոնց ծերունի ծառաներու ցոյց տուած եռանդին վրայ :

— Ատաղձէ կարասիներ միայն կան հոս, ըսաւ կառավարիչը, բայց կարելի է նաև հոս գտնել պայծառ դէմքեր ու սկեղինիկ սրտեր :

Այն ատեն թօլ կառավարչին մտերմական շեշտէն հմայուած, ըսաւ .

— Կը փափագիմ ձեր բարեկամը ըլլալ, որովհետև դուք պարկեշտ մարդ մըն էք :

Պ. տը Լա Պուրտօնէ հաճոյքով լսեց կղզեբնակին այս սիրալիր արտայայտութիւնը, ողջագուրեց թօլը, անոր ձեռքը սեղմելով, ու վստահացուց թէ կրնար յոյս դնել իր բարեկամութեան վրայ :

Կառավարիչը ճաշէն յետոյ Տիկին տը Լա Թուրի հետ ունեցած առանձին տեսակցութեան մէջ ըսաւ թէ մօտ ատենէն առիթ մը պիտի ներկայանար, իր աղջիկը Ֆրանսա ղրկելու նաւով մը, որ մեկնելու կը պատրաստուէր. յետոյ յարեց թէ Վիրժինին պիտի յանձնէր իր ազգականուհիներէն մէկուն, որ այդ նաւով պիտի ճամբորդէր. հետեւաբար խորհուրդ տուաւ որ անփոյթ չգտնուի այդ անագին հարստութեան հանդէպ, քանի մը տարուան գոհունակութենէ մը չզրկուելու համար :

— Ձեր հօրաքոյրը չի կրնար երկու տարիէն աւելի ապրիլ, յարեց կառավարիչը, հրաժեշտ տոնելէ առաջ : Իր բարեկամները այդպէս պրած են ինծի : Բախտը ամէն օր չի ներկայանար : Լա խորհեցէք ըսածիս վրայ : Ուրիշներու խորհուրդին ալ դիմեցէք : Թոյր ողջամիտ մարդիկ ինծի համամիտ պիտի գտնուին :

Տիկինն տը Լա Թուր պատասխանեց թէ աշխարհի մէջ իր աղջկան երջանկութենէն զատ ուրիշ բան չէր բաղձար և թէ Վիրժինին դէպի Ֆրանսա մեկնու՛մը անոր կամքին պիտի ձգէր քոլորովին :

Ան բնաւ չէր նեղացած որ առիթ մը կը ներկայանար, ատենի մը համար իրարմէ բաժնելու Վիրժինին և Բօլը, պայմանաւ որ օրին մէկը ապահովէր անոնց փոխադարձ երջանկութիւնը : Ուստի աղջկան հետ առանձին գտնուած պահուն անոր ըսաւ .

— Աղջի՛կս, մեր ծառաները ծերացած են, Բօլ շատ երիտասարդ է տակաւին, Մարկրիթ տարիքը առած է, իսկ ես հիւանդ եմ. եթէ ես մեռնիմ՝ այս անապատին մէջ ի՞նչ պիտի ընէք, չքաւոր վիճակի մատնուած : Առանձին պիտի ստիպուիք վարձկանի մը պէս անդադար մշակել հողը ապրուստ ձարելու համար : Այս գաղափարը ցաւ կը պատճառէ ինձի :

Վիրժինի պատասխանեց .

— Աստուած մեզ դատապարտած է աշխատելու, իսկ դուք ինձի սորվեցուցած էք աշխատիլ ու ամէն օր օրհնել Աստուած : Մինչև հիմա մեզ լքած չէ սն, ու բնաւ չպիտի լքէ : Աստուածային Նախախնամութիւնը մասնաւորաբար կը հսկէ տարաբախաներուն վրայ : Մա՛յր, յաճախ այդպէս ըսած էք ինձի : Չեմ կրնար ձեռնէ բաժնուելու որոշում տալ :

Տիկինն տը Լա Թուր յուզումով յարեց .

— Ես մտադիր եմ քեզ երջանկայնել ու օրին մէկը Բօլի հետ ամուսնացնել, որ քու եղբայրդ

չէ բնաւ : Խորհէ՛ որ անոր բախտը քու կիսէդ  
կախում ունի :

Նորատի աղջիկ մը կը կարծէ թէ ոչ ոք իմա-  
ցած է իր սէրը : Աչքերուն վրայ կը դնէ սրտին  
մէջ ունեցած քօղը , բայց երբ բարեկամ ձեռք մը  
մէկդի առնէ այդ քօղը , այն ատեն իր սիրոյն  
թաքուն վիշտերը դուրս կը խուժեն , բացուած  
պատուարի մը մէջէն կարծես , ու մտերմական  
քաղցր զեղումներ կը յաջորդեն այն վերապա-  
հումներուն և գաղտնիքներուն , որով շրջապատ-  
ուած էր նախապէս : Իր մօր բարեսրտութեան  
հաւաստիքներուն հանդէպ զգայուն , վիրժինի  
պատմեց իր զգացումները , որ Աստուծմէ զատ ուրիշ  
վկայ չէին ունեցած . ըսաւ թէ նախախնամու-  
թիւնը իրեն կ'օգնէր յանձին գորովագութ մօր մը ,  
որ կը հաւանէր իր սիրոյն և զայն կ'առաջնոր-  
դէր , թէ հիմա իր մօրը ապաւինած էր , ուստի  
ամէն ինչ հրաւէր կը կարդար իրեն՝ մօրը քով  
մնալու , ներկային համար անհոգ ու ապագային  
համար աներկիւղ :

Տիկին տը Լա Թուր յարեց , տեսնելով որ իր  
սրտակցութիւնը ակնկալութեանը հակառակ ար-  
դիւնք տուած էր .

— Աղջիկս , չեմ ուզեր քեզ բռնադատել .  
ուզածիդ պէս խորհրդածէ , բայց քու սէրդ ծած-  
կէ՛ Բօլէն : Երբ աղջկան մը սիրտը գրաւուած է ,  
սիրահարը իրմէ խնդրելիք բան չունի այլեւս :

Իրիկուան դէմ , տիկինը իր աղջկան հետ առան-  
ձին գտնուած պահուն , կապոյտ պատմուճան  
մը հագած բարձրահասակ մարդ մը ներս մտաւ :



M. J. L. 1850



Կողմինն եկեղեցական միսիոնարը և Տիկինն տը  
լա թուրի ու Վիրժինիի խոստովանահայրն էր,  
կառավարչին կողմէ դրկուած :

— Չաւակնե՛րս, օրհնեա՛լ է Աստուած,  
հարստացաք, աշխուս, ըսաւ կրօնաւորը : Այսու-  
հետեւ կրնաք անսալ ձեր բարի սրտինն ու բարիք  
ընել աղքատներուն : Գիտեմ թէ Պ. տը Լա Պուր-  
տօնէ ի՛նչ ըսած է ձեզի և դուք ի՛նչ պատասխա-  
նած էք անոր : Բարի մայրիկ, առողջական վի-  
ճակնիդ կը ստիպէ ձեզ հոս մնալ, բայց դուք,  
մանկամարդ օրիորդ, ու է արդարացում չունիք :  
Պէտք է հնազանդիլ նախախնամութեան, մեր  
ձեր ազգականներուն, եթէ անոնք անիրաւ իսկ  
ըլլան : Չոհողութիւն մըն է, բայց Աստուծոյ  
հրամանը աս է : Ան իր կեանքը նուիրած է  
մեզի, ուստի անոր օրհնակին հետեւելով՝ պէտք  
է իր սնձը նուիրել՝ ընտանիքին բարիքին  
համար : Չեր Ֆրանսա ճամբորդութիւնը բարե-  
բաստի՛կ վախճան մը պիտի ունենայ : Չէ՞ք ու-  
զեր հոն երթալ, սիրելի օրիորդս :

Վիրժինի աչքերը խոնարհած, դողդոջուն  
ձայնով մը պատասխանեց .

— Եթէ աս է Աստուծոյ հրամանը, չեմ հա-  
կառակիր : Թո՛ղ Աստուծոյ կամքը կատարուի,  
ըսաւ Վիրժինի լալաղին :

Կրօնաւորը դուրս ելաւ, ու գնաց կառավար-  
չին պատմեց իրեն յանձնուած գործին մէջ ձեռք  
բերած յաջողութիւնը : Սակայն Տիկինն տը Լա  
թուր գիտուն հրաւիրեց Տօմինկի միջոցաւ,  
ինձի խորհուրդ հարցնելու համար Վիրժինիի  
մեկնումի մասին : Ես համակարծիք չգտնուեցայ  
անոր մեկնումին : Երջանկութեան մասին սա  
որոշ սկզբունքը ունիմ. պէտք է նախապատու-

Թիւն ընծայել բնութեան ընծայած պատեհու-  
թիւններուն քան թէ բախտին, ու մենք պէտք  
չէ որ դուրսը փնտռենք այն բանը զոր կրնանք  
մեր մէջը գտնել: Այս առածներուն համամիտ եմ  
ամէն բանի մէջ, առանց բացառութեան: Բայց  
չափաւորութեան մասին տուած իմ խորհուրդ-  
ներս ի՞նչ ազդեցութիւն կրնային գործել մեծ  
հարստութեան մը պատրանքներուն վրայ, ու իմ  
բնական պատճառաբանութիւնս՝ ընդդէմ աշխար-  
հի հախապաշարումներուն և Տիկին տը Լա Թու-  
րի նուիրական հեղինակութեան:

Այդ տիկինը պատշաճութեան համար միայն  
ինձի խորհուրդ հարցուց, ու իր խոստովանա-  
հայրին տուած որոշումէն յետոյ՝ այլ եւս չան-  
սաց ինձի: Նոյն իսկ Մարկրիթ առար-  
կութիւն չըրաւ այլեւս, թէեւ հախապէս շատ  
ընդդիմացած էր Վիրժինիին մեկնումին, հակա-  
ռակ անոր որ իր զաւակը պիտի օգտուէր այդ  
հարստութենէն: Իսկ Բօլ տեղեկութիւն չունէր  
տրուած որոշումէն ու կը զարմանար որ Տիկին  
տը Լա Թուր և իր ազջիկը գաղտնի խօսակցու-  
թիւններ կ'ունեննային: Ուստի տրամալից կը  
խորհէր.

— Բան մը կը նիւթեն ինձի դէմ, քանի որ  
գաղտնի կը պահեն ինչ:

Սակայն կղզիին մէջ լուր տարածուած ըլլա-  
լով թէ բախտը այցելած էր այդ ապառաժուտ-  
քը, ամէն կարգի առեւտրականներ հոն մագըը-  
ցեցան: Անոնք խեղճուկ խրճիթներու մէջ տարա-  
ձեղին Հնդկաստանի ամէնաճոխ դիպակներ,  
կուտըլուրի հիանալի ստորակներ, Բալիաքաթի  
և Մազուլիբաթանի թաշկինակներ, Տաքայի  
մուսլիմներ՝ միօրինակ, գծուած, ասեղնագոր-

ծուած ու լուսանցիկ, Սուրաթի կերպասներ՝  
ձեռնաթոյր, խիստ հազուագիւտ նկարակտաւներ՝  
ամէն գոյներով, աւազազարդ խորքով ու կանա-  
չագեղ ոստերով: Անոնք կը պարզէին Չինաս-  
տանի մետաքսէ ընտիր կերպասներ, լուսանցիկ  
ու ազնիւ պաստառներ, տամասկեան կերպասներ՝  
սպիտակափայլ, մարդագետնի պէս դալարագեղ  
ու շլացուցիչ կարմիր, սնդուսներ վարդագոյն,  
կրկնավերտ բեհեզներ, ասուիի պէս կակուղ  
բէքէն կերպասներ, նանքինեան կտաւներ՝ սպի-  
տակ ու դեղին, նոյն իսկ Մատակաքարի սիւ-  
ծանելիներ:

Տիկին տը Լա Թուր ուղեց որ աղջիկը գնէ  
իրեն հաճոյ թուած բաները, միայն ուշադրու-  
թիւն դարձուց ապրանքներու գնին և տեսակ-  
ներուն, վախնալով որ վաճառորդները կը խա-  
բեն Վիրժինին: Այս վերջինը ընտրեց բոլոր այն  
ապրանքները, որոնք հաճոյ կը թուէին իր մօր,  
Մարկրիթի և անոր զաւկին Բօլի:

— Ասիկա կարասիներուն կը յարմարի,  
միւսն ալ Մառիի և Տօմինկի կողմէ կրնայ գոր-  
ծածուիլ, կ'ըսէր Վիրժինի:

Դահեկաններով լեցուն քսակը պարպուած  
էր, բայց Վիրժինի տակաւին չէր խորհած իր  
անձնական պէտքերուն վրայ: Հարկ եղաւ որ  
իրեն բաժին մը հանուի ամէնուն ըրած նուէր-  
ներէն:

Քանի մը օր յետոյ իմ տունս եկաւ Բօլ:  
Ան մեծ վիշտ կը զգար ի տես բախտին պարզե-  
ներուն, որոնք իրեն գուշակել կուտային թէ  
Վիրժինի պիտի մեկնէր: Բօլ ընկճուած երեւոյ-  
թով մը ըսաւ ինձի.

— Քոյրս կը մեկնի, ու ճամբորդութեան



պատրաստութիւնները կը տեսնէ արդէն : Կ'ազնեմ, մեր տունը եկէ՛ք : Իմ մօրս և Վիրժինիի մօրը մտքին վրայ ունեցած ձեր ազդեցութիւնը ի դորձ դրէք, Վիրժինին վար դնելու համար :

Բօլի թախանձանքներուն անսացի, թէեւ համոզուած էի որ իմ յանդիմանանքներս ապարդիւն պիտի ըլլային :

Վիրժինի ինծի հմայիչ թուած էր իր պէնկալեան կապոյտ արդուզարդով ու գլխուն շուրջ փաթթած կարմիր թաշկինակով, բայց աւելի չքնաղ երեւցաւ, երբ տեսայ որ տեղացի կիներուն պէս պճնուած էր հիմա : Վարդագոյն սնդուսէ աստառով պատուած սպիտակ մուսլինէ շրջազգեստ մը հագած էր Վիրժինի : Իր ձկուն և բարձր հասակը կատարելապէս ի յայտ կուգար իր սեղմիրանին տակ, իսկ կրկնակ հիւսքերով խարտեաշ մազերը հիանալիօրէն կը շրջանակէին իր կուսական գլուխը : Աղուոր ու կապուտակ աչքերը մեղամաղձութեամբ լեցուած էին, իր մոյնքը կենդանի երանգ մը կը ստանար շնորհիւ սրտին, որ տարփանքով մը վրդովուած էր և որուն դէմ կը պայքարէր, մինչ ձայնն ալ յուզումնալից շեշտեր կ'առնէր : Իր վայելուչ արդուզարդին հակադրութիւնն իսկ, զոր ակամայ կը կրէր կարծես, աւելի սրտայոյզ կը դարձնէին Վիրժինիին դալկահար երեւոյթը : Ոչ ոք կրնար զայն տեսնել ու լսել անոր խօսքը, առանց յուզում զգալու : Բօլի տխրութիւնը աւելցաւ : Մարկրիթ իր զաւկին վիճակէն զգածուած, առանձինն ըսաւ անոր .

— Զաւա՛կս, ինչո՞ւ սնտախ յոյսեր կ'ունենաս, որոնք աւելի պիտի դառնացնեն զրկանքներդ : Ատենը եկած է քեզի յայտնելու իմ կեանս

քիս և քու կեանքիդ գաղտնիքը: Օր տը Լա  
թուր իր մօրը կողմէ հարուստ և ազնուական  
ազգականուհի մը ունի, իսկ դուն ազքատիկ  
գեղջկուհիի մը զաւակն ես, և ինչ որ աւելի գէշ  
է, անհարազատ տղայ մըն ես:

Այդ անհարազատ ըստը մեծ դարմանք պատ-  
ճառեց Բօլի: Երբեք չէր լսած դայն, ուստի  
մօրը հարցուց անոր նշանակութիւնը: Մարկրիթ  
սա պատասխանը տուաւ.

— Դուն օրինաւոր հայր մը չեմ ունեցած:  
Աղջիկնութեանս՝ սիրոյ պատճառով տկարութիւն  
մը ունեցայ, որուն պտուղը դուն եղած ես: Իմ  
սխալիս հետեւանքով՝ հօրենական ընտանիքէդ  
զրկուեցար, իսկ զղջումիս պատճառով ալ՝ մօ-  
րենական ընտանիքէդ: Տարաբա՛խտ զաւակ, ինչ  
զատ ազգական չունիս այս աշխարհի վրայ:

Ու Մարկրիթ սկսաւ արցունք թափել: Բօլ  
թեւերուն մէջ սեղմելով մայրը, ըսաւ.

— Ո՛վ մայր, աշխարհի մէջ ձեռնէ զատ ու-  
րիշ ազգական չունենալու համար, ա՛լ աւելի  
պիտի սիրեմ ձեզ: Բայց ատ ի՛նչ գաղտնիք էր որ  
յայտնեցիք ինձ ի քիչ մը առաջ: Հիմա կը հասկնամ  
թէ Օր. տը Լա թուր ինչո՛ւ ինչ հեռու կը  
փախչի երկու ամիսէ ի վեր, և այսօր ալ կը  
վճռէ մեկնիլ: Ա՛հ, անտարակոյս կ'արհամարհէ  
զիս:

Սակայն ճաշի ատենը եկած ըլլալով՝ սեղան  
նստան. ամէն ոք զանազան կիրքերով վրդով-  
ուած, քիչ բան կերաւ ու ու է խօսք չըրաւ:  
Առաջին անգամ Վիրժինի սեղանէն ելաւ ու  
նստաւ այն տեղը, ուր կը դտնուինք հիմա: Բօլ  
անոր հետեւեցաւ ընդհուպ ու գնաց անոր քով  
նստաւ: Երկուքն ալ խոր լոռութիւն պահեցին

պահ մը : Հիանալի գիշեր մըն էր , ինչ որ այն-  
քան սովորական է արեւադարձային երկիրներու  
մէջ . ամէնէն ճարտար վրձինն իսկ չպիտի կրնար  
արտայայտել անոր գեղեցկութիւնը : Լուսինը  
կ'երեւէր երկնքին մէջտեղ , ամպերու վարագոյ-  
րով մը շրջապատուած , որոնք աստիճանաբար  
կը ցրուէին անոր շողերուն շնորհիւ : Լուսնին  
լոյսը անդգալաբար կը տարածուէր կղզիին լեռ-  
ներուն ու սարերուն վրայ , որոնք կը փայլէին  
սրճաթագօծ կանաչութեամբ : Հով չկար : Ան-  
տառներուն մէջ , հովիտներուն խորը , ապառաժ-  
ներուն բարձունքը կը լսուէին փոքր ճիչեր ,  
թռչուններու քաղցր մրմունջներ , որոնք զիրար  
կը գգուէին իրենց բոյներուն մէջ , գիշերուան  
պայծառութենէն ու օդին հանդարտութենէն  
հրճուած : Բոլորն ալ , մինչեւ իսկ Վիշապները ,  
խոտին տակ կը շնչէին : Աստղերը կը գողային  
երկնքին վրայ ու ծովուն ծոցին մէջ կը ցոլա-  
յին անոնց դողդոջուն պատկերները :

Վիրժինի մտախոհ աչքերով կը դիտէր լայ-  
նարձակ ու մռայլ հորիզոնը , զոր կղզիին ափուն-  
քէն կը զանազանէր , շնորհիւ ձկնորսներու կար-  
միր լոյսերուն : Նաւահանգստի մուտքին վրայ  
նշմարեց լոյս մը և ստուեր մը , որոնք լապտերը  
և ողնափայտն էին այն նաւուն , ուր Վիրժինի  
պիտի նստէր , Եւրոպա երթալու համար . նաւը  
կը պատրաստուէր առաջատները պարզելու , ու  
խարսխած կը սպասէր որ հովը սկսի փչել : Վիր-  
ժինի ի տես նաւուն , վրդովեցաւ ու զլուխը  
անդին դարձուց , որպէսզի Բօլ չտեսնէր իր ար-  
տասուելը :

Տիկին տը Լա Թուր , Մարկրիթ ու ես քանի  
մը քայլ անդին նստած էինք , պանանենիներուն

տակ, ու գիշերային լուսթեան մէջ որոշապէս  
կը լսէինք անոնց խօսակցութիւնը, որ մտքէս  
չէ ելած բնաւ:

Բօլ ըսաւ աղջկան.

— Օրիտ'րդ, կ'ըսեն թէ երեք օրէն պիտի  
մեկնիք: Դուք չէք վախնար ինքզինքնիդ են-  
թարկելէ ծովու վտանգներուն... այն ծովուն,  
ուրկէ այնքան կը սոսկաք:

— Պէտք է հնազանդիմ իմ ծնողքներուս,  
իմ պարտականութեանս, պատասխանեց Վիր-  
ժինի:

— Մենէ կը բաժնուիք, յարեց Բօլ, հեռա-  
ւոր ազգականի մը քով երթալու համար, որուն  
երեսը չէք տեսած բնաւ:

— Ափսո՛ս, ըսաւ Վիրժինի, կ'ուզէի ամ-  
բողջ կեանքս հոս անցնել, բայց մայրս չուզեց.  
խոստովանահայրս ինձի ըսաւ թէ Սատուծոյ  
կամքը կ'ուզէ որ հոսկէ մեկնիմ. ըսաւ թէ կեան-  
քը փորձութիւն մըն է...: Օ՛հ, շա՛տ դժնդակ  
փորձութիւն մըն է:

— Ի՞նչ, այդքան պատճառներ ձեզ համոզած  
են, իսկ ոչ մէկ պատճառ ձեզ վար չի դներ:  
Ո՛հ, ուրիշ պատճառներ ալ կան զոր չէք ըսեր  
ինձի: Հարստութիւնը մեծ հրապոյրներ ունի:  
Քիչ ատենէն նոր աշխարհի մը մէջ պիտի գտնէք  
մէկը, եղբայր կոչելու համար դայն, մինչ այդ  
անունը այլեւս չէք տար ինձի: Այդ եղբայրը  
պիտի ընտրէք իրենց ազնուականութեամբ և  
հարստութեամբ ձեզի արժանի անձերու մէջէն,  
քանի որ ես չեմ կրնար ընծայել այդ բաները:  
Բայց ո՞ւր կ'ուզէք երթալ, աւելի երջանիկ ըլ-  
լալու համար: Չեր ծննդավայրէն աւելի սիրելի  
երկիր մը կա՞յ, որպէսզի հոն հաստատուիք: Ո՞ւր

պիտի կազմէք ընտանիք մը, որ աւելի խանդա-  
կաթ ըլլայ քան ձեզ սիրող ընտանիքը: Դուք  
ի՞նչպէս պիտի ապրիք, ձեր մօր գգուանքներէն  
զուրկ, որոնց այնքան վարժուած էք: Ի՞նչ պի-  
տի ընէ ձեր տարիքը առած մայրը, երբ այլեւս  
իր քով չտեսնէ ձեզ, սեղանին վրայ, տան մէջ,  
պտոյտի ատեն, ձեզի կրթնելու համար: Ի՞նչ պիտի  
ընէ իմ մայրս, որ այնքան կը սիրէ ձեզ: Ի՞նչ  
պիտի ըսեմ թէ՛ մէկուն և թէ՛ միւսին, երբ տես-  
նեմ ձեր բացակայութեան վրայ անոնց արտաս-  
ւելը: Ո՛վ անգութ: Հապա ես ի՞նչ պիտի ընեմ, երբ  
առտուն ինձի հետ չտեսնեմ ձեզ, ու գիշերը  
վրայ հասած ատեն զիրար չգտնենք այլեւս. ես  
ի՞նչ պիտի ընեմ, երբ մեր ծննդեան օրը տըն-  
կուած սա երկու հնգկընկուզենիները նշմարեմ,  
որոնք երկար ատեն մեր փոխադարձ բարեկամու-  
թեան վկաները եղած են: Ա՛հ, քանի որ կը  
տենչաս նոր բախտ մը և կը փնտռես քու ծնըն-  
դավայրէդ տարբեր երկիրներ և իմ աշխատու-  
թեանս բարիքներէն տարբեր բարիքներ, գոնէ  
թոյլ տուր քեզի ընկերանալու այն նաւուն մէջ,  
որով պիտի մեկնիս: Քեզ պիտի խրախուսեմ փո-  
թորիկներու ատեն, որոնք ցամաքի վրայ իսկ  
այնքան սոսկում կ'ազգեն քեզի: Գլուխդ պիտի  
հանգչեցնեմ իմ կուրծքիս վրայ, սիրտդ պիտի  
տաքցնեմ իմ սրտիս վրայ. իբր գերի՛ քեզի պի-  
տի ծառայեմ Ֆրանսայի մէջ, ուր կ'երթաս ի  
խնդիր հարստութեան և մեծութեան: Քու եր-  
ջանկութիւնդ միայն տեսնելով՝ ինքզինքս եր-  
ջանիկ պիտի զգամ, երբ քեզի ծառայեն ու  
վրայ գուրգուրան ապարանքներուն մէջ, ցոյց  
տալու համար թէ բաւական հարուստ ու ազնիւ  
սիրտ մը ունիմ, որով ամէնէն մեծ զոհողութիւնը





պիտի ընեմ քեզի, քու ոտքերուդ առջեւ մեռնելով:

Հեկեկանքները խեղդեցին Քօլի ձայնը, ու մենք խկոյն լսեցինք Վիրժինիին ձայնը, որ սախօսքերը կ'ընէր, հառաչներով հեղձամղձուկ.

— Քեզի համար է որ կը մեկնիմ... տեսնելով թէ ամէն օր աշխատութեան տակ կ'ընկճուիս, երկու չքաւոր ընտանիքներու ապրուստը ճարելու համար: Ես կ'ուզեմ օգտուիլ հարուստ ըլլալու առիթէն, բիւրիցս քեզի վերադարձնելու համար մեզի բրած բարիքներդ: Կա՞յ այնպիսի հարստութիւն մը որ քու բարեկամութենէդ աւելի արժէ: Քու ծնունդիդ վրայ ինչո՞ւ կը խօսիս: Եթէ կարելի ըլլար որ եղբայր մը ունենայի, քենէ զատ ո՞վ պիտի ընտրէի: Ո՞վ Քօլ, ո՞վ Քօլ, դուն եղբորմէ մը աւելի սիրելի ես ինծի: Որքա՞ն դժուարութիւն քաշեցի, որպէսզի ինէ հեռու մնաս: Ես կ'ուզէի որ դուն ինծի օգնես՝ ինքզինքէս իսկ խոյս տալու համար, մինչեւ որ երկինք կարհնար օրհնել մեր միութիւնը: Հիմա ի՞նչ կ'ուզես որ ընեմ. հո՞ս մնամ թէ մեկնիմ, ապրի՞մ թէ մեռնիմ: Թէեւ առաքինութենէ դուրկ աղջիկ, ես կրցի դիմադրել քու գգուանքներուդ, բայց չեմ կրնար տակալ քու վշտիդ:

Այս խօսքերէն յետոյ՝ Քօլ իր թեւերուն մէջ առաւ Վիրժինին, ու սիրտին վրայ սեղմելով զայն ուժգնօրէն, գոչեց.

— Վիրժինիին հետ պիտի մեկնիմ, ո՛չ ոք պիտի կրնայ անկէ սնջատել զիս:

Ամէնքս ալ Քօլին քով վաղեցինք: Տիկին տը Լա Թուր ըսաւ անոր.

— Զաւակս, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը, եթէ երբեք մենէ բաժնուիք:



Բօլ դողդոջուն շեշտով մը պատասխանեց .

— Մա՛յր իմ, դուք զաւակս կ'ըսէք ինձի, բայց եղբայրը քրոջմէն կը բաժնէք: Երկուքնիս ալ ձեր կաթը ծծած ենք, երկուքնիս ալ ձեր ծունկերուն վրայ մեծցած ենք ու ձենէ սորված ենք զիրար սիրել. երկուքնիս ալ հազար անգամ իրարու ըսած ենք այդ բանը, և սակայն դուք հիմա կ'ուղէք ինէ բաժնել զայն: Եւրոպա կը ղրկէք Վիրժինին, այն վայրենի երկիրը, որ ապաստան մը զլսցաւ ձեզի, այն ազգականներուն մօտ կը ղրկէք, որոնք ձեզ իսկ լքած են: Բայց հիմա պիտի ըսէք ինձի. «Դուք իրաւունքներ չունիք Վիրժինին վրայ, քանի որ ձեր քոյրը չէ ան»: Ինձի համար ամէն ինչ է ան. իմ հարստութիւնս, ընտանիքս, ազնուականութիւնս, ամէն ինչս է. ուրիշ բան չունիմ: Մէկ տանիքի տակ և մէկ օրօրոցի մէջ մեծցած ենք. ուստի մէկ շիրիմ պիտի ունենանք: Եթէ երբեք ան մեկնի, պէտք է որ ես ալ անոր հետ երթամ: Գիտեմ թէ կառավարիչը թոյլ չպիտի տայ: Բայց պիտի՞ կրնայ արդիւել որ ծով չնետուիմ, լողալով անոր հետեւելու համար: Մովը չի կրնար աւելի աղիտաբեր ըլլալ ինձի քան ցամաքը: Ձենէ հետո, անոր աչքերուն առջև պիտի մեռնիմ գոնէ, եթէ երբեք կարելի չըլլայ անոր քով ասլորիլ: Ո՛վ բարբարո՛ս մայր, ո՛վ անողո՛րմ կին, իցի՛ւ թէ այն Ովկէանը, որուն վտանգներուն կը մատնէք զաւակնիդ, այլեւս ձեզի չվերադարձնէ զայն. իցի՛ւ թէ անոր ալիքները ձեզի բերեն իմ մարմինս, ու անոր մարմինն հետ այս ծովափի խիճերուն մէջ թաւալելով, ձեր երկու զաւակներուն կորստեան յաւիտենական վիշտը պատճառեն ձեզի:

Այս խօսքերուն վրայ, թեւերուս մէջ առի-  
Ֆօլը, որովհետեւ յուսահատութիւնը բանակա-  
նութենէ կը գրկէր զայն: Իր աչքերը կը շողա-  
յին, քրտինքը խոշոր կայլակներով կը հոսէր  
բոցավառ դէմքին վրայ, ծունկերը կը դողային,  
ու ես կը զգայի որ հրակէզ կուրծքին մէջ սիր-  
տը կը տրոփէր ուժգնօրէն: Վիրժինի սարսափա-  
հար, Բօլի ըսաւ:

— Ո՛վ իմ բարեկամս, թո՛ղ վկայեն մեր  
մանկութեան հաճոյքները, երկուքիս վիշտերը  
ու բոլոր այն բաները որոնք առյաւէտ իրարու  
զօղելու են երկու անբախտ էակներ: Եւ ահա ինչո՛ւ  
քեզի համար միայն պիտի ապրիմ, եթէ հոս մնամ:  
Վկայութեան կը կոչեմ ձեզ, դուք որ զիս մեծ-  
ցուցած էք մանուկ հասակիս մէջ, իմ կեանքս  
կը տնօրինէք ու արցունքներս կը տեսնէք հի-  
մա: Յանուն երկնքին որ զիս կը լսէ, յանուն  
այն ծովուն, ուրկէ պիտի անցնիմ, յանուն օդին  
զոր կը շնչեմ, ես կ'երդնում որ սուտը չէ պըղ-  
ծած իմ շրթունքս:

Իր սիրած էակին ձայնը լսելուն պէս՝ պա-  
տանիին սաստիկ բարկութիւնը իջաւ, ինչպէս  
արեւը կը հալեցնէ ու սառնակոյտ մը վար կը  
գլորէ Ապենինեանց կատարէն: Բօլի խրոխտ  
գլուխը խոնարհած էր ու արցունքներու ուղիս  
մը կը հոսէր աչքերէն: Մայրը զաւկին ար-  
ցունքներուն խառնելով իր արտասուքները, կը  
գրկէր զայն, առանց խօսք մը արտաբերելու, այն  
ատեն Տիկին տը լա թուր, այլայլած, ըւաւ  
ինծի:

— Ալ չեմ կրնար դիմանալ, սիրտս խոցուած  
է: Այդ չարաբաստիկ ուղեւորութիւնը տեղի  
չպիտի ունենայ: Դրացի՛ս, զաւակս միասին տա-

րէ՛ք • երեք օրէ ի վեր, ոչ մէկուն աչքը քուն  
չէ մտած :

Ու ես Բօլի ըսի •

— Բարեկամս, ձեր քոյրը հոս պիտի մնայ :  
Վաղը կառավարչին հետ կը տեսնուինք • այսօր  
ձգեցէ՛ք որ ձեր ընտանիքը հանգչի, ու այս գի-  
շեր իմ տունս անցուցէք : Ատենը ուշ է • կէս  
գիշեր եղած է արդէն • հարաւային կիսագունդին  
աստեղատունը հորիզոնին վրայ ուղիղ կեցած է :

Բօլ, առանց ձայն հանելու, ձգեց որ զինքը  
տանիմ • շատ վրդոված գիշեր մը անցնելէ յետոյ՝  
այգուն ելաւ անկողնէն ու իր բնակարանը վե-  
րադարձաւ :

Բայց ի՞նչ պէտք կայ աւելի երկարելու  
այս պատմութիւնը • մարդկային կեան-  
քը մէկ կողմէն միայն հաճելի է մեզի :  
Նման այն երկրագունդին, որուն վրայ  
կը դառնանք, մեր արագ հօլովոյթը մէկ օր կը  
տեւէ, ու այդ օրուան մէկ մասը միայն կրնայ  
լուսաւորուիլ այն ատեն, երբ միւս մասը մութին  
մէջ մնայ :

— Հա՛յր իմ, ըսի անոր, խնդրեմ, աւար-  
տեցէ՛ք այն պատմութիւնը զոր սկսաք այնքան  
սրտայոյզ կերպով : Դժբախտութեան պատկեր-  
ները հաճոյ կը թուին մեզի, մինչ զժբախտու-  
թեան պատկերները կը հրահանգեն մեզ : Կ'աղա-  
չեմ ըսէ՛ք, ի՞նչ եղաւ տարաբախտ Բօլ :

Բօլ բնակարան վերադարձած պահուն սեւա-  
մորթունի Մանին միայն տեսաւ, որ ապառաժի  
մը վրայ բարձրացած, բաց ծովը կը դիտէր : Հե-  
ռուէն զայն նշմարելուն պէս, աղաղակեց •

— Ո՛ւր է Վիրժինին :

Մանի գլուխը դարձուց դէպի իր երիտա-

բէ՛ք • երեք օրէ ի վեր , ոչ մէկուն աչքը քուն  
չէ մտած :

Ու ես Բօլի ըսի •

— Բարեկամս , ձեր քոյրը հոս պիտի մնայ :  
Վաղը կառավարչին հետ կը տեսնուինք • այսօր  
ձգեցէ՛ք որ ձեր ընտանիքը հանգչի , ու այս գի-  
շեր իմ տունս անցուցէք : Ատենը ուշ է • կէս  
գիշեր եղած է արդէն • հարաւային կիսագունդին  
աստեղատունը հորիզոնին վրայ ուղիղ կեցած է :

Բօլ , առանց ձայն հանելու , ձգեց որ զինքը  
տանիմ • շատ վրդոված գիշեր մը անցնելէ յետոյ՝  
այգուն ելաւ անկողնէն ու իր բնակարանը վե-  
րադարձաւ :

Բայց ի՞նչ պէտք կայ աւելի երկարելու  
այս պատմութիւնը • մարդկային կեան-  
քը մէկ կողմէն միայն հաճելի է մեզի :  
Նման այն երկրագունդին , որուն վրայ  
կը դառնանք , մեր արագ հոլովոյթը մէկ օր կը  
տեւէ , ու այդ օրուան մէկ մասը միայն կրնայ  
լուսաւորուիլ այն ատեն , երբ միւս մասը մութին  
մէջ մնայ :

— Հա՛յր իմ , ըսի անոր , խնդրեմ , աւար-  
տեցէ՛ք այն պատմութիւնը զոր սկսաք այնքան  
սրտայոյզ կերպով : Դժբախտութեան պատկեր-  
ները հաճոյ կը թուին մեզի , մինչ զժբախտու-  
թեան պատկերները կը հրահանգեն մեզ : Կ'աղա-  
չեմ ըսէ՛ք , ի՞նչ եղաւ տարաբախտ Բօլ :

Բօլ բնակարան վերադարձած պահուն սեւա-  
մորթուհի Մառին միայն տեսաւ , որ ապառաժի  
մը վրայ բարձրացած , բաց ծովը կը դիտէր : Հե-  
ռուէն զայն նշմարելուն պէս , աղաղակեց •

— Ո՛ւր է Վիրժինին :

Մառի գլուխը դարձուց գէպի իր երիտա-

դիտելով. հակառակ անհետացած ըլլալուն, կը կարծէր որ տակաւին կը տեսնէր զայն. նաւը հորիզոնին գոլորշիներուն մէջ կորսուելէ յետոյ՝ այդ ամայի վայրը նստաւ, ուր հովերը կը փչեն միշտ, հնդկարմաւենիներու և թաթամենիներու գագաթները երերցնելով անընդհատ: Քամիներուն խուլ ու մռնչուն ձայնը կը նմանի երգէօններու աղմուկին ու խոր մելամաղձութիւն մը կը ներշնչէ:

Հոն գտայ Բօլը, գլուխը ժայռին յենած ու աչքերը դէպի գետին սեւեռած: Արեւածագէնի վեր, անոր ետեւէն կ'երթայի, շատ դժուարութիւն քաշեցի, զայն համոզելու համար որ վար իջնէ ու իր ընտանիքին քով դառնայ: Յաջողեցայ իր բնակարանը տանիլ զայն. հոն Տիկին տը Լա Թուրը տեսնելուն պէս, առաջին գործը եղաւ դառնօրէն գանգատիլ թէ զինքը խաբած էր: Տիկին տը Լա Թուր մեզի ըսաւ թէ առտուան ժամը երեքին հով ելած ըլլալով նաւը կը պատրաստուէր ճամբայ ելլելու, մինչ կառավարիչը իր սպայակոյտին և միսիոնարին հետ դեսպակով եկած էր Վիրժինին տանելու. յետոյ Տիկին տը Լա Թուր յարեց թէ հակառակ իր և Մարկրիթի արդունքներուն, Վիրժինին առած տարած էին կէս նուաղուն, մինչ ամէնքն ալ կ'աղաղակէին թէ մեր բարիքին համար էր որ այդ բանը կ'ընէին:

— Գոնէ հրաժեշտ առնէի անկէ, որպէսզի սիրտս հանդարտէր հիմա, ըսաւ Բօլ: Ես պիտի ըսէի անոր. Վիրժինի՛, եթէ երբեք ու է խօսք ձեզ վիրաւորած է միասին ապրած ատեննիս, ընդմիշտ ինէ բաժնուելէ առաջ, ներեցէք ինձի: Նոյնպէս պիտի ըսէի անոր. քանի որ նո-

րէն ձեզ տեսնելու բախտ չպիտի ունենամ, երթա՛ք բարով, սիրելի Վիրժինիս: Ինչ հեռու ապրեցէ՛ք, դո՛հ ու երջանիկ:

Բօլ տեսնելով որ մայրը և Տիկին տը Լա Թուր կ'արտասուէին, անոնց ըսաւ.

— Այսու հետեւ ուրիշ մէկը փնտռեցէ՛ք, որ ձեր արցունքները սրբէ:

Յետոյ անոնց քովէն հեռացաւ հեծեծուն, ու սկսաւ թափառիլ բնակարանին մէջ: Ան պտտեցաւ բոլոր այն տեղերը, որոնք ամէնէն աւելի սիրելի էին Վիրժինիին: Մայելով իր ետեւէն գացող այծերուն և ուլիկներուն ըսաւ.

— Ի՞նչ կ'ուզէք ինչ. դուք այլեւս չպիտի տեսնէք այն անձը, որ ձեզի ուտելիք կուտար իր ձեռքին մէջ:

Բօլ գնաց Վիրժինի հանգստավայրը, ու իր շուրջը թեւածող թռչունները տեսնելով գոչեց:

— Խեղճ թռչնիկներ, դուք այլ եւս չպիտի դիմաւորէք ձեր բարի ստնտուն:

Բօլ տեսնելով որ Ֆիտէլ հոս հոն կը հոտուրտար, հետախուզութիւններ ընելով, հառաչազին ըսաւ.

— Այլեւս չպիտի գտնես զայն:

Ի վերջոյ նստաւ այն ժայռին վրայ, ուր Վիրժինիին հետ խօսած էր առջի օր, հոն սուտ արցունք թափեց, ի տես ծովուն, ուր տեսած էր Վիրժինին տանող նաւուն անհետացումը:

Սակայն մենք քայլ առ քայլ կը հետեւէինք Բօլին, վախնալով որ աղէտալի հետեւանք մը կ'ունենայ անոր մտքին վրդովումը: Բօլի մայրը

և Տիկին տը Լա Թուր գողտրիկ խօսքերով կը  
 խնդրէին անկէ որ իր յուսահատութեամբ չաւել-  
 ցնէ իրենց վիշտը: Վերջապէս Տիկին տը Լա  
 Թուր յաջողեցաւ Բօլը հանդարտեցնել, անոր յոյ-  
 սերը արթնցնող անուններ շոայլելով: Իր դա-  
 ւակը, սիրելի դաւակը, իր փեսան կը կոչէր:  
 Յետոյ Տիկինը զայն հրաւիրեց տուն դառնալ ու  
 հոն քիչ մը բան ուտել: Բօլ մեղի հետ սեղ ն  
 նստաւ այն տեղին մօտ, ուր կը նստէր իր ման-  
 կութեան ընկերուհին: Իբր թէ վիրժինին իր  
 տեղը գրաւած ըլլար, խօսք կ'ուղղէր սնոր ու  
 կը հրամցնէր այն կերակուրները, որոնցմէ ա-  
 մէնէն աւելի կ'ախորժէր ան. բայց իր սխալը  
 նշմարելուն պէս՝ կը սկսէր արտասուել:

Յաջորդ օրերը, Բօլ հաւաքեց վիրժինին  
 անձնական գործածութեան յատկացուած բոլոր  
 առարկաները, կրած վերջին ծաղկեփունջերը,  
 հնդկընկուզենիէ այն գաւաթը, որով կը խմէր  
 սովորաբար. բոլոր այդ իրերը կը համբուրէր և  
 ծոցը կը դնէր, իբր թէ աշխարհի ամէնէն թան-  
 կագին բաները ըլլային իր բարեկամուհիին մա-  
 սունքները: Յամպարը այնքան անուշահոտ չի  
 բուրեր որքան այն առարկաները, որոնց ձեռք  
 դպցուցած է սիրելի մ: Ի վերջոյ, Բօլ տեսնե-  
 լով որ իր մօր և Տիկին տը Լա Թուրի վիշտերը  
 կ'աւելնային, ու միւս կողմէ ընտանիքին պէտ-  
 քերը կը պահանջէին յարատեւ աշխատանք,  
 սկսաւ պարտէզը մշակել, Տօմինկի օգնու-  
 թեամբ:

Շատ չանցած, աշխարհի անցուղարձերուն

հանդէպ անտարրեր եղող այդ պատանին ինէ  
խնդրեց որ կարդալ գրել սորվեցնեմ իրեն, որ-  
պէսզի կարենար թղթակցիլ Վիրժինիին հետ:  
Յետոյ ուղեց աշխարհագրութիւն սորվիլ, գաղա-  
փար մը կազմելու համար այն երկրին վրայ,  
ուր ցամաք պիտի ելլէր Վիրժինի. նոյնպէս ու-  
ղեց պատմութիւն սորվիլ, ճանչնալու համար  
բարձրը այն ընկերութեան, ուր պիտի  
ապրէր Վիրժինի: Այսպէս՝ Բօլ իր սիրոյն ազ-  
ղեցութեամբ, կատարելագործած էր երկրագոր-  
ծութիւնը և ամէնէն անհարթ գետինները վա-  
յելչօրէն յարդարելու արուեստը: Անտարակոյս,  
մարդիկ գիտութեանց և արուեստներու մեծ մա-  
սը կը պարտին այն վայելքներուն, զոր  
բուն և անհանդարտ տարիանքը կ'ակնկալէ.  
մարդուն գրկանքներէն ծնունդ առած է փիլիսո-  
փայութիւնը, որ կ'ուսուցանէ ամէն բանով մխի-  
թարուիլ: Այսպէս՝ բնութիւնը բոլոր էակներուն  
միջեւ սիրոյ կապը գրած ըլլալով, մարդկային  
ընկերութեան առաջին շարժառիթը և մեր գի-  
տութեան ու հաճոյքներուն գրդիչը ըրած է  
զայն:

Բօլ շատ չախորժեցաւ աշխարհագրութեան  
ուսումէն, որ քաղաքական բաժանումները կը  
ներկայացնէ, փոխանակ նկարագրելու իւրա-  
քանչիւր երկրի բնութիւնը: Պատմութիւնը,  
մանաւանդ նոր ժամանակներու պատմութիւնը  
բնաւ չհաճագրոնեց Բօլը: Անոր մէջ կը տեսնէր  
ընդհանուր ու պարբերական աղէտները, առանց  
նշմարելու անոնց գրգապատճառները, ինչպէս  
պատերազմներ անշարժառիթ և շննպատակ, մթին  
սաղրանքներ, աննկարագիր ազգեր ու անողորմ  
իշխաններ: Բօլ կը նախընտրէր վէպեր կարդալ,



որոնք մարդոց զգացումներով և շահերով կը  
 դրաղին, ու իր վիճակին նման կացութիւններ  
 կը պարզեն: Ուստի ո՛չ մէկ գիրք Բօլի այնքան  
 հաճոյք չպատճառեց որքան Տեյեմաքը՝ իր դաշ-  
 տային կեանքի պատկերներով ու մարդկային  
 սրտին համար բնական եղող կիրքերով: Իր մօր  
 և Տիկին տը Լա Թուրի կը կարգար այդ գիրքին  
 բոլոր այն մասերը, որոնք ամէնէն աւելի կ'ազ-  
 դէին իր վրայ, այն ատեն սրտայոյզ յիշատակ-  
 ներով փղձկած, ձայնը կը մարէր ու արցունք-  
 ներ կը հոսէին աչքերէն: Բօլի այնպէս կը թուէր  
 որ Վիրժինի ունէր Անտրիոպէի արժանապատ-  
 տութիւնը և զգաստութիւնը, Եւքարիսի դժ-  
 բախտութիւնները ու խանդաղատանքը:

Միւս կողմէ, Բօլ վրդովուեցաւ, մեր նորե-  
 լուկ վէպերը կարդալով, որոնք լկտի բարքերու  
 նկարագրութեամբ և առածներով լեցուն են:  
 Երբ ան հասկցաւ որ այդ վէպերը Եւրոպայի  
 ընկերութեանց ճշմարիտ պատկերացումն են,  
 վախցաւ որ Վիրժինի հօն կը խաթարուի ու կը  
 մոռնայ զինքը, բան մը որուն մէջ մասամբ իրա-  
 տունք ունէր Բօլ:

Արդարեւ, մէկուկէս տարի անցած էր, ու  
 Տիկին տը Լա Թուր ղեռող և է լուր չէր առած ո՛չ  
 իր հօրաքրոջմէն և ոչ ալ իր աղջիկէն: Միայն  
 օտարներու միջոցաւ իմացած էր որ աղջիկը  
 Զրանտա հասած էր ողջամբ: Վերջապէս, Հընդ-  
 կաստան գացող նաւէ մը Տիկին տը Լա Թուրի  
 յանձնուեցաւ ծրար մը և Վիրժինիին ձեռքովը  
 գրուած նամակ մը: Հակառակ իր ազնիւ ու  
 ներողամիտ աղջկան զգուշաւոր լեզուին, Տիկին  
 տը Լա Թուր հասկցաւ որ շատ դժբախտ էր ան,  
 Վիրժինի այդ նամակին մէջ իր կացութիւնը և

նկարագիրը այնքան լաւ կը պատկերացնէր որ  
գրեթէ բառ առ բառ միտքս սլահեցի :

«Ամենացանկալի և ամենասիրելի մայրիկ ,

«Արդէն իսկ ձեզի քանի մը նամակներ  
գրած եմ ձեռքովս . պատասխան առած չըլլալուս  
համար , կը վախնամ որ ձեր ձեռքը հասած չըլ-  
լան անոնք : կը յուսամ որ այս նամակը պիտի  
ստանաք , շնորհիւ այն զգուշութեանց զոր ձեռք  
առած եմ , իմ մասիս լուր տալու և ձեռնէ լուր  
առնելու համար :

«Մեր բաժանումէն ի վեր շատ արցունք-  
ներ թափեցի , մինչդեռ անկէ առաջ , ու-  
րիշներու դժբախտութեանց վրայ միայն կ'ար-  
տասուէի : Իմ մեծ հօրաքոյրս խոր զարմանք  
զգաց , երբ հոս ժամանելէս յետոյ ինծի հարցում-  
ներ ըրաւ ունեցած ձիրքերուս մասին , ու ես պա-  
տասխանեցի թէ կարդալ գրել չէի գիտեր : Ուս-  
տի ինծի հարցուց թէ ի՞նչ սորված էի աշխարհ  
գալէս ի վեր . երբ անոր ըսի թէ տնական գոր-  
ծեր կատարած և ձեր կամքին հպատակած էի ,  
ան ըսաւ թէ սպասուհիի մը դաստիարակու-  
թիւնը առած էի : Յաջորդ օրն իսկ , զիս դրաւ  
Բարիզի մօտ գտնուող մեծ վանք մը , ուր ամէն  
կարգի ուսուցիչներէ դաս կ'առնեմ . անոնք ի  
մէջ այլոց ինծի կ'ուսուցանեն պատմութիւն ,  
աշխարհագրութիւն , քերականութիւն , թուա-  
բանութիւն ու ձիավարութիւն . բայց այդ բո-  
լոր գիտութեանց մէջ այնքան քիչ ընդունա-  
կութիւն ունիմ որ մեծապէս չպիտի օգտուիմ  
այդ պարոններէն : կը զգամ թէ խեղճ արարած  
մըն եմ , մտքով տկար , ինչպէս ինծի կը հաս-  
կցնեն ուսուցիչներս : Սակայն հօրաքոյրս միշտ  
բարիքներ կ'ընէ ինծի : Ամէն եղանակին՝ նոր

զգրեսաներ կուտայ: Երկու սենեկապանու-  
 հիներ գրած է իմ քովս, որոնք աղնուական կի-  
 ներու պէս հազուած են. կոմսուհիի տխուր  
 ձեռք բերած է ինձի համար, ԼՍ. ԹՈՒՐ անու-  
 նէն զրկելով զիս, որ այնքան սիրելի էր թէ՛  
 ձեզի և թէ ինձի, անոր համար որ հայրս մեծ  
 տառապանքներու մատնուած էր, ձեզի հետ ա-  
 մուսնանալու համար, ինչպէս կը պատմէիք:  
 Ձեր կնոջական մականունին տեղ գրած է ձեր  
 ընտանեկան անունը, որ ինձի սիրելի է տակա-  
 ւին, որովհետև ձեր ազջիկնութեան անունը  
 եղած է ան: Այսքան փայլուն կացութեան մէջ  
 տեսնելով ինքզինքս, խնդրեցի որ նիւթական  
 օգնութիւն մը ընէ ձեզի: Ի՞նչպէս ձեզի իմաց-  
 նեմ անոր տուած պատասխանը, բայց դուք  
 պատուիրած էք որ միշտ ճշմարտութիւնը ըսեմ:  
 Ուստի ան պատասխանեց թէ քիչ մը գրամ բանի  
 չպիտի ծառայէր ձեզի, իսկ շատն ալ տաղտուկ  
 պիտի պատճառէր այն պարզունակ կեանքին  
 մէջ զոր դուք կը վարէք:

«Նախ ջանացի օտարի մը ձեռքով լուր դըր-  
 կել ձեզի, քանի որ չէի կրնար իմ միջոցաւ  
 լուր տալ իմ մասիս: Հոս ժամանած պահու  
 վստահելի մարդ մը չունէի, ուստի գիշեր ցերեկ  
 աշխատեցայ, կարգալ գրել սորվելու համար:  
 Աստուծոյ շնորհիւ, քիչ ատենէն յաջողեցայ  
 կարգալ գրել: Իմ առաջին նամակներուս առաքու-  
 մը յանձնեցի շուրջս գտնուող կիներուն, իրա-  
 ւունք ունիմ կարծելու թէ մեծ հօրաքրոջս յանձ-  
 նած են զանոնք: Այս անգամ դիմեցի դասընկեր  
 բարեկամուհիներէս մէկուն, կը խնդրեմ որ ձեր  
 պատասխանները յղէք ներփակ հասցէով: Մեծ  
 հօրաքոյրս չի թոյլատրեր որ դուրսի հետ թըղ-

Թակցիմ, իր կարծիքով՝ այդ բանը կրնայ եղեր  
արգելք ըլլալ իմ մասին ունեցած մեծ գիտաւո-  
րութիւններուն: Միայն մեծ հօրաքոյրս կրնայ  
զիս տեսնել վանդակախօսարանին մէջ, ինչպէս  
նաև իր բարեկամներէն աղնուական ծերունի  
մը, որ ըսածին նայելով, շատ կ'ախորժի եղեր  
ինէ: Ճշմարտութիւնը ըսելու համար, ես բնաւ  
չեմ ախորժիր անկէ, եթէ երբևք մէկուն իսկ  
նուիրեմ սիրտս:

«Ճոխութեան մէջ կ'ապրիմ, բայց մէկ սու-  
խակ չունիմ: Կ'ըսեն թէ հետեւանքը լաւ չպիտի  
ըլլար, եթէ դրամ ունենայի: Իմ շրջագրեա-  
ներս իսկ սենեկապանուհիներուս կը պատկա-  
նին, որոնք իրարու ձեռքէ կը խլեն, տակաւին  
մէկդի չնկտած: Ճոխութեան մէջ շատ աւելի  
աղքատ եմ որքան չէի ձեր քով, որովհետեւ  
տալիք բան մը չունիմ: Երբ տեսայ որ ինծի  
ուսուցուած գիտութիւնները դիւրութիւն չին  
ընծայեր ամենափոքր բարիք մը գործելու, իմ  
ասեղիս ապաւինեցայ, որուն գործածութիւնը  
բարեբախտաբար սորվեցուցած էք ինծի: Ուստի  
իմ ձեռքէս ելած քանի մը զոյգ գուլպայ կը  
դրկեմ ձեզի և Մարկրիթ մայրիկին համար,  
զգակ մը Տօմինկի և կարմիր թաշկինակներէս  
մէկը Մատիի համար:

«Այս ծրարին հետ կը դրկեմ նաև նախընթ-  
րակներուս ատեն տրուած պտուղներուն կուտե-  
րը և կորիզները, ու «մէն տեսակ ծառերու հուն-  
տեր զոր վանքին դալատանին մէջ հաւաքած  
եմ դրօսանքի ժամերուն: Նոյնպէս կը դրկեմ  
մանուշակի, մարգարտածաղիկի, հրանունկի,  
հարսնուկի և քոսքսուկի հունտեր զոր դաշտե-  
րուն մէջէն հաւաքած եմ: Այս երկրին մարգա-

գետիններուն մէջ աւելի գեղեցիկ ծաղիկներ կը  
գտնուին քան թէ մերիններուն մէջ, բայց ոչ  
ուր անոնց վրայ կը նայի: Ես վստահ եմ որ  
դուք և Մարկրիթ մայրիկը աւելի գոհ պիտի  
մնաք հունտերու այս քսակէն քան թէ դրամի այն  
քսակէն, որ մեր բաժանումին և արցունքներուն  
պատճառ եղած է: Ես մեծ ուրախութիւն պի-  
տի զգամ, եթէ երբեք օրին մէկը դոհունակու-  
թիւնը ունենանք խնձորենիներուն աճուժը  
տեսնելու մեր սլանանիներուն քով, ու փեկոն-  
ներուն շաղապատումը հնդկընկուզենիներուն  
հետ՝ իրենց սաղարթներով: Ինքզինքս նօրման-  
տիոյ մէջ կը կարծեմ, զոր դուք այնքան կը  
սիրէք:

«Ինձի պատուիրեցիք որ իմ բերկրանքս ու  
վիշտերս յայտնեմ ձեզի: Ես բնաւ ուրախութիւն  
չեմ զգար ձեռնէ հետու, գալով վիշտերուս, կը  
մեղմացնեմ զանոնք, խորհելով թէ Աստուծոյ  
կամքով զիս դրած էք այն դիրքին մէջ, ուր կը  
գտնուիմ: Բայց ամէնէն մեծ վիշտը զոր կը զգամ  
հոս, սա է թէ ոչ ոք ձեր վրայ կը խօսի ու ես  
այլ ոչ մէկուն հետ ձեր վրայ չեմ խօսիր: Իմ սե-  
նեկապանուհիներս, աւելի ճիշդը, մեծ հօրա-  
քրոջս սենեկապանուհիները, քանի որ անոր կը  
պատկանին, սա խօսքը կ'ընեն ինձի, երբ կը  
ջանամ խօսք բանալ ինձի այնքան սիրելի եղող  
նիւթերու վրայ. «Օրիորդ, մտքերնիդ բերէք  
որ դուք Փրանսուհի էք ու պէտք է մոռնաք  
վայրենիներու երկիրը»: Ահ, պիտի նախընտ-  
րէի ինքզինքս մոռնալ քան թէ այն վայրը, ուր  
ծնած եմ և ուր դուք կը բնակիք: Ինձի համար,  
այս երկիրն է վայրենիներու աշխարհը, որովհե-  
տեւ հոս առանձին կ'ապրիմ, ու մէկը չունիմ

որուն կարենամ յայտնել այն սէրը զոր  
ձեզի հանդէպ պիտի տածեմ մինչեւ գերեզման :

«Ամենայանկալի և ամենասիրելի մայրիկ ,


«Ձեր հլու ու խանդակաթ աղջիկը

ՎԻՐԺԻՆԻ ՏԸ ԼԱ ԹՈՒՐ

«Ձեր խնամքին կը յանձնեմ Մատին ու Տօ-  
մինկը , որոնք այնքան հոգածութիւն ցոյց  
տուած են մանկութեանս ատեն . իմ կողմէս  
զգուեցէ՛ք Ֆիտէլը , որ անտատին մէջ դտաւ  
զիս» :

Բօլ ապշեցաւ , գլխակոխ «որ Վիրժինի բնաւ  
չէր խօսած իր վրայ , հակառակ որ տան շունն  
իսկ չէր մոռցած յիշատակելու , բայց ան չէր գի-  
տեր թէ կնոջ մը նամակը ո՛րքան ալ երկար  
ըլլայ , ան ամէնէն վերջը գրի կ'առնէ իր  
ամենասիրելի մտածումը :

Վիրժինի յետ-գրութեան մը մէջ Բօլի մաս-  
նաւորաբար կը յանձնարարէր երկու տեսակ  
հունտեր . մանուշակի և քոսքսուկի հունտերը :  
Ան քանի մը հրահանգներ կուտար այդ տունկե-  
րու յատկանիշերուն և այն վայրերուն վրայ ,  
ուր կարելի է սերմանել . «Մանուշակը , կ'ըսէր  
ան , լրթագոյն փոքր ծաղիկ մը ունի ու  
հաճոյք կը զգայ մացառուտքին տակ ծածկուելէ ,  
բայց իր դիւթիչ բուրումին շնորհիւ կը յայտ-  
նուի ընդհուպ» : Վիրժինի կը պատուիրէր զայն  
սերմանել աղբերակին եզերքը , իր հնդկընկուզե-  
նիին ստորտը : «Քոսքսուկը կը յարէր ան ,  
բայց կապոյտ , աղւոր ծաղիկ մը կուտայ , սեւ  
խորքով , ու սպիտականիշ : կարծես թէ սգաւոր  
է ան : Ահա ինչո՛ւ զայն կը կոչեն նաև այրեծաղիկ ,  
(այսինքն այլի ծաղիկ) : Խորտուբորտ և հողմա-  
կոծ տեղերը կը սիրէ ան» : Վիրժինի կը խնդրէր



բուն, քանի որ ինք չէր կրնար աչլեւս ու է  
ուրախութիւն վայելել իրմէ հետու:

Բօլ աւելի մեծ խնամով ցանեց եւրոպական  
հունտերը, մանաւանդ մանուշակներու և քոսքը-  
սուկներու հունտերը, որոնց տուած պտուղները  
քիչ մը կը նմանէին նկարագրին ու վիճակին  
Վիրժինիի, որ մասնաւորաբար յանձնարարած էր  
դանոնք, բայց ճամբան խոնաւցած, ու մանա-  
ւանդ Ափրիկէի այդ մասին կլիման յարմար  
չըլլալուն համար, հունտերէն շատ քիչերը բու-  
սան, ու անոնք ալ չկրցին կատարելապէս աճիլ:

Սակայն նախանձը, որ մարդոց երջանկու-  
թեան արգելք կ'ըլլայ, մանաւանդ ֆրանսական  
գաղութներուն մէջ, պատճառ եղաւ որ Բօլի  
մտանոգութիւն պատճառող գրոյցներ տարածայ-  
նուին կղզիին մէջ: Վիրժինիին նամակը բերող  
մարդիկ կը հաւաստէին թէ մանկամարդ աղջիկը  
ամուսնանալու վրայ էր, ու անունը կուտային  
այն պալատական աղնուականին, որ պիտի ա-  
մուսնանար Վիրժինիին հետ. նոյն իսկ ոմանք  
կ'ըսէին թէ ամուսնութիւնը տեղի ունեցած էր  
արդէն և իրենք ալ վկայ եղած էին:

Նախ Բօլ կարեւորութիւն չտուաւ անու-  
տրական նաւու մը կողմէ բերուած այդ լուրե-  
րուն, քանի որ ուղեւորները յաճախ այդպիսի  
սուտ գրոյցներ կը տարածայնեն ճամբուն վրայ:  
Բայց որովհետեւ բնակիչներէն ոմանք նենգամիտ  
կարեկցութեամբ մը կը մեղքնային Բօլը, այդ  
բանին համար, ան ալ սկսաւ հաւատ ընծայել գրոյց-  
ներուն: Մնաց որ, իր կարգացած քանի մը վէ-  
պերուն մէջ Բօլ կը տեսնէր որ խոստմնադան-  
ցութիւնը բանի տեղ գրուած չէր. ան գիտէր թէ  
այդ գրքերը բաւական հուստարմօրէն կ'նկա-



րագրէին Եւրոպայի բարձրը, ուստի կը վախ-  
նար թէ Տիկին տը Լա Թուրի աղջիկն ալ հոն  
կ'ապականի ու կը մոռնայ իր նախկին յանձնա-  
ռութիւնը: Չեռք բերած հմտութիւնը իր գըժ-  
բախտութեան պատճառ կ'ըլլար: Իր վախերը  
աւելի սաստկացան, երբ Վիրժինիի մասին լուր  
չբերին անկէ ետքը, վեց ամսուան ընթացքին  
հասած նաւեր:

Այդ անբախտ երկրասարդը, սրտին բոլոր  
վրդովումներուն մատնուած, յաճախ զիս տես-  
նելու կուգար, իր մտահոգութիւնները հասնա-  
տելու կամ փարատելու համար, իմ աշխարհային  
փորձառութեամբս:

Ինչպէս ձեզի ըսած եմ արդէն, ես կը քնա-  
կիմ հոսկէ կէս մղոն հեռու, ափունքին վրայ դե-  
տակի մը, որ կը հոսի Մօնթանեանը-Լօնկ լե-  
րան երկայնքին: Հոն կ'անցնեմ կեանքս, առան-  
ձին, ոչ կին ունիմ, ոչ դուստր և ոչ ալ գերի:

Բացի այն հաղուաղէպ երջանկութենէն,  
որով մարդ իրեն յարմար ընկերունի մը կը  
գտնէ, կեանքի մէջ ամէնէն նուազ դժբախտ վի-  
ճակը առանձնութիւնն է: Ամէն մարդ, որ ու-  
րիշներէ շատ կը գանգատի, առանձնութիւն կը  
փնտռէ: Նոյնպէս լաւ գիտուած է որ իրենց  
կարծիքներուն, իրենց կառավարութիւններուն  
պատճառով դժբախտացած ժողովուրդներու մէջ  
քաղաքացիներու շատ մը դասակարգեր առանձ-  
նութեան ու ամուրիութեան նուիրուած են բո-  
լորովին: Այսպէս եղած են Եգիպտացիները ի-  
րենց անկումի շրջանին, Յոյները՝ Արեւելեան  
կայսրութեան շրջանին, ու մեր օրերուն՝ հնդկ-  
ները, Չինացիները, արդի Յոյները, Իտալացի-  
ները և մեծ մասամբ Արեւելեան ժողովուրդները

ու Եւրոպայի հարաւարնակ ժողովուրդները :  
 Առանձնութիւնը մասնաւորաբար դէպի բնական  
 երջանկութիւն կ'առաջնորդէ մարդը , ընկերային  
 չարիքէն հեռու պահելով զայն : Շատ մը նախա-  
 պաշարումներով պակաստուած մեր ընկերու-  
 թեանց մէջ հոգին շարունակական վրդովումի  
 մը մատնուած է . ան ինք իր մէջ կը յուզէ հազա-  
 րումէկ խռովայոյզ և հակասական խորհուրդներ ,  
 որով կը ջանան զիրար նուաճել փառասէր ու  
 թշուառ ընկերութեան մը անդամները : Բայց հո-  
 գին մենութեան մէջ կը վանէ զինքը վրդովող  
 այլ օտարոտի պատրանքները , ու անկեղծ զգա-  
 ցում մը կ'ունենայ իր անձին , բնութեան և իր  
 արարչին նկատմամբ : Այսպէս , դաշտերը աւերող  
 հեղեղին տղմուտ ջուրը իր ընթացքէն շեղելով  
 լեռնաձորի մը մէջ տարածուած ատեն իր յատա-  
 կը կը ձգէ իր սիկը ու կը վերստանայ սկըզբ-  
 նական պայծառութիւնը , յետոյ թափանցիկ  
 դարձած՝ ափերուն հետ միասին կը ցոլացնէ  
 երկրին կանաչութիւնը և երկնքին լոյսը : Նոյն-  
 պէս առանձնութիւնը կը վերահաստատէ մարմ-  
 նին և հոգիին ներդաշնակութիւնը : Մենակեաց-  
 ներու դասակարգին մէջ կը գտնուին ամէնէն  
 երկարակեացները , ինչպէս Հնդկաստանի Պրահ-  
 մանները :

Նոյնպէս ; աշխարհային երջանկութեան հա-  
 մար անհրաժեշտ կը գտնեմ մենութիւնը . ուստի  
 ինձի անկարելի կը թուի ու և է զգացումի  
 տեւական հաճոյքը վայելել կամ հաստատ սկըզ-  
 բունքի մը վրայ կանոնաւորել կենցաղը , առանց  
 ներքին մենութեան , ուրկէ մեր խորհուրդները  
 հազուադէպ դուրս կ'ելլեն , իսկ ուրիշներու խոր-  
 հուրդներն ալ բնաւ մուտ չեն գործեր հոն : Ա-

սով հանդերձ, չեմ ուզեր ըսել թէ մարդ բոլորովին առանձին ապրելու է, քանի որ իր պէտքերով կապուած է ամբողջ մարդկային ազգին հետ. ուստի պարտի աշխատիլ մարդոց համար. բնութեան մնացեալ մասին հանդէպ ալ պարտքեր ունի: Աստուած մենէ իւրաքանչիւրին տուած է գործարաններ, կատարելապէս յարմար՝ երկրագունդի այն տարրերուն, ուր կը բնակինք, ինչպէս ոտքեր՝ ջայելու համար, թոքեր՝ շնչելու համար, աչքեր՝ լոյսը տեսնելու համար, ու մենք չենք կրնար յեղաշրջել այդ զգայարանքներուն գործածութիւնը. իսկ արարիչը իրեն վերապահած է մեր գլխաւոր գործարանը եղող սիրտը: Հետեւաբար, օրերս կ'անցնեմ մարդոցմէ հետու, որոնց ուզեցի ծառայել, մինչ անոնք հալածեցին զիս: Եւրոպայի մեծ մասը ու Ամերիկայի և Ափրիկէի քանի մը գաւառները պտտելէ յետոյ, այս սակաւաբնակ կղզիին մէջ հաստատուեցայ, անոր բարեխառն օդէն ու ամայութենէն հմայուած: Անտառի մը մէջ ծառի մը տակ շինուած խրճիթ մը, իմ ձեռքովս մշակուած փոքր դաշտ մը և դրանս առջեւ հոսող գետակ մը կը բաւեն իմ պէտքերուս ու հաճոյքներուս: Այս վայելքներուն վրայ կ'աւելցնեմ քանի մը լաւ միտքերու բնծայած վայելքները, մանաւանդ որ անոնք ինձի կը սորվեցնեն լաւագոյն մարդ մը դասնալու արուեստը: Նոյնպէս իմ երջանկութեանս կը ծառայեցնեն այն աշխարհն իսկ, ուրկէ հեռացած եմ. անոնք իմ առջեւ կը պատկերացնեն կիրքեր, որով այնքան կը թշուառանան մարդիկ, և երբ անոնց վիճակը իմինիս հետ կը բաղդատեմ, բացասական երջանկութիւն մը կը վայելիմ:

Նաւարեկութենէ ազատած մարդու մը պէս, որ ապառաժի մը վրայ ապաստանած է, իմ առանձնացած տեղէս կը դիտեմ այն վտժորիկները, որոնք կը շառաչեն աշխարհի մնացեալ մասին մէջ: Մրրիկին հեռաւոր աղմուկն իսկ կը կրկնապատկէ իմ հանգիստ: Մարդիկը չեմ ատեր այն ատենէն ի վեր, երբ անոնք իմ ճամբուս վրայ չեն գտնուիր, ու ես ալ անոնց ճամբուն վրայ չեմ գտնուիր այլեւս. միայն կը մեղքնամ զանոնք: Երբ անբախտ մարդու մը հանդիպիմ, ես կը ջանամ անոր օգնութեան հասնիլ, ինչպէս անցորդ մը ձեռքը կ'երկարէ անդունդին մէջ խեղդուող դժբախտ մարդու մը: Բայց անմեղները մ'հայն ուշադիր են իմ ձայնիս: Բնութիւնը ի գուր կը կոչէ մարդիկը. իւրաքանչիւր մարդ իր կիրքերուն համեմատ՝ մտքին մէջ կը պատկերացնէ բնութիւնը: Մարդ ամբողջ կեանքին մէջ կը հետապնդէ զինքը մոլորեցնող այդ ուրուականը, ու յետոյ երկնքին դէմ կը տրտնջայ իր իսկ գործած սխալին համար:

Ես քանիցս փորձած եմ բնութեան դիրկը վերադարձնել բազմաթիւ եղկելիներ, բայց անոնց մէջ չեմ գտած մէկը, որ իր թշուառութիւններով դիմովցած չըլլայ: Նախ ուշադրութեամբ մտիկ կ'ընէին զիս, այն յոյսով թէ իրենց պիտի օգնէի, փառք և հարստութիւն ձեռք բերելու համար. բայց երբ կը տեսնէին որ այդ բաներէն հրաժարելու յորդոր կը կարգայի, զիս ալ թշուառ կը համարէին, իրենց տարաբախտ երջանկութիւնը չհետապնդելու համար. անոնք կը պարսաւէին իմ մենաւոր կեանքս ու կը պնդէին որ իրենք միայն օգտակար էին մարդկութեան. այսպէս կը ջանային զիս ալ քշել

իրենց յորձանքին մէջ : Ամենուն հետ կը հաղորդակցիմ , բայց ո՛չ մէկուն անձնատուր կ'ըլլամ : Յաճախ ինքզինքէս խրատ կ'առնեմ : Ներկայի անդորրութեան մէջ աչքիս առջեւ կը բերեմ կեանքիս անդեալ վրդովումները , որոնց այնքան յարգ ընծայած եմ , և որոնք են պաշտպանութիւն , հարստութիւն , համբաւ , հեշտանք ու կարծիքներ . ասոնք իրարու հետ կը պայքարին ամբողջ աշխարհի մէջ : Ծանօթ շատ մը մարդիկ , որոնք ոչ ևս են , կատաղօրէն կ'ողորէին իրարու հետ , այդ ցնորքներուն համար . հիմա այդ անձերը կը բազդատեմ իմ գետակիս ալիքներուն հետ , որոնք փրփրացայտ կը բախին իր յատակի ժայռերուն ու կ'անհետանան , այլեւս երեւան չգալու համար : Մինչ ես խաղաղօրէն կը յանձնուիմ ժամանակի գետին , ապագային ովկէանոսը հասնելու համար , որ ափունք չունի այլեւս , ու ընտելեան արդի գաշնակութեանց տեսարանին հանդէպ՝ գէպի արարիչը կը բարձրանամ , յուսալով որ աւելի երջանիկ ճակատագիր մը կը գրտնեմ ուրիշ աշխարհի մը մէջ :

Իրաւ է որ , անտատի մը մէջտեղ հաստատուած իմ մենարանէս չի նշմալ ուրիւր այն շատ մը բաները , զոր մեղի կ'ընծայէ այս բարձրադիր վայրը , ուր կը գտնուինք , սակայն հոն հետաքրքրական տեսարաններ կան , մանաւանդ ինծի պէս մարդու մը համար , որ աւելի կը սիրէ ինքնամփոփուիլ քան թէ գուրսը թափառիլ : Իմ դրանս առջեւէն հոսող գետը ուղիղ գծով մը կ'անցնի անտառներուն մէջէն , ու երկայն ջրանցք մը կը ձևադնէ , ծառերով հովանաւորուած , որոնք ամէն տեսակ սաղարթներ ունին : Հոն կան թաթամենիներ , ոպնիազներ , ու ծա-

ներ որոնք խնձորենի կը կոչուին հոս, ու ձիթենի-  
ներ, դարիճենիկներ, հոս հոն՝ կաղամբարմա-  
ւենիներու մերկ ու երկայն բուները սիւնածե-  
կը կանգնին, որոնք հարիւր ոտքէ աւելի բարձր  
են ու իրենց գագաթներուն վրայ ունին ոստե-  
րու փունջ մը, այնպէս որ միւս ծառերուն վե-  
րեւ կ'երեւան անտառի մը պէս, որ ուրիշ անտա-  
ռի մը վրայ տնկուած է կարծես: Անոնց  
վրայ փաթթուած են այլադան սաղարթնե-  
րով բաղեղներ, որոնք մէկ ծառէն միւսը կը  
խոյանան, հոս ձեւայնելով ծաղկեկամարներ,  
հոն՝ դարբարակ սրահակներ: Խնկահոտ բուրում-  
ներ կ'արձակէ ծառերուն մեծագոյն մասը, ու  
անոնց անուշահոտութիւնը հազուատներուն մէջ  
իսկ այն աստիճան կը թափանցէ որ անտառէն  
անցնող մարդու մը վրան անուշ կը բուրէ, հոն-  
կէ դուրս ելլելէն քանի մը ժամ ետքն ալ: Ծա-  
ղիկներու փթթումի եղանակին՝ ծառերը կ'իստ-  
վին ձիւնով ծածկուած են կարծես:

Ամրան վերջը, քանի մը տեսակ տարաշ-  
խարհիկ թռչուններ, անխմանալի բնազդով մը,  
անծանօթ մարդերէ կուգան, բնդարձակ ծովերու  
վրայէն անցնելով, այս կղզիին բոյսերուն հուն-  
տերը քաղելու և իրենց գոյներուն փայլը հա-  
կադրելու համար ծառերու կանաչութեան հետ,  
որ արեւուն տակ թուխ երանգ մը ստացած է:  
Ի մէջ այլոց, այդ թռչուններն են այլատեսակ  
պապկաներ և կապոյտ աղաւնիներ, որոնք հո-  
լանտական աղաւնի կը կոչուին հոս: Այդ ան-  
տառներու բնակիչները եղող կապիկները իրարու  
հետ կը խաղան անոնց նսեմաստուեր ոստերուն  
մէջ, ուր ի յայտ կուգան իրենց գորշ և կանա-  
չորակ ստեւով ու համակ սև դէմքով. կապիկ-  
ներէն սմանք ոստերէն կը կախուին իրենց պո-

չով ու օղին մէջ կ'օրօրուին. ուրիշներ ճիւղէ  
ճիւղ կը ցատկեն, իրենց ձագուկները թեւեր-  
նուն մէջ գրկած: Մահասփիւռ հրացանը երբեք  
չէ ահաբեկած բնութեան այդ խելօքիկ զուակ-  
ները: Հոն կը լսուին միայն ուրախութեան ճի-  
չեր, ճոռոզիւններ և հարաւային երկիրներու  
քունի մը թռչուններուն սնծանօթ գեղգեղանքը,  
զոր հետուն կը կրկնեն անտառին արձագանդնե-  
րը: Ժայռուտքին վրայ, ծառերուն մէջէն հոսող  
պղպջուն դետակը, հոս հոն, վճիտ ջուրերուն մէջ կը  
ցլացնէ ծառերուն զանգուածները դալարագեղ  
և ստուերոտ, ինչպէս նաև անոնց երջանիկ բնա-  
կիչներուն խաղերը. հազար քայլ հետու, գետը  
ապառաժին զանազան յարկերէն վար կը գահա-  
վիժի, ու իր անկումին ատեն կը ձեւացնէ ջու-  
րի սփռոց մը՝ բիւրեղի պէս միապաղաղ, ու կը  
փշրուի փրփրադէզ անկումով: Հազարումէկ  
չփոթ խոխոջներ կը բարձրանան իր աղմկալից  
ջուրերէն. անտառին հովերէն ցիրուցան, մերթ  
խոյս կուտան հետուն, մերթ իրարու կը մօտե-  
նան ամէնքը միասին ու Մայր եկեղեցիի զան-  
գակներու ձայնին պէս խլացուցիչ աղմուկ մը  
կը հանեն. հակառակ ամբան տօթին՝ ջուրերու շար-  
ժումին շնորհիւ միշտ վերանորոգուած օդը այդ գե-  
տին եզերքներուն վրայ կը սփռէ դալարիք ու  
զովութիւն, որոնք հազուադիւտ են այդ կղզիին  
մէջ, նոյն իսկ լեռներու կատարին վրայ:

Հոնկէ քիչ մը անդին կը կանգնի ապառաժ  
մը, որ ջրվէժէն բաւական հետու է, ու ասոր  
համար է որ ջուրերուն աղմուկը խլացուցիչ չի  
դառնար, բայց բաւական ալ մօտիկ է, որով  
կարելի է անոնց տեսքը, զովութիւնը և մըր-  
մունքը վայելել: Սաստիկ տաքերուն, Տիկին տը

Լա թուր, Մարկրիթ, Վիրժինի, Բօլ և ևս մերթ  
կ'երթ աշինք, այդ ապառաժին հովանիին տակ  
ճաշելու: Եւ որովհետեւ Վիրժինի իր ամէնէն  
սովորական գործերուն մէջ իսկ ուրիշներուն բա-  
րիք ընելու վրայ կը խորհէր, գաշտին մէջ  
պտուղ մը ուտելուն պէս՝ հողին մէջ կը տնկէր  
անոր կորիզները կամ կուտերը: Ու կ'ըսէր ան.

— Ասոնցմէ առաջ պիտի գան ծառեր, որոնք  
պտուղներ պիտի պարգեւեն քանի մը ճամբորդ-  
ներու կամ թռչունի մը, գէթ:

Օրին մէկը, ապառաժին ստորտար հնդկասելի  
ուտելէ յետոյ՝ Վիրժինի անոր հունտերը տնկեց:  
Շատ հանցած, հնդկասելիսենիներ բուսան, որոնց մէջ  
էգ մը կար, այսինքն պտղատու: Վիրժինի կըղ-  
զիէն մեկնած ատեն ծունկէն աւելի բարձր չէր  
այդ թուփը, բայց արագ աճելուն համար, երկու  
տարի յետոյ քսան ոտք բարձրութիւն ունէր,  
ու իր բունին վերի մասը շրջապատուած էր  
հասուն պտուղներու քանի մը կարգերով: Բօլ  
դիպուածաւ հոն երթալով՝ ուրախութեամբ լեց-  
ուեցաւ, երբ նշմարեց այդ մեծ ծառը, զոր իր  
բարեկամունին տնկած էր, ինչպէս ականատես  
եղած էր: Բօլ միեւնոյն ատեն խոր տըխ-  
րութիւն մը զգաց, Վիրժինիին երկարատեւ  
բացակայութիւնը վկայող այդ ծառին հանդէպ:

Կեանքի արագասահ գնացքը մեզի մատնա-  
նիչ չըներ այն առարկաները զոր կը տես-  
նենք սովորաբար. անոնք մեզի հետ կը ծերա-  
նան անզգալի ծերութեամբ մը, բայց քանի մը  
տարիէ ի վեր մեր տեսողութենէն կորսուած ա-  
ռարկաները՝ նորէն տեսնելնուս պէս՝ մեզի կ'ազ-  
գարարեն ունենալ այն արագութիւնը, որով կը  
սահի մեր կեանքի գետը: Բօլ ալ ապշեցաւ ու  
վրդովեցաւ, ի տես պտուղներով ծանրաբեռնուած



այդ մեծ հնդկասեխենիին, ճիշդ այն ճամբորդին  
պէս որ երկար տունն իր երկրէն բացակայ մնա-  
լէ յետոյ՝ իր ժամանակակիցները չի գտներ ու  
հոն կը տեսնէ ծծկեր ձգած գաւակները՝ ընտանի-  
քի հայր դարձած Թօլ երբեմն կ'ուզէր կտրել  
այդ ծառը, որովհետեւ իրեն շատ զգալի կը  
դարձնէր։ Վիրժինիի երկարատեւ բացակայու-  
թիւնը, իսկ երբեմն ալ այդ ծառը կը նկատէր  
իբր մէկ յիշատակարանը Վիրժինիի բարեփոխու-  
թեան, կը համբուրէր անոր բուն ու սիրազեղ և  
վշտագին խօսքեր կ'ուզէր։ Ո՛վ ծառ, որուն  
սերունդը տակաւին կը գտնուի մեր անտառնե-  
րուն մէջ, քեզ աւելի շահագրգռութեամբ ու  
պատկառանքով դիտած եմ քան թէ Հոսմայեցի-  
ներու յաղթական կամարները։ Բնութիւնը,  
որ ամէն օր կը փճ ցնէ թաղաւորներու փառա-  
յեղ յիշատակարանները, իցի՛ւ թէ մեր անտառնե-  
րուն մէջ բազմապատկէ ծաղկատի և հէզ աղջկան  
մը բարեգործութեան յիշատակարանները։

Ուստի վստահ էի որ այդ հնդկասեխենիին  
տակ պիտի հանդիպէի Թօլի, երբ մեր թաղը դար-  
ան։ Օրին մէկը հոն գտայ Թօլը, մեղամաղձու-  
թեամբ տոգորուած, ու անոր հետ խօսակցու-  
թիւն մը ունեցայ, զոր առաջ պիտի բերեմ, եթէ  
երբեք ձեզ չեմ ձանձրացնէր իմ երկար շեղում-  
ներովս, ինչ որ ներելի է իմ տարիքիս ու անոնց  
նկատմամբ ունեցած վերջին յարգանքիս։ Տրա-  
մախօսութեան ձեւով պիտի պատմեմ ձեզի, որ  
պէսզի դուք ալ գատէք այդ երիտասարդին բնա-  
կան ողջմտութիւնը։ դուք դիւրաւ պիտի հաս-  
կնաք խօսակիցներուն տարբերութիւնը, չնոր՞  
հիւ անոր հարցումներուն և իմ տուած պատուա-  
խաններուս։ Թօլ բաւ ինձի։

— Շատ տխրած եմ: Օր․ տը Լա թուր երկու տարի երկու ամիսէ ի վեր մեկնած է, իսկ ութուկէս ամիսէ ի վեր նամակ չէ գրած մեզի: Ան հարուստ է, ու ես՝ աղքատ: Այլ ևս մոռցած է զիս: Կը փափագիմ նաև նստիլ ու Ֆրանսա երթալ. հոն թագաւորին ծառայութեան մէջ պիտի մտնեմ, պիտի հարստանամ, ու Օր․ տը Լա թուրի մեծ հօրաքոյրը ինծի կնութեան պիտի տայ Վիրժինին, երբ մեծ ազնուական մը ըլլամ:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Ո՛վ իմ բարեկամս, դուք իսկ չըսի՞ք թէ ազնուականութիւնն չունիք:

### ԲՕԼ

Մայրս ըսաւ, բայց ես չեմ գիտեր թէ ի՞նչ է ազնուականութիւնը: Ես բնաւ չեմ նշմարած որ ուրիշներէ նուազ ազնուականութիւնն ունիմ, և ոչ ալ ուրիշներ՝ ինչէ աւելի:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Ֆրանսայի մէջ, մեծ պաշտօններու ուղին փակ պիտի մնայ ձեր առջև, որովհետեւ դուք ազնուազարմ չէք: Ատկէ աւելին կայ. դուք նոյն իսկ չէք կրնար ընդունուիլ ազնուազարմ դասուն մէջ:

### ԲՕԼ

Քանիցս ինծի ըսիք թէ Ֆրանսայի մեծութեան պատճառներէն մէկը այն էր որ հոն ամենայետին հպատակը կրնար ամենաբարձր աստիճանին հասնիլ, ու նշանաւոր շատ մը մարդոց անուններ յիշեցիք որոնք պատիւ կը բերեն իրենց հայրենիքին, հակառակ իրենց խոնարհ

վիճակին : Ուրեմն չէի՞ք ուզեր իմ քաջութիւնս  
խրախուսել :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Չաւակս, երբեք չպիտի վհատեցնեմ ձեր  
քաջութիւնը : Ես ճշմարտութիւնը ըսի անցեալ  
ժամանակներու մասին . բայց հիմա ամէն բան  
չառ փոխուած է . Ֆրանսայի մէջ ամէն ինչ  
վարձքի համար կը կատարուի . հոն փոքրաթիւ  
ընտանիքներ միայն հօրենական ժառանգութիւն  
ունին կամ ամէն ինչ համախոտնեցու միջև բաժ-  
նուած է : Թագաւորը արեղակ մըն է , զոր ամ-  
պիրու պէս կը շրջապատեն աւագանին և անոնց  
համախոտները . գրեթէ անկարելի է որ ձեր վրայ  
իյնայ այդ արեղակին շողերէն մէկը : Ատենօք ,  
այդ սքանչելիքը տեսնուած է նուազ կնճռոտ  
վարչութեան մը մէջ : Այն ատեն տաղանգնե-  
րը և արժանիքը ի յայտ կուգային այն անմշակ  
հողերուն պէս , որոնք հերկուելէ յետոյ իրենց  
բովանդակ հիւթով կը պտղաբերին : Բայց հազ-  
ուադիւտ են այն թագաւորները , որոնք մար-  
դիկը կը ճանչնան ու դիտեն զանոնք ընտրել :  
Թագաւորները առհասարակ կը հետեւին աւագա-  
նիին ու անոնց համախոտնեցու դրդումներուն :

### ԲՕԼ

Թերեւս պիտի կարենամ գտնել աւագանիէն  
մէկը , որ զիս պաշտպանէ :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Աւագանիին կողմէ պաշտպանուելու համար ,  
պէտք է ծառայել անոր փառասիրութեան ու  
հաճոյքներուն : Դուք չպիտի կրնաք յաջողիլ  
այդ բանին մէջ , որովհետեւ ազնուական չէք և  
ուղղամտութիւն ունիք :

Բայց ևս այնպիսի քաջագործութիւններ պիտի ընեմ, խօսքիս մէջ այնքան հաւատարիմ, իմ պարտականութիւններուս մէջ այնքան եռանդուն ու անյողդողդ պիտի ըլլամ որ ի վերջոյ անոնցմէ մէկուն կողմէ որդեգրուելու արժանի պիտի նկատուիմ, ինչպէս կարգացած ևմ այն հին վէպերուն մէջ, զոր ինծի տուիք ընթերցանութեան համար:

ՅԵՐՈՒՆԻՆ

Ո՛վ իմ բարեկամս, Յոյներուն և Հռոմայեցիներուն մէջ. նոյնիսկ անկումի շրջանին, աւագանին կը պատկանէր առաքինութենէն. բայց այսօր ամէն կարգի նշանաւոր մարդիկ ունինք, որոնք ժողովուրդի դասէն սերած են, ու իմ գիտցածիս համաձայն՝ անոնցմէ ոչ մէկը որդեգրուած չէ մեծ գերդաստանի մը կողմէ: Եթէ մեր թագաւորները չըլլային, առաքինութիւնը Ֆրանսայի մէջ ռամիկին միայն պիտի պատկանէր մշտնջենապէս: Ինչպէս ըսի արդէն. երբեմն կը պատուեն առաքինութիւնը, երբ նշմարեն զայն, բայց այսօր դրամով միայն կը ձեռք կը բերուին այդ պատիւները:

Եթէ չկարենամ աւագանիէն մէկը գտնել, պիտի ջանամ անոր մէկ համախոհին հաճելի թուիլ: Կատարելապէս պիտի իւրացնեմ անոր ոգին ու կարծիքները, ինքզինքս սիրելի ընծայելու համար:

ՅԵՐՈՒՆԻՆ

Ուրեմն դուք ալ ուրիշ մարդոց պէս պիտի

ընէք. ձեր խիղճէն պիտի հրաժարիք, հարըստութիւն ձեռք բերելու համար:

ԲՅԼ

Օհ, ոչ, ճշմարտութիւնը միայն պիտի փնտոենմ:

ԾԵՐՈՒՆԻՆ

Փոխանակ ինքզինքնիդ սիրցնել տալու, կրնաք անոնց ատելի դառնալ: Արդէն, համախոհները շատ քիչ կը շահագրգռուին ճշմարտութեան յայտնաբերումով: Փառասէրները անտարբեր են բոլոր կարծիքներուն հանդէպ, բաւ է որ կառավարեն:

ԲՅԼ

Որքա՛ն անբախտ եմ եղեր. ամէն ինչ հակառակ կ'երթայ ինծի: Ես դատապարտուած եմ կեանքս անցնելու անփառունակ աշխատանքի մը մէջ, վիրժինիէն հեռու, ըսաւ հառաչագին:

ԾԵՐՈՒՆԻՆ

Թո՛ղ Աստուած ձեր միակ պաշտպանը ըլլայ, ու մարդկային ազգը՝ ձեզի համախոհ: Միշտ փարեցէք երկուքին ալ: Ազգատոհմերը, համախոհները, ժողովուրդները, թագաւորները ունին իրենց նախապաշարումները ու կիրքերը. յաճախ պէտք է անոնց ծառայել մոլութիւններով, մինչդեռ Աստուած և մարդկային ազգը մենէ առաքինութիւն միայն կը պահանջեն:

Բայց զուք ինչո՞ւ կ'ուզէք գերազանց հանդիսանալ մարդոց միջև: Բնական զգացում մը չէ ատիկա, քանի որ ամէն մարդ իր դրացիին հետ կռուի պիտի բռնուէր, եթէ երբեք այդ

զգացումը ունենար: Գուք միայն գոհացէք ձեր  
պարտականութիւնը կատարելով այն վիճակին  
մէջ, ուր կը գտնուիք, Նախախնամութեան  
շնորհիւ. օրհնեցէ՛ք ձեր բախտը, որովհետեւ ան  
կը թոյլատրէ ձեր խիղճը պահել, ու ձեզ չի բռն-  
նադատեր որ՝ ջոջերուն պէս՝ ձեր երջանկու-  
թիւնը կախում ունենայ փոքրերու կարծիքէն,  
ինչպէս չի բռնադատեր որ փոքրերուն պէս՝  
սողաք ջոջերուն առջեւ, ապրուստ մը ապահո-  
վելու համար:

Գուք կը գտնուիք այնպիսի երկրի մը մէջ,  
ուր ապրուելու համար, պէտք չունիք ո՛չ խա-  
բելու, ոչ շողոքորթելու և ոչ ալ նուաստանա-  
լու, ինչպէս կ'ընեն անոնցմէ շատեր, որոնք  
հարստութիւն կը փնտռեն Եւրոպայի մէջ. հոս  
ձեր վիճակը արգելք չըլլար առաքինութեան.  
հոս կրնաք բարի, ճշմարտասէր, անկեղծ, կըրթ-  
եալ, համբերատար, ժուժկալ, զգաստ, ներողա-  
միտ, երկիւղած ըլլալ, առանց վնասուելու,  
առանց ծիծաղելի դարձնելու ձեր նորափթիթ  
իմաստութիւնը: Երկինքը ձեզի տուած է ազա-  
տութիւն, առողջութիւն, բարի խիղճ մը և  
բարեկամներ. ձեզի չափ երջանիկ չեն այն թա-  
ղաւորները, ոյսնց քով շնորհ գտնել կ'ուզէք:

### ԲՕԼ

Ա՛ն, Վիրժինիին պակասն է որ կ'զգածի:  
Առանց անոր, ոչինչ ունիմ. իսկ անով՝ ամէն  
ինչ պիտի ունենամ: Ան է իմ ազնուականու-  
թիւնս, փառքս և հարստութիւնս: Բայց քանի  
որ իր ազգականունին կ'ուզէ Վիրժինին ամուս-  
նացնել մեծանուն մարդու մը հետ, քանի որ

ուսման և գրքերու շնորհիւ մարդ գիտուն ու  
նշանաւոր կ'ըլլայ, ևս ալ կ'ուզեմ ուսում առ-  
նել: Գիտութեան պիտի հետեւիմ ու հայրենի-  
քիս օգտակարապէս պիտի ծառայեմ, իմ հմտու-  
թեանս շնորհիւ, առանց մէկուն վնասելու և  
առանց մէկէն կախում ունենալու. հոգակաւոր  
պիտի դառնամ ու փառքս ինծի միայն պիտի  
պատկանի:

### ՄԵՐ ՈՒՆԻՆ

Զաւակս, տաղանդը աւելի է սզուազիւտ է  
քան ազնուականութիւնը և հարստութիւնը.  
անտարակոյս, տաղանդը շատ աւելի մեծ բարիք  
մըն է, քանի որ ոչ ոք կրնայ կապտել զայն,  
ու ամէն տեղ հանրային: համարումի կ'արժանա-  
նայ, թէեւ մարդուս սուղի կը նստի. ան ձեռք  
կը բերուի ամէն տեսակ զրկանքներով, զմայլե-  
լի զգայականութեամբ մը, որ մեզ դժբախտ կը  
դարձնէ թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ, ինչ-  
պէս նաև ժամանակակիցներու հալածանքներով:  
Փրանսոյի մէջ դատաւորները զինւորական  
փառքին վրայ չեն նախանձիր բնաւ, և ոչ ալ  
զինւորականը՝ ծովային մարդուն փառքին վրայ.  
հոն ամէն ոք ձեր ճակրտէն կը հետեւի, որով-  
հետեւ իր ուշիմութեան վրայ կը պարծի: Դուք  
կ'ըսէք թէ մարդոց պիտի ծառայէք: Բայց այն  
մարդը, որ հողէն սրայ մը կը հասցնէ, աւել-  
լի մեծ ծառայութիւն կը մատուցանէ քան մա-  
տենագիր մը:

### ԲՕԼ

Սա հնդկաստիսենին տնկող մարդը աւելի օգ-  
տակար և հաճելի նուէր մը ըրած է անտառին

բնակիչներուն քան եթէ անոր ընծայէր զբա-  
զարան մը: (Ու թեւերուն մէջ առնելով այդ ծա-  
ռը, յափշտակութեամբ համբուրեց զայն:)

### ԾԵՐՈՒՆԻՆ

Դարերով, Եւրոպացիներու մտիեզնութեանց  
իբր պատրուակ ծառայած է զբքերուն լաւա-  
գոյնը, Աւետարանը, որ հաւասարութիւն, բա-  
րեկամութիւն, մարդասիրութիւն և միաբանու-  
թիւն միայն կը քարոզէ: Աւետարանին անու-  
նով, երկրի վրայ հանրային ու անհատական որ-  
քան բոնութիւններ ի գործ կը դրուին: Այսու-  
հետեւ ո՞վ պիտի պարծենայ թէ զբքով մը կրնայ  
օգտակար ըլլալ մարդոց: Գիտէ՞ք թէ ի՞նչ եղած  
է վախճանը փիլիսոփաներու մեծ մասին, որոնք  
իմաստութիւն քարոզած են մարդոց: Հոմերոս,  
որ այնքան գեղեցիկ քերթուածներ ընծայած է,  
ողորմութիւն կը մուրար իր կեանքին մէջ: Առկ-  
րատ, որ իր ճասերով ու իր բարքով այնքան  
գեղեցիկ դասեր առաւ Աթենացիներուն, ըստ  
օրինի թունաւորուելու գատապարտուեցաւ ա-  
նոնց կողմէ: Իր վեհօղի աշակերտը՝ Պլատոն գերու-  
թեան մատնուեցաւ այն իշխանին հրամանով  
իսկ, որ զինքը կը պաշտպանէր. անոնցմէ ա-  
ռաջ՝ Պիթագորաս, որ անասուններն իսկ կը  
մեղքնար, ողջ ողջ այրուեցաւ կրօնօնիացիներ-  
էն: Տակաւին ըսե՞մ. մեծանուն մարդոցմէ շա-  
տերուն վարքագիծը այլափոխուած է զիրենք  
յատկանշող երգիծանքով, որովհետեւ մարդկա-  
յին ապերախտութիւնը հաճոյք կը զգայ այդ  
բանէն. իսկ ոմանց փառքը անեղծ և անրիժ  
հասած է մեղի, անոր համար որ իրենց ժամա-  
նակակիցներու ընկերակցութենէն հեռու ապրած



են, այն արձաններուն պէս, որոնք ամբողջովին  
երեւան կը հանուին Յունաստանի և Իտալիոյ  
դաշտերուն մէջ, ու գետնին ծոցը թաղուած ըլ-  
լալնուն, բարբարոսներու մոլեգնութենէն զերծ  
մնացած են :

Ինչպէս կը տեսնէք, մատենագրութեան փո-  
թորկալից փառքը շահելու համար, պէտք է ա-  
ռաքինի ըլլալ, ու պատրաստ՝ կեանքը զոհելու :  
Մնաց որ, կը կարծէ՞ք թէ հարուստ մարդիկ Ֆրանս  
սայի մէջ կը շահագրգռուին այդ փառքով : Անոնք  
կարեւորութիւն չեն ընծայեր մատենագիրնե-  
րուն, քանի որ այս վերջինները իրենց հմտու-  
թեամբ, ոչ հայրենիքին մէջ պատիւներու  
կ'արժանանան, և ոչ ալ կառավարութեան ու ար-  
քունիքին մէջ մուտ կը գործեն :

Մատենագիրները շատ չեն հալածուիր այս դա-  
րուն մէջ, ուր ամէն բանի հանդէպ մարդիկ անտար-  
բեր են, բացի հարստութենէ և հեշտանքէ, բայց  
գիտութիւնը և առաքինութիւնը հոչակաւոր  
չեն դարձներ մարդը, քանի որ Պետութեան մէջ  
ամէն ինչ դրամով ձեռք կը բերուի : Ատենօք,  
ապահով վարձատրութիւններ կը գտնէին եկե-  
ղեցական, դատաւորական ու վարչական դանա-  
զան պաշտօններու մէջ, այսօր գիրքեր միայն  
կը յօրինեն : Բայց, աշխարհիկ մարդոցմէ քիչ դնա-  
հատուած այս պտուղը միշտ արժանի է իր երկ-  
նային ծագման :

Մասնաւորաբար այդ դրքերուն վերապահ-  
ուած է փայլ ընծայել աննշմար առաքինու-  
թեան, սփոփել թշուառները և ճշմարտութիւնը  
ըսել նոյնիսկ թագաւորներուն : Անվիճելիօրէն,  
ամէնէն փառայեղ պաշտօնն է, որով երկինք  
մարդը պատուած ըլլայ երբեք երկլի վրայ : Հա-

կառակ հարուստներու ցոյց տուած անիրաւութիւններուն և արհամարհանքին, ո՞վ չի մխիթարուիր, երբ կը խորհի որ իր երկասիրութիւնը դարէ դար և ազգէ ազգ պիտի ապրի ու իբր ամբարտակ պիտի ծառայէ ընդդէմ մոլութեան և բռնակալներու, իսկ մատենագրին անշուք կեանքին ծոցէն պիտի ժայթքէ փառք մը, որ թագաւորներու փառքերը պիտի ջնջէ, քանի որ անոնց յիշատակարանները կը կորսուին մոռացման մէջ, հակառակ անոր որ շողոմարարները կը բարձրացնեն ու կը դրուատեն զանոնք:

### ԲՅՈՒ

Ա՛հ, ես այդ փառքին կը ցանկամ, Վիրթինիին վրայ սփռելու և տիեզերքին սիրելի ընծայելու համար զայն: Բայց դուք որ այնքան ծանօթութիւններ ունիք, ինձի ըսէ՛ք թէ իրարու հետ պիտի ամուսնանա՞նք: Ես կ'ուզեմ գիտուն ըլլալ, ապագան ճանչնալու համար:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Ջաւա'կս, ո՞վ պիտի ուզէր ապրիլ, եթէ երբեք ապագան գիտնար: Կանխատեսուած միակ դժբախտութիւն մը սնտոյի մտահոգութիւններ կը պատճառէ: Անվրէպ դժբախտութեան մը պատկերն իսկ պիտի թունաւորէ այնուհետև ապրուած օրերը: Նոյնիսկ չափազանց խորացնելու չէ մեզ շրջապատող բաները, ու երկինք որ մեզի խելք տուած է, մեր պէտքերը հոգալու համար, այդ պէտքերը տուած է մեզի, որպէսզի չափ մը դնենք մեր խորհրդածութեանց:

### ԲՅՈՒ

Դուք կ'ըսէք թէ Եւրոպայի մէջ դրամի

Հնորհիւ ձեռք կը բերուին աստիճաններ ու պատիւներ : Ես Պէնկալ պիտի երթամ, որպէսզի հարստանամ ու յետոյ Բարիզ, Վիրժինիին հետ ամուսնանալու համար : Շողենաւ պիտի նստիմ հիմա :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Ի՛նչ, դուք երեսի վրայ պիտի՞ ձգէք անոր մայրը և ձեր մայրը :

ԲՅՈՒ

Դուք իսկ ինձի խորհուրդ տուիք որ Հընդկաստան երթամ :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Վիրժինին հոս էր այն ատեն : Բայց հիմա դուք միակ նեցուկն էք ձեր մօր և անոր մօր :

ԲՅՈՒ

Վիրժինի անոնց պիտի օգնէ, իր հայուստ ազգականուհիին շնորհիւ :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Հարուստները կ'օգնեն անոնց միայն որոնք այս աշխարհի մէջ պատիւ, կը բերեն իրենց Տիկին տը և թուրէն աւելի եղկելի ազգականներ ունին, բայց իրենց ազատութիւնը կը զոհեն այդ խեղճերը, ապրուստնին ճարելու համար, ու վաճառքու մէջ փակուած կ'անցնեն իրենց կեանքը, որովհետեւ իրենց չեն օգներ հարուստ ազգականները :

ԲՅՈՒ

Ատ ի՛նչ երկիր է Եւրոպա : Օ՛հ, պէտք է որ Վիրժինի հոս վերադառնայ. հարուստ ազգա-

կանուհիի մը օգնութեան պէտք չունի ան: Որքան գոհ էր սա խորճիթներուն մէջ, ու որքան սիրուն ու լաւ զարդարուած՝ կարմիր թաշկինակով մը ու գլուխը ծաղկեպսակով մը: Հոս եկողը, Վիրժինի. թո՛ղ քու ապարանքներդ ու ճոխութիւններդ: Վերադարձի՛ր այս ապառաժներուն, այս անտառներուն և հնդկընկուզներիններուն հովանիին տակ: Սփսո՛ս, թերեւս դժբախտ ես հիմա...: Ու ան կը սկսէր արտասուել: Հա՛յրիմ, ոչ մէկ բան զաղտնի պահեցէք ինչ. եթէ չէք կրնար ինձի ըսել թէ Վիրժինիին հետ պիտի կրնամ ամուսնանալ, գէթ իմաց տուէք որ ան կը սիրէ զիս այն ազնուականներուն միջև, որոնք թագաւորին հետ կը խօսին ու կը տեսնեն զայն:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Օ՛հ, բարեկամս, վստահ եմ որ Վիրժինի կը սիրէ ձեզ՝ քանի մը պատճառներով, բայց առաւելապէս՝ առաքինի ըլլալուն համար: (Այս խօսքերուն վրայ՝ Բօլ վիզս ցատկեց, ու լախութեանէն ցնծուն):

### ԲՕԼ

Բայց կը կարծէ՞ք որ Եւրոպայի կիները անհաւատարիմ ըլլան, ինչպէս զանոնք կը ներկայացնեն այն կատակերգութիւնները և գրքերը զոր ինձի փոխ տուած էք:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Կիները անհաւատարիմ են այն երկիրներուն մէջ, ուր էրիկ մարդիկ բռնաւոր են: Բռնութիւնը ամէն տեղ նենդութիւն առաջ կը բերէ:

Ի՞նչպէս կարելի է կիներուն վրայ բռնանալ :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Երբ կիները ամուսնացնեն, առանց խորհուրդ հարցնելու անոնց, ծաղկատի աղջիկ մը կ'ամուսնացնեն ծերունիի մը հետ, ու զգայուն կին մը՝ անզգայ մարդու մը հետ :

Ինչո՞ւ իրարու հետ չեն ամուսնացներ յարմար զոյգերը, երիտասարդները՝ երիտասարդներուն հետ, սիրահարները՝ իրենց սիրուհիներուն հետ :

### ԾԵՐՈՒՆԻՆ

Որովհետեւ Ֆրանսայի մէջ երիտասարդները մեծ մասամբ հարստութիւն չունին ու ծերանալէ յետոյ միայն ձեռք կը բերեն զայն : Երիտասարդ եղած ատեննին գլխէ կը հանեն իրենց դրացիներուն կիները, իսկ երբ ծերանան, իրենց կողակիցներուն սէրը չեն կրնար գրաւել : Երիտասարդութեան շրջանին՝ ուրիշները խաբած են, ու ծերութեան ատեն իրենց կարգին կը խաբուին : Տիեզերական արդարութեան մէկ հակադրեցութիւնն է աս, որ աշխարհը կը կառավարէ, ծայրայեղութիւն մը կը հակակշռուի ուրիշ ծայրայեղութեամբ մը : Այսպէս՝ Եւրոպացիներու մեծ մասը կրկնակ անկարգութեամբ մը կ'անցնեն իրենց կեանքը, ու այդ անկարգութիւնը ընկերութեան մը մէջ այնքան կ'աւելնայ որքան հարստութիւնները կուտակուին փոքրաթիւ մարդոց քով : Պետութիւնը կը նմանի պարտէզի մը,

ուր փոքր ծառերը չեն կրնար աճիլ, եթէ հոն գտնուին անոնց վրայ շուք տարածող շատ մեծ ծառեր. միայն սա տարբերութիւնը կայ որ պարտէզ մը կրնայ գեղեցիկ ըլլալ փոքրաթիւ մեծ ծառերու շնորհիւ, մինչ պետութեան մը քարգաւաճումը կախում ունի հպատակներու բազմութենէն ու հաւասարութենէն, և ոչ թէ սակաւաթիւ հարուստներէ :

ԲՅՈՂ

Բայց ամուսնանալու համար, միթէ պէ՞տք կայ հարստանալու :

ԾԵՐՈՒՆԻՆ

Որպէսզի մարդ յղիութեան մէջ անցնէ իր օրերը, առանց բան մը ընելու :

ԲՅՈՂ

Բայց մարդ ինչո՞ւ չ'աշխատի : Ահա՛, ես կ'աշխատիմ :

ԾԵՐՈՒՆԻՆ

Որովհետեւ Եւրոպայի մէջ անպատուաբեր նկատուած է աշխատանքը. մեքենական ծառայութիւն կը կոչեն զայն : Հողամշակութիւնն իսկ ամէնքէն արհամարհուած է : Արհեստաւոր մը աւելի յարգի է քան գեղացի մը :

ԲՅՈՂ

Ի՞նչ, մարդիկը սնուցանող արուեստը արհամարհուած է Եւրոպայի մէջ : Չեմ հասկնար ձեր խօսքին իմաստը :

ԾԵՐՈՒՆԻՆ

Օ՛հ, բնութեան մէջ մեծցած մարդ մը չի

կրնար ըմբռնել մարդկային ընկերութեան մոլորանքները: Մարդ կրնայ ճշգրիտ դալափար մը կազմել կարգաւորութեան մաւին, բայց ո՛չ անկարգութեան մասին: Գեղեցկութիւնը, առաքինութիւնը, երջանկութիւնը համեմատութիւններ ունին, մինչ տղեղութիւնը, մոլութիւնը և թշուառութիւնը զուրկ են այդ բանէն:

### ԲՕԼ

Ուրեմն հարուստները շատ երջանիկ են ու ո՛չ մէկ խոչընդոտի կը հանդիպին. անոնք կըրնան հաճոյքներով զեղուլ իրենց սիրելիները:

### ԾԵՐՈՒՆԻՆ

Անոնք մեծ մասամբ հաճոյքներու մէջ մաշած են, որովհետեւ ու է յոգնութիւն չեն կրեր: Գուք չէ՞ք փորձած որ հանդիստի հաճոյքը յոգնութեամբ ձեռք կը բերուի, անօթութիւնը կ'անցնի ուտելով, ծարաւն ալ՝ խմելով: Արդ, սիրելու և սիրուելու հաճոյքն ալ ձեռք կը բերուի շատ մը զրկանքներով ու զոհողութիւններով: Հարստութիւնները բոլոր այդ հաճոյքներէն կը զրկեն մարդիկը, քանի որ անոնց պէտքերը կը կանխատեսեն: Յափրացումին հետեւանքը եղող ձայնձրոյթին վրայ աւելցուցէք ճոխութեանց պատճառած հպարտութիւնը, որով ամենափոքր զրկանք մը կը խոցէ, մինչ ամենամեծ վայելքները բնաւ չեն սփոփեր զիրենք: Հազարումէկ վարդերու անուշահոտութիւնը մէկ վայրկեան հաճոյ կը թուի, իսկ անոնց փուշերէն մէկուն պատճառած ցաւը խայթելէն ետքն ալ երկար կը տեւէ: Հարուստներուն այնպէս կը թուի որ ծաղիկներուն մէջտեղ գտնուող փուշ մըն է այն վիշտը զոր կը զգան հաճոյքներուն մէջ:

Ընդհակառակը, վշտահար աղքատներուն համար, փուշերով ծածկուած ծաղիկ մըն է հաճոյքը, զոր խորապէս կը վայելեն անոնք: Ամէն տպաւորութիւն կը սաստկանայ իր հակադրութեամբ: Բնութիւնը ամէն ինչ համակշռած է: Ամէն ինչ լաւ կշռելով, կը նախընտրէ՞ք բնաւ չյուսալ ու ամէն բանէ կասկածիլ թէ ամէն ինչ յուսալ ու բանէ մը չկասկածիլ: Առաջին վիճակին մէջ կը գրտնուին հարուստները, իսկ վերջին վիճակին մէջ՝ աղքատները: Բայց այս ծայրայեղութեանց դժուարաւ կը տոկան այն մարդիկ, որոնց երջանկութիւնը կը կայանայ միջակութեան և առաքինութեան մէջ:

ԲՕԼ

Առաքինութիւն ըսելով ի՞նչ կը հասկնաք:  
ՄԵՐՈՒՆԻՆ

Չաւա՛կս, դուք որ ձեր ծնողքին տպաւորութիւնը կը ճարէք ձեր իսկ աշխատութեամբ, պէտք չունիք իմանալու առաքինութեան սահմանը: Առաքինութիւնը ճիգ մըն է զոր մեր անձին վրայ ի գործ կը դնենք ի նպատու ուրիշին, Աստուծոյ հաճելի թուելու մտադրութեամբ միայն:

ԲՕԼ

Օ՛հ, Վիրժինի որքա՛ն առաքինի է: Ան ուղեց հարստանալ առաքինութեան համար, որպէսզի ուրիշներուն բարիք ընէ: Առաքինութեան համար է որ այս կղզիէն մեկնեցաւ: Գարձեալ առաքինութիւնն է որ զայն հոս պիտի վերադարձնէ»:

Վիրժինի մօտալուտ վերադարձի: «աղափարը կ'ոգեւորէր Բօլի երեւակայութիւնը ու կը փարատէր անոր բոլոր մտահոգութիւնները: Վիրժինի նամակ չէր գրեր, որովհետեւ քիչ սու-



տենէն պիտի վերադառնար: Ու նպաստաւոր  
հովի մը շնորհիւ, Եւրոպայէն ո՛րքան շուտով  
պիտի հասնէր: Բօլ կը թուէր այն նաւերը, ու  
որոնք երեք ամիսէն նուազ ժամանակամիջոցի  
մը մէջ կտրած էին չորս հազար հինգ հարիւր մղոն  
ճամբան: Վիրժինիին նստած նաւով երկու ամի-  
սէն աւելի չպիտի երկարէր ճամբորդութիւնը.  
այսօր նաւ շինողները շատ գիտուն են ու նա-  
ւագները՝ շատ ճարտար: Բօլ կը խօսէր այն  
պատրաստութեանց վրայ զոր պիտի ընէր, ըն-  
դունելու համար Վիրժինին. նոր շէնք մը պիտի  
կառուցանէր, ամէն օր զբօսանքներ ու անա-  
կնկալներ պիտի սարքէր անոր համար, երբ իր  
կինը ըլլար ան...: Իր կի՛ւր...: Այդ գաղափարը  
յափշտակու թեան կը մատնէր Բօլը:

— Հա՛յր իմ, այն ատեն հաճոյքի համար  
միայն պիտի աշխատիք, կ'ըսէր Բօլ: Վիրժինի  
հարուստ ըլլալ էն, շատ մը սեւամորթներ պիտի  
ունենանք մեր քով, որոնք մեզի համար պիտի  
աշխատին: Միշտ մեզի հետ պիտի գտնուիք,  
քանի որ զուարճանալէ և հրճուելէ զատ ուրիշ  
բանի վրայ չպիտի խորհիք:

Ու ցնծագին, Բօլ ընտանիքին քով կ'եր-  
թար, անոր հազորակելու համար այն ուրախու-  
թիւնը, որով գինովցած էր:

Քիչ ատենէն, ծանր կասկածները կը յաջոր-  
դէին մեծ յոյսերու: Բուռն տարփանքները ներ-  
հակ տագնապներու կը մատնեն հոգին: Յաջորդ  
օրն իսկ, Բօլ զիս տեսնելու կուգար, ու տխրու-  
թեամբ ընկճուած, ինծի կ'ըսէր.

— Վիրժինի ինծի նամակ չի գրեր բնաւ:  
Եթէ երբեք Եւրոպայէն մեկնած ըլլար, ինծի  
իմաց պիտի տար ճամբայ ելլելը: Ա՛հ, անոր մա-

սին շրջած զրոյցները շատ հիմնաւոր ըլլալու են :  
Իր հօրաքոյրը մեծ ազնուականի մը հետ ամուս-  
նացուցած է զայն : Հարստանալու տենչանքը  
կորստեան մատնած է վիրտիւնի, ինչպէս շատ մը  
անձեր : Այն գրքերուն մէջ, ուր կիները այն-  
քան լաւ նկարագրուած են, առաքինութիւնը  
վէպի նիւթ մըն է միայն : Եթէ երբեք վիրտիւնի  
առաքինութիւն ունեցած ըլլար, իր մօրմէն և  
ինչ չպիտի բաժնուէր : Մինչ ես կեանքս կ'ան-  
ցնեմ, խորհելով, ան կը մոռնայ զիս : Ես կը  
վշտակրթմ, իսկ ան կը զուարճանայ : Ա՛հ, այս  
մտածումը յուսահատութեան կը մատնէ զիս :  
Ամէն աշխատանք անհաճոյ կը թուի, ամէն ըն-  
կերութիւն ձանձրոյթ կը պատճառէ ինծի : Իցի՛ւ  
թէ Հնդկաստանի մէջ պատերազմ ծագէր, ու ես  
հոն երթայի, մեռնելու համար :

— Զաւա՛կս, պատասխանեցի անոր, վայր-  
կենական քաջութիւն մըն է որ մահուան մէջ  
կը նետէ մեզ : Յաճախ գրողուած է մարդոց փը-  
ցուն գրուատիքներէն : Աւելի հազուադիւտ և  
անհրաժեշտ քաջութիւն մը կայ, որով ամէն օր  
կեանքի ձոխողուածներուն կը տոկանք, առանց  
վկայի ու ներբողի : համբերութիւնն է ան : Ոչ  
թէ ուրիշներու կարծիքին կամ կիրքերու մղու-  
մին կը յենու, այլ Աստուծոյ կամքին :  
Համբերութիւնը առաքինութեան քաջութիւնն  
է :

— Ա՛հ, ես այդ քաջութիւնը չունիմ բնաւ :  
Ամէն ինչ կ'ընկճէ և յուսահատութեան կը մատ-  
նէ զիս :

— Առաքինութիւնը, միշտ հանգուստիս,  
անյեղլի, անսիրտիս, մահկանացուին բաժինը  
չէ, յարեցի : Մեզ յուզող այնքան կիրքերու

մէջ մեր բանականութիւնը կը խանգարուի ու կը մթաղնի. բայց փարոս մը կայ, որուն շնորհիւ կրնանք նորէն վառել մեր բանականութեան ջահը. այդ փարոսն է գրականութիւնը:

«Չաւա կս, գրականութիւնը երկնային պարգեւ մըն է: Տիեզերքը վարող այդ իմաստութեան ճառագայթներուն շնորհիւ է որ, երկնային արուեստէ մը ներշնչուած, մարդ կրցած է երկրի վրայ հաստատուիլ: Արեւու շողերուն նման, գրականութիւնը կը լուսաւորէ, կը հրճուեցնէ ու կը ջեռուցանէ. աստուածային հուր մըն է ան: Կրակին հանգոյն, ամբողջ բնութիւնը մեր տրամագրութեան տակ կը դնէ: Գրականութեան շնորհիւ, մեր շուրջը կը համախմբենք իրերը, վայրերը, մարդիկը և ժամանակը: Ան մեզի կոչ կ'ուզի՝ բնութեան կանոններուն հետեւելու: Ան կը հանդարտեցնէ կիրքերը, կը զսպէ մոլութիւնները, գրգիռ կ'ըլլայ առաքինութեանց, իբր փառաւոր օրինակ առաջ բերելով այն վեհօգի մարդիկը զոր կը պանծացնէ, ու անոնց պատուաբեր պատկերները կ'ընծայէ մեզի: Գրականութիւնը երկնային աղջիկներու պէս երկիր կ'իջնէ, մարդկային ազգին ցաւերը սփոփելու համար: Ներշնչուած մեծ մատենագիրներ միշտ երեւան եկած են մարդկային ընկերութեան ամէնէն դժնդակ շրջանին, բարբարոսութեան ու ապականութեան ժամանակներուն մէջ:

«Չաւա'կս, գրականութիւնը սփոփած է ձեռնէ աւելի դժբախտ շատ մը մարդիկ, ինչպէս Քսենեփոն որ աքսորուած է իր հայրենիքէն՝ հոն վերադարձնելէ յետոյ տասը հազար Յոյներ, Ափրիկեցի Սկիպիոն՝ Հռոմայեցիներու զրպարտութիւններէն զղուած, Լուկուլլոս՝ անոնց մե-

քեհայու թիւններէն, կատինատ՝ իր արքունիքին ապիրախտութենէն: Յոյները, այնքան քանիմաց, գրականութեան վրայ տիրապետող մուսաններէն իւրաքանչիւրին բաշխեցին մեր իմացողութեան մէկ մասը, զայն կառավարելու համար. ուստի պարտինք մեր կիրքերը ենթարկել գրականութեան խնամքին, որպէսզի լուծ մը ուսանձ մը դնէ անոնց: Գրականութիւնը մեր հոգեկան զօրութիւններուն հանդէպ այն դիրքը պէտք է բռնէ զոր առասպելական ժամերը կը բռնէին, Արեգական ձիերը լծելու և վարելու համար:

«Ուրեմն, կարգացէ՛ք, զաւակս: Մենէ առաջ զրող իմաստունները ճանապարհորդներ են, որոնք մեզ կանխած են անբախտութեան արահետներուն մէջ. անոնք մեզի ձեռք կ'երկարեն ու կը հրաւիրեն որ իրենց ուղեկցինք, երբ ամէնուն կողմէ լքուինք: Լաւ դիրք մը լաւ բարեկամ մըն է:

— Ա՛հ, կը գոչէր Յօլ, պէտք չունէի այդ քանը գիտնալու, երբ Վիրթինի հոս կը գտնուէր: Ինչ աւելի ուսեալ չէր ան, բայց երբ ինծի նայէր, բարեկամ կոչելով զիս, անկարելի որ վիշտ զգայի:

— Անշուշտ, կ'ըսէի, չկայ աւելի հաճելի բան մը քան տարփուհի մը, որ մեզ կը սիրէ: Մնաց որ, կնոջ մէջ թեթեւ զուարճութիւն մը կայ, որ կը փարատէ մարդուն տխրութիւնը: Կնոջ շնորհները կը ցրուեն խորհրդածութեան սև ուրուականները: Անոր դէմքին վրայ ի յայտ կուգան քաղցր հրապոյրները և վստահութիւնը: Ո՞ր ուրախութիւնը աւելի չի սաստկանար անոր ուրախութեան շնորհիւ: Թշնամանքէ յետոյ, ո՞ր ճակա-

տը չի պայծառանար անոր ժպիտին առջև : Ո՞ր  
բարկութիւնը կրնայ դիմանալ անոր արցունքնե-  
րուն : Վիրժինի պիտի վերադառնայ՝ ձենէ աւելի  
փիլիսոփայութեամբ տողորուած : Ան պիտի զար-  
մանայ, տեսնելով որ պարտէզը բոլորովին չէ  
յարդարուած, մինչդեռ զայն դեղեկացնե-  
լու վրայ կը խորհէր, հակառակ իր ազգականուհիին  
հալածանքներուն, իր մօրմէն ու ձենէ հետու :

Վիրժինի մօտալուտ վերադարձի դադափա-  
րը կը վերանորոգէր Բօլի քաջութիւնը ու դաշ-  
տային աշխատանքներու կը մղէր զայն, իր  
վիշտերուն մէջ՝ ինքզինքը երջանիկ կը զգար,  
խորհելով թէ իր աշխատանքը վախճան մը պի-  
տի ունենար, որ հաճոյ կը թուէր իր տարփան-  
քին :

Առտու մը, այգուն (1744 դեկտեմբեր 24ին)  
անկողնէն ելած պահուն նշմարեց սպիտակ դրօշ  
մը, որ Տէքուվէրթ լերան վրայ կը ծածանէր :  
Այդ դրօշակը ազդանշանն էր նաևու մը, որ ծո-  
վուն վրայ կը նշմարուէր : Բօլ քաղաք վազեց,  
հասկնալու համար թէ Վիրժինիէն լուրեր կը  
բերէ՞ր ան : Հօն մնաց մինչև նաևահանգստի  
նաւուղիդին վերադարձը, որ նաև նստած էր  
ըստ սովորութեան՝ անոր ինքնութիւնը հասկը-  
նալու համար : Այդ մարդը իրիկուան միայն վե-  
րադարձաւ : Նաւուղիդը կառավարչին հաղորդեց  
թէ երեւցած նաւը Սեն-ժեռանն էր, եօթը հա-  
րիւր թօնօ տարողութեամբ, ու նաևապետ Պ.  
Յպէնի հրամանին սակ կը գտնուէր : Նոյնպէս  
յայտարարեց թէ նաւը ծովուն բաղը, չորս մղոն  
հետու կը գտնուէր ու Բօն-Լուիի մէջ պիտի  
խարսխէր յաջորդ օրը, միջօրեաքին, եթէ օդը  
նպատուաւոր ըլլար : Այն ատեն բնաւ հով չկար :

Նաւուղիդը կառավարչին յանձնեց այն նամակ-  
ները զոր նաւը բերած էր Ֆրանսայէն : Մէկը  
Տիկին տը Լա Թուրի ուղղուած նամակ մըն էր ,  
Վիրժինին կողմէ գրուած : Բօլ իսկոյն առաւ  
զայն , յափշտակութեամբ համբուրեց , ծոցը դրաւ  
ու գէպի բնակարան վազեց :

Բօլ հեռուէն ընտանիքը նշմարած պահուն ,  
որ իր վերադարձին կը սպասէր Հրաժեշտի ժայ-  
ռին վրայ , նամակը օղին մէջ բարձրացուց , ա-  
ռանց կարենալու բառ մը արտաբերել . իսկոյն  
ամէն ոք հաւաքուեցաւ . Տիկին տը Լա Թուրի  
բնակարանը , նամակին ընթերցումը լսելու հա-  
մար : Վիրժինի մօրը կ'իմացնէր թէ մեծ հօրա-  
քրոջ շատ մը գէշ վարմունքներուն ենթա-  
կայ ան , ուզած էր զինքը ակամայ ամուս-  
նացնել , թէ ի վերջոյ զինքը ժառանգութենէ  
զրկած ու ճամբած էր այնպիսի տտեն մը , որով  
փոթորիկներու եղանակին միայն պիտի կրնար  
Իլ-տը-Ֆրանս հասնիլ : Յետոյ Վիրժինի կը  
գրէր թէ ի դուր փորձած էր կակուղցնել հօրա-  
քրոջ սիրտը , յայտնելով թէ ի՛նչ բան կը պար-  
տէր իր մօր ու մանկական սովորութիւններուն :  
Ասոր վրայ , հօրաքոյրը անխելք կոչած էր  
Վիրժինին , ըսելով թէ խելքը ասպականած էր  
վէպերէն : Վիրժինի ի վերջոյ կը գրէր թէ հիմա  
կը բաղձար իր սիրելի ընտանիքը տեսնելու և  
ողջագուրելու երջանկութիւնը վայելել , ու այդ  
ջերմ փափաղին զոհացում տուած պիտի ըլլար  
արդէն , եթէ երբեք նաւապետը թոյլատրած ըլլար  
իրեն՝ նստելու նաւուղիդի մակոյկին մէջ . բայց  
ան ընդդիմացած էր իր մեկնումին , ցամաքը հեռու  
և ծովուն բացը այնչո՞ծ ըլլալուն համար , հակա-  
ռակ հով չ'իջելուն :

Այս նամակը կարդացուելուն պէս՝ ամբողջ ընտանիքը ցնծութեամբ գոչեց. «Վիրժինի հասած է»։ Տէր և ծառայ իրար ողջագուրեցին։ Տիկինն տր կա թուր ըսաւ Յօլի.

— Չուտ'կա, գացէ՛ք մեր դրացիին ի՛նչ տուէ՛ք Վիրժինիին ժամանու՛մբ։

Տօմինկ բուեկնիի փայտէ ջան մը վտակց իսկոյն, ու Յօլ և ա՛ն ուղղուեցան դէպի իմ բնակարանս։

Գիշերուան ժամը տասը կար։ Իմ ճրագս մարած ու ես դեռ նոր պառկած էի, երբ խորճիթիս ցիցերուն մէջէն լոյս մը նշխարեցի անտառին մէջ։ Ընդհուպ լսեցի Յօլի ձայնը, որ կը կանչէր զիս։ Անկողնէս ելայ, ու հագիւ թէ հագուած, Յօլ վրդովուն և շնչասուգառ, վիզս ցատկեց ըսելով.

— Վիրժինին վերադարձած է։ Եկէ՛ք, նաւանանգիստ երթա՛նք. նաւը հոն պիտի խարսխէ այգուն։

Իսկոյն ճամբայ ին՛չանք։ Մօնթաներ-Լօնկի անտառներէն անցանք ու դէպի նաւանանգիստ տանող Բամբլրմուսի ճամբուն վրայ կը գտնուէինք, երբ իմ ետիս լսեցի ոտնաձայն մը։ Սեւամորթ մըն էր որ արագօրէն կը յառաջանար։ Մեր քով հասնելուն պէս՝ հարցուցի թէ ո՛ւրկէ կուգար այնքան աճադարանքով։ Ան պատասխանեց.

— Կղզիին Բուայ-տ'Օռ կոչուած թաղէն կուգամ. նաւանանգիստ կը դր'ինն զիս, կառավարչին իմաց տալու համար թէ Ֆրանսայան նաւ մը խարսխած է։ Ամ գր կղզիին տակ և նաւը թնդանօթ կ'արձակէ օգնութիւն խնրելու համար, որովհետեւ ծովը ալիկոծ է։







Մարդը աշտպէս խօսելէ յետոյ՝ ճանրան շա-  
րունակեց, առանց կանգ առնելու: Այն ատեն  
Բօլի բսի:

— Օ՛ն, Բուտր-տ'Օս թաղը երթա՛նք, Վիր-  
ժինին դիմաւորելու համար, երեք մղոն հեռու է:

Ուստի ճամբայ ինկանք դէպի կղզիին հիւ-  
սիսակողմը: Հեղձուցիչ տաք մը կար: Լուսինը  
բարձրացած էր, ամոր շուրջը կը տեսնուէին  
երեք սև շրջանակներ: Սոսկալի մթութիւն մը  
տարածուած էր երկնքին վրայ: Յաճախադէպ  
փայլատակումներու շնորհիւ կը նշմարուէին  
թխալոյտորդ, սև ու դած ամպերու շարքեր, ո-  
րոնք կը կուտակուէին դէպի կղզիին կեդրոնը,  
ծովուն կողմէ սրբնթաց յառաջանալով, թէև  
ցաւաքին վրայ հով չըլլար բնաւ:

Ճամբան, որոտումի ձայներ լսեցինք կար-  
ծես, բայց ուշադիր մտիկ բնելէ յետոյ հասկը-  
ցանք որ թնդանօթի հարուածներ էին, զոր կը  
կրկնէին արձագանգները: Ինծի սարսուռ պատ-  
ճառեցին թնդանօթի այդ հեռաւոր ձայները,  
որոնց վրայ կ'աւելնար փոթորկալից երկնքի մը  
տեսարանը: Ես վստահ էի որ կորստեան մատ-  
նուած նաւու մը անձկութեան աղղանշաններն  
էին ատոնք: Կէս ժամ յետոյ՝ թնդանօթի ձայն  
չլսեցինք «յիւս», ու այդ լսութիւնը աւելի  
սոսկալի թուեցաւ ինծի քան թէ այն տխրազին  
աղուէք, որ քիչ մը առաջ կը լսուէր:

Մեր քայլերը փութացուցինք, առանց բառ  
մը արտաբերելու և առանց համայն ձակելու իրա-  
րու յայտնել մեր մտահոգութիւնները: Կէս դի-  
շերուն, քրտնաթաթաւ հոսանք ծովուն եզերքը,  
Բուտր-տ'Օս թաղը: Ալիքները հոն կը փշրուէին  
անտելի շառաչումով, ու ժայտերը և ծովափը կը

ծածկէին շլացուցիչ սպիտակութիւն ունեցող  
փրփուրներով և հրեղէն կայծերով: Հակառակ  
խաւարին, լուսածնային նշոյլներու շնորհիւ  
նշմարեցինք որ ձկնորսանաւերը աւազին վրայ  
բաւական ետ քաշուած էին:

Հոնկէ քիչ մը անդին, անտառին մուտքին  
վրայ տեսանք կրակ մը, որուն շուրջը հաւաք-  
ւած էին կղզեցիներ: Մենք հոն հանգչեցանք,  
սպասելով որ արշալոյսը ծագի: Մինչ այդ կրա-  
կին քով նստած էինք, կղզիին բնակիչներէն մէ-  
կը մեզի պատմեց թէ կէս օրէն յետոյ նաև մը  
տեսած էր բաց ծովուն վրայ, որ դէպի կղզի կը  
քշուէր հոսանքներէն, գիշերը՝ այլևս չէր կրցած  
նշմարել զայն, արեւամուտէն երկու ժամ յետոյ՝  
թնդանօթի ձայն լսած էր, որ օգնութիւն կը  
խնդրէր. ծովը չափազանց ալիկոծ ըլլալուն,  
կարելի չէր եղած ու է նաևակ ծով իջեցսել,  
այդ նաևուն քով երթալու համար. քիչ յետոյ՝  
այդ բնիկին այնպէս թուած էր որ նաևուն լապ-  
տերները վառուած էին, ու այդ պարագային՝  
վախցած էր որ դամաքին ու Ամպր կղզիին միջև  
կը գտնուէր ան. նաևուն մարդիկը կարծած  
էին որ իրենց առջև կը գտնուէր կղզին և ոչ թէ  
Գիտանկիւնը, ուրկէ կ'անցնին Բօռ Լուի հասնող  
նաւերը. եթէ այդպէս էր (թէեւ բնիկը չէր կըր-  
նար հաստատել), նաևը մեծ վտանգի մը մատ-  
նուած էր:

Ուրիշ բնիկ մը խօսք առնելով մեզի ըսաւ  
թէ քանիցս սնցած էր Ամպր կղզին ծովեզերքէն  
բաժնող ջլանցքէն, խորաչափած էր զայն,  
ընդարձակութիւնը և խարսխելու տեղը լաւ գտած  
էր, որով նաևը կրնար անքոյթ հոն կենալ, իբր  
թէ լաւագոյն նաւահանգստի մը մէջ գտնուած  
ըլլար:

— Իմ ամբողջ հարստութիւնս հոն պիտի  
դնէի և հանդարտօրէն քուն պիտի քաշէի, որ  
պէս թէ ցամաքի վրայ ըլլայի, յարեց բնիկը:

Երրորդ բնիկ մըն ալ ըսաւ թէ անկարելի  
էր որ այդ նաւը մտնէր ջրանցքը, ուր հազիւ  
մակոյկներ կրնային նաւարկել: Ան հաւաստեց  
թէ Ամսր կղզիէն անդին այդ նաւուն խարըս-  
խելը տեսած էր. հետեւաբար՝ եթէ առտուն հով  
ելլէր, կրնար ծովուն բացը մղուիլ կամ նաւա-  
հանդիստ հասնիլ: Միւս բնիկներն ալ ուրիշ  
կարծիքներ յայտնեցին: Մինչ անոնք կը վիճէին  
իրենց միջեւ, անգործ գաղթածիններու պէս,  
Բօլ ու Էս խոր լռութիւն մը կը պահէինք:

Մինչև այդ հոն մնացինք. բայց երկինքը  
տակաւին շատ քիչ լուսաւորուած ըլլալուն, կա-  
րելի չէր ու է առաջկայ նշմարել ծովուն վրայ,  
որ մշուշով ծածկուած էր արդէն: Ծովուն բացե-  
րը նշմարեցինք սև ամպ մը, որուն հնամար ըսին  
թէ Ամսր կղզին էր, ծովեզերքէն քառորդ մղոն  
հեռու: Այդ մթաստուեր լոյսին մէջ կը նշմար-  
ուէր ծայրը այն ծովափին, ուր կը գտնուէինք,  
ինչպէս նաև կը տեսնուէին կղզիի ներքնամասի  
սարերը, որոնք մերթ երեւան կուգային զիրենք  
չըջապատող ամպերուն մէջտեղ:

Առտուան ժամը եօթին, անտառին մէջ լսե-  
ցինք թմբուկի մը ձայնը. կառավարիչ Պ. տը  
լա Պուրտօնէն էր որ կուգար, հրացաններով  
զինուած ջոկատի մը, բազմաթիւ բնիկներու և  
սեւամորթներու հետ: Կառավարիչը ծովափին վրայ  
կարգի դրաւ իր զինւորները ու անոնց հրամայեց  
համազարկ մը ընել: Հազիւ հրացանաձգու-  
թիւնը կատարուած, ծովուն վրայ նշմարեցինք

լոյս մը, որուն գրեթէ իսկոյն յաջորդեց թնդա-  
նօթի հարուած մը :

Մենք հասկցանք որ նաւը մենէ քիչ հեռու  
կը գտնուէր. ուստի ամէնքս միասին վազեցինք  
այն կողմը, ուր տեսած էինք անոր ազդանշանը :  
Այն ատեն մշուշին մէջէն նշմարեցինք մեծ նա-  
ւու մը որ հաստիայուր և առագաստակալները : Նա-  
ւը այնքան մօտիկ կը գտնուէր որ մենք լսե-  
ցինք նաւապետին սուլիչը և նաւազներուն  
աղաղակները, որոնք կը գոչէին. Կեցցե՛ք քաղա-  
ւորը. Ֆրանսացիները այդպէս կ'աղաղակեն  
ծանր վտանգներու և մեծ ուրախութիւննե-  
րու միջոցին. վտանգներու ատեն՝ կարծես օգ-  
նութեան կը կոչէին իրենց իշխանը կամ կ'ու-  
ղէին յայտնել թէ պատրաստ են մեռնելու անոր  
համար :

Այն վայրկեանէն սկսեալ, երբ Սէն-Փերան  
նաւուն մարդիկը նշմարեցին թէ մենք օդնու-  
թեան հասնելու չափ մօտիկ կը գտնուէինք, ե-  
րեք վայրկեանը անգամ մը թնդանօթ մը ար-  
ձակուեցաւ նաւուն կողմէ : Պ. տը Լա Պուր ոտնէ  
իրարմէ հեռու կրակներ վառել տուաւ ծովափին  
վրայ, ու շրջակայքի բնակիչներուն տուները  
մարդ զրկեց, պարէն, տախտակներ, պարաններ  
ու պարապ տակառներ բերելու համար : Քիչ յե-  
տոյ հասաւ բաղմու՞թիւն մը, սեւամարթներու  
ընկերակցութեամբ, որոնք բեօցած էին Բուար-  
տ'Օոի, Ֆլաք թաղի և Ռամբար գետի բնակիչնե-  
րուն պատկանող պարէն և նաւասարեր : Ամէնէն  
տարէյ բնակիչներէն մէկը կառավարչին մօտե-  
նալով ըսաւ .

— Պարո՛ն, ամբողջ գիշերը, խուլ աղմուկ-  
ներ լսուեցան լերան մէջ : Մտաւորու տեւեւները

կը շարժին անտառներուն մէջ, թէեւ հով չի փչեր :  
Ծովային թռչունները ցամաք կ'ապաստանին :  
անշուշտ, բոլոր այս նշանները խմաց կուտան  
թէ մրրիկ մը պիտի ծաղի :

— Շատ լաւ, բարեկամներս, պատասխանեց  
կառավարիչը, մենք պատրաստուած ենք փոթո-  
րիկին, նոյնպէս նաւը :

Արդարեւ, ամէն ինչ կանխատեսել կուտար  
մօտալուտ մրրիկը : Երկնակամարին վրայ նըշ-  
մարուած ամպերը սոսկալի սեւութիւն մը ու-  
նէին իրենց կեդրոնին մէջ, ու պղնձագոյն ե-  
րանգ մը, եզերքներուն վրայ : Յղը կը թնդար  
յարդատունիկներու, ճղլակներու, հողամաղներու  
և ուրիշ ծովային շատ մը թռչուններու ճիչերով,  
որոնք հորիզոնին ամէն կողմերէն կուգային ա-  
պաստան փնտոել կղզիին մէջ, հակառակ հորի-  
զոնին մթութեան :

Առտուան ժամը իննին, ծովուն կողմէ զար-  
հուրելի ժխտներ լսուեցան. կարծես թէ ջուրի  
հեղեղներ, որոտումներու հետ խառնուած, լեռ-  
ներու բարձունքէն վար կը թաւալէին : Ամէն  
ոք գոչեց. «Ահա՛ մրրիկը» : մէկ վայրկեանի մէջ՝  
հովի ահարկու յորձանք մը փարատեց Ամպր  
կղզին ու իր ջրանցքը պատող մէգը : Սեն Ժե-  
րան նաւը երեւան եկաւ. կամրջակին վրայ  
բազմութիւն կար, առագաստակալները և հա-  
յեկի կայմերը նաւուն տախտակամածին վրայ  
իջուցուած էին, դրօշակը հանդրիճուած էր, իսկ  
չորս պարանները առաջակողմին կապուած էին :  
Ամպր կղզիին ու ցամաքին միջեւ, իլտը Ֆրանս-  
սը շրջապատող խարակներէն ասդին խարսխած  
էր նաւը, այնպիսի տեղէ մը անցնելով, ուրկէ ո՛չ  
մէկ նաւ երբեք չէր անցած ատկէ առաջ :

Նաևուն յառաջակողմը կը գտնուէր ծովուն  
բացէն եկած ալիքներուն դէմ, ու ջրանցքին  
մէջ մտած իւրաքանչիւր կոհակի դիմաց իր  
ցոուկը ամբողջովին կը բարձրանար ու ողնա-  
փայտը օղին մէջ կը տեսնուէր, բայց այդ շար-  
ժումին նետեւանքով ցոուկը ալիքներուն մէջ  
ընկղմած, տեսողութենէ կը կորսուէր, կարծես  
բոլորովին խորանուզուած: Այդ դիրքին մէջ,  
ուր հովը և ալիքները դէպի ցամաք կը նետէին  
նաւը, անկարելի բան էր որ ան երթար հոն  
ուրկէ եկած էր, և ոչ ալ պարանը կտրելով  
իյնար ծովափին վրայ, որմէ բաժնուած էր  
ծանձաղուտքով մը, ուր խարակներ կային: Ծո-  
վեզերքին վրայ փշրուող իւրաքանչիւր կոհակ  
մոնչածայն կը յառաջանար մինչև ծովագոգը, ու  
հոն բոնաքարեր կը ժայթքէր մինչև յիսուն ոտք  
հասու. յետոյ կոհակը ետ կը քաշուէր, ի յայտ  
բերելով ծովեզերքին յատակը, որուն խիճերը  
կը թաւալէր խռպոտ և ահարկու շառաչումով մը:

Հովէն ուռեցած ծովը ամէն վայրկեան աւելի  
կը բարձրանար, ու այդ կղզիին և Ամպր կղզիին  
միջև գտնուող ջրանցքը կը դառնար սպիտակ  
փրփուրներու սփռոյ մը, ուր սեւաթոյր և խո-  
րունկ կոհակներ ալօս կը բանային: Այդ փր-  
փուրները կը կուտակուէին ծովագոգին մէջ,  
վեց ոտք բարձրութեամբ, ու անոր ժակերեսը  
աւլող հովը դանոնք կը քշէր ծովափին դառիթա-  
փէն մինչև կէս փարսախ հասու: Փրփուրները  
սպիտակ և անհամար ձեւերով կը մղուէին մինչև  
լեռներուն ստորոտը: Կարծես թէ ծովէն դուրս  
ժայթքող ձիւն մըն էր ան:

Հորիզոնը ցոյց կուտար երկաբառեւ փոթոր-  
կի մը բոլոր նշանները. կարծես՝ հոն ծովը եր-

կնքին հետ խառնուած էր : Հոնկէ կ'անջատուէին անարկու ամպեր , որոնք զէնիթին վրայէն թռչուններու պէս արագ կ'անցնէին , մինչ ուրիշ ամպեր մեծ ժայռերու պէս անշարժ կ'երեւային : Երկնքին կապուտակը բնաւ չէր տեսներ . ձիթագոյն և աղօտ նշոյլ մը կը լուսաւորէր ցամաքին , ծովուն և երկնքին բոլոր իրերը :

Նաւուն տատանումներուն պատճառաւ վախը իրականացաւ : Յառաջակողմի պարանները բրթան , և որովհետեւ մէկ կանթով մը բռնուած էր , նաւը ապառաժին վրայ նետուեցաւ , ծովափէն կէս գրկաչափ հեռու : Այն ատեն ցաւագին աղաղակ մը բարձրացուցինք : Բօլ ծով պիտի նետուէր , երբ թեւէն բռնեցի ու լսի .

— Զաւա'կս , կորստեա'ն մատնուիլ կ'ուզէք :

— Ես կ'ուզեմ անոր օգնութեան հասնիլ կամ մեռնիլ , գոչեց Բօլ :

Յուսահատութենէն խելայեղ դարձած էր . ուստի Տօմինկ և ես Բօլի մէջքին փաթթեցինք երկար շուան մը , ու անոր երկու ծայրերէն բռնեցինք , կորստեան առաջքը առնելու համար : Բօլ յառաջացաւ դէպի Աեն-ժեքան նաւը , մերթ լողալով , մերթ խարակներուն վրայէն քալելով : Ան կը յուսար նաւուն մօտենալ , որովհետեւ ծովը իր անկանոն շարժումներով նաւը գրեթէ ցամաքի վրայ կը ձգէր , այնպէս որ կարելի էր հետիոտն ընել անոր շրջանը . բայց քիչ յետոյ՝ ծովը նոր մոլեգնութեամբ մը կը վերադառնար , ու ջուրի անաղին կամարներով կը ծածկէր նաւը , և անոր ամբողջ յառաջակողմը վեր կը բարձրացնէր , դէպի ծովեզերքը , հեռուն նետելով Բօլը , սրունքները արիւնլուայ , կուրծքը ճրմլուած ու կիսովին հեղձամահ :




Հազիւ ուշքի եկած, Բօլ ոտքի կ'ելլէր ու  
նոր թափով մը կը վերադառնար դէպի նաւը,  
զոր ծովը կը փետեկէր իր սոսկալի ցնցումներով:  
Նաւը ազատելէ յուսահատած՝ բոլոր նաւազ-  
ները խմբովին կը նետուէին ծովուն մէջ, առա-  
գաստակալներուն, տախտակներուն, հաւերու  
վանդակներուն և տակառներուն վրայ: Այն  
ատեն տեսնուեցաւ յաւէտ ողբալի բան մը. ծաղ-  
կատի օրիորդ մը երեւան եկաւ Սեճ-Փեքանի  
ցոռկին կողմը. ան իր բազուկները կ'երկարէր  
դէպի անձ մը, որ այնքան ճիգեր կը թափէր,  
իրեն միանալու համար: Վիրժինին էր ան: Իր  
սիրահարը ճանչցած էր, անոր ցոյց տուած քա-  
ջասրտութենէն: Այդ սիրուն աղջկան երեւումը,  
անուրի վտանգի մը մատնուած, վիշտով և յու-  
սահատութեամբ լեցուց մեզ. Վիրժինի իր ազ-  
նիւ և ինքնավստան կեցուածքին մէջ ձեռքով  
նշաններ կ'ընէր մեզի, կարծես յաւիտենապէս  
հրաժեշտ առնելով մենէ: Բոլոր նաւազներն ալ  
ծով նետուած էին: Մէկ հոգի միայն մնացած  
էր կամրջակին վրայ, Հերակլէսի պէս մերկ ու  
ջղապիրկ: Ան յարգանքով մօտեցաւ Վիրժինին  
ու մենք տեսանք որ աղջկան առջեւ ծունկի ե-  
կած, կը ջանար անոր հագուստները հանել, բայց  
Վիրժինի անձնապատուութենէ մղուած՝ ետ հրեց  
զայն, ու դէմքն ալ անդին դարձուց: Եւ ահա՛  
լսուեցան ականատեսներու կրկնակի աղաղակ-  
ները:

— Ազատեցէ՛ք զայն, ազատեցէ՛ք զայն.  
մի՛ թողուք:

Բայց այդ պահուն, դարհուրելի մեծութիւն  
ունեցող ջուրի լեռ մը Ամպր կղզիին և ծովեզեր-  
քին միջեւ խուժեց, ու մոնչելով խոյացաւ դէպի



MARINE L. CLAY



նաւը, որուն կը սպասուար իր սե կողերով ու փըր-  
փրացայտ գազաթներով: Այդ սոսկալի կոհակը  
տեսնելուն պէս՝ նաւազը ծով նետուեցաւ, իսկ  
Վիրժինի անխուսափելի տեսնելով մահը, մէկ  
ձեռքը զգեստներուն, միւսը սրտին վրայ  
դրաւ. յետոյ իր անխոռով աչքերը դէպի  
վեր բարձրացուց հրեշտակի մը երեւոյթով, որ  
դէպի երկինք կը թռչի:

Ո՛վ զարհուրելի օր, ափսո՛ս, ամէն ինչ  
անդնդասոյց եղաւ: Կոհակը ցամաքին վրայ հե-  
ռուն նետեց մէկ մասը ականատեսներուն, որոնք  
մարդասիրաբար մօտեցած էին. նոյնպէս այն  
նաւազը որ ուղած էր Վիրժինին աղատել, ծովուն  
մէջ լողալով: Այդ մարտը ստոյգ մահուրնէ մը  
ազատած, աւազին վրայ ծնրադրեց, ըսելով.

— Ո՛վ Աստուած, դուք աղատեցիք իմ  
կեանքս. բայց իմ կեանքս սիրայաժար պիտի  
դռնէի այն արժանաւոր աղջկան, որ հուզեց ինձի  
պէս հանել իր զգեստները:

Տօմինկ ու ես ալիքներէն դուրս հանեցինք  
տարարախտ Բօլը, որ զգայազիրկ եղած էր, ու  
արիւն կուզար բերնէն և ականջներէն: Կառա-  
վարիչը վիրաբոյժներուն խնամքին յանձնեց  
դայն, ու մենք ծովեզերքին երկայնքը սկսանք  
փնտառուք ընել, հասկնալու համար թէ ծովը  
հօ՞ն նետած էր Վիրժինիին մարմինը. բայց հո-  
վը յանկարծ դա ձած ըլլալով, ինչպէս կը պա-  
տահի մրրիկներու ատեն, մենք կսկիծը ունե-  
ցանք խորհելու թէ գերեզմանի մը մէջ իսկ չպի-  
տի կրնայինք թաղել այդ անբախտ աղջիկը:

Ու այդ վայրէն հեռացանք, սրտաբե-  
կումէ ընկճուած, միակ կորուստով մը մտահար,  
մինչ այդ նաւաբեկութեան մէջ շատ մը մարդիկ

կորսուած էին, շատեր կը տարակուսէին Նախախնամութեան մը գոյութեան մասին, տեսնելով որ խիստ առաքինի օրիորդ մը այդքան աղէտալի վախճան մը ունեցած էր. արդարեւ, սոսկալի պատուհասներ կան, որոնց ենթարկուելու արժանի չեն մարդիկ, և որոնց հանդէպ իմաստունին յայն իսկ կը ցնչուի :

Այդ պահուն թօլ սթափած էր մօտակայ տան մը մէջ, ուր տարուած էր մինչեւ որ ի վիճակի ըլլար իր բնակարանը փոխադրուելու : Իսկ ես Տօմինկի հետ վերադարձայ, Վիրժինիին մայրը և իր բարեկամունքին պատրաստելու համար այդ կսկծալի դէպքին : Երբ Լաթանիէ գետին հովտին մուտքը հասանք, սեւամորթներ մեզի ըսին թէ ծովը նաւու շատ մը բեկորներ կը նետէր հանդիպակաց ծովախորշին մէջ : Հոն իջանք, ու ծովեզերքին վրայ նշմարած առաջին բանս եղաւ Վիրժինիին մարմինը, կիսովին ծածկուած աւազով՝ այն դիրքին մէջ, ուր տեսած էինք զայն կորստեան մատնուած պահուն. իր դիմագիծերը զգալապէս չէին այլափոխուած. աչքերը գոց էին, բայց ճակատին վրայ պայծառութիւն մը կը տիրէր. միայն մահուան տժգոյն մանուշակները իր այտերուն վրայ կը շփոթուէին ամօթխածութեան վարդերուն հետ : Մէկ ձեռքը զգեստին վրայ կը գտնուէր, իսկ միւս ձեռքը սրտին վրայ՝ ամուր գոցուած ու կարկամած : Անոր մէջէն դժուարաւ հանեցի փոքր տուփ մը, բայց որքա՛ն մեծ եղաւ իմ զարմանքս, երբ տեսայ որ Թօլի կենդանագիրն էր. Վիրժինի անոր խոստացած էր պահել զայն որքան ատեն որ ապրէր : Դառնօրէն արտասուելցի այդ տարարախտ աղջկան հաստատամտութեան և սի-

բոյն հանդէպ : Տօմինկ կուրծքը կը ծեծէր ու իր  
ցաւազին ճիշերը կը պատռէին օդը : Չկնորսնե-  
րու խրճիթը տարինք ու հոն Մալապարցի կինե-  
րու պաշտպանութեան յանձնեցինք Վիրժինին ,  
որուն մարմինը խնամով լուացին անոնք :

Այդ տխուր գործովը զբաղած ատեննին ,  
մենք բնակարան ելանք գողգոջուն , ու հոն  
գտանք Տիկին տը Լա Թուրը և Մարկրիթը , ո-  
րոնք կ'աղօթէին , սպասելով որ հաւէն լուրեր  
հասնին : Տիկին տը Լա Թուր զիս նշմարելուն  
պէս , գոչեց .

— Ո՞ւր է իմ զաւակս , իմ աղջիկս , իմ սի-  
րելի աղջիկս :

Լուսթիւնս և արցունքներս տեսնելով՝ Տի-  
կին տը Լա Թուր կոահեց եղածը , ու իսկոյն  
հեղձամղձուկ վիճակի մը ու ցաւազին անձկու-  
թեան մը մատնուեցաւ . հառաչներ ու հեծկըլ-  
տուքներ միայն կ'արձակէր : Իսկ Մարկրիթ .

— Ո՞ւր է իմ զաւակս , մէջտեղ չկայ , գո-  
չեց ու նուաղեցաւ :

Մարկրիթի քով փութացինք , ու զայն  
սթափեցնելէ յետոյ , հաւաստեցի թէ Բօլ ողջ էր  
ու կառավարիչին հրամանով դարմանի տակ առ-  
նուած էր ան : Մարկրիթ սթափելուն պէս՝ իր  
բարեկամուհիով զբաղեցաւ , որ երկարատեւ նը-  
ւաղումներ կ'ուսնենար : Տիկին տը Լա Թուր ամ-  
բողջ գիշերը անցուց դառնակսկիծ տառապանք-  
ներով , ու ես այն ատեն հասկցայ որ ո՛չ մէկ  
վիշտ մայրական վշտին կը հաւասարի , քանի որ  
այդ տառապանքը այնքան երկար կը տեւէ : Տիկին  
տը Լա Թուր ուշքի գալուն պէս՝ սեւեռուն և  
մռայլ նայուածքներ կ'ուղղէր երկնքին : Ի զուր ,  
իր բարեկամուհին ու ես մեր ձեռքերուն մէջ կը

սեղմէինք անոր ձեռքերը : Ի զուր ամէնէն գողտ-  
րիկ անուկներով կը յորջորջէինք զայն . Տիկին  
տը Լա Թուր անզգայ կը մնար մեր վազնջական  
սիրոյ ցոյցերուն հանդէպ , ու իր ճնշուած կուրծ-  
քէն խուլ հեծիւններ միայն կ'ելլէին :

Առտուն կանուխ , պատգարակով մը տուն  
բերին Բօլը . ուշքի եկած էր ան , բայց մէկ բառ  
իսկ չէր կրնար արտաբերել : Մօրը և Տիկին տը  
Լա Թուրի հետ ունեցած տեսակցութիւնը , որմէ  
վախցած էի սկզբան , աւելի լաւ ազդեցութիւն  
գործեց քան բոլոր այն խնամքները զոր շոայ-  
լած էին մինչեւ այն ատեն : Մխիթարութեան  
չող մը երեւցաւ այդ երկու տարաբախտ մայրե-  
րու աչքերուն մէջ : Երկուքն ալ Բօլի քով գա-  
ցին , իրենց թեւերուն մէջ առին ու համբուրե-  
ցին զայն , իրենց արցունքները , որոնք մինչեւ  
այն ատեն զսպուած էին վշտէն , սկսան հոսիլ :  
Բօլ ալ իր արցունքները կը խառնէր անոնց  
արտասուքներուն : Այդ երեք անբախտ էակներուն  
մէջ բնութիւնը սփոփուելէն յետոյ՝ երկարատեւ  
թմրութիւն մը յաջորդեց անոնց ջղածգական  
ցաւերուն , ու ընդարմացումի հանդիստ մը պար-  
գեւեց , որ մահուան քունի կը նմանէր :

Պ. տը Լա Պուրտօնէ գազտնասպէս ինծի լուր  
դրկեց որ Վիրթինիի մարմինը քաղաք տարուած  
էր իր հրամանով , ու հոնկէ Բամբլըմուսի եկե-  
ղեցին պիտի փոխադրուէր : Իսկոյն Բօռ-Լուի  
իջայ , ուր բոլոր թաղերէ մարդիկ տեսայ , ո-  
րոնք հաւաքուած էին , Վիրթինիին յուղարկա-  
ւորութեան ներկայ գտնուելու համար . կարծես  
թէ կղզին կորսնցուցած էր իր ամէնէն սիրելի  
էակը :

Նաւահանգստին մէջ նաւերուն առաջատա-

Աստուծոյ խաչաձևութեամբ ու գրոշները կէս պարզութեամբ  
էին, մինչ թնդանօթները երկար ընդհատութեամբ  
կը գոռային: Ռմբաձիգ զինւորներ թափօրին առջեւ  
ւէն կ'երթային, իրենց հրացանները վար առած,  
իսկ թմբուկները, սե ու երկայն քօղերով  
ծածկութեամբ, ողբազին ձայներ կը հանէին,  
այդ սաղմիկներու զիմագծերը սրտաբեկութիւն  
կը յայտնէին, թէեւ անոնք մահը զիմագրութեամբ  
ըլլային անայլայլ զէմքով: Կղզիին ամէնէն ազ-  
նիւ աղջիկներէն ու թը նորատի օրիորդներ, սպի-  
տակ զգեստներ հագած ու ձեռքերնին արմաւե-  
նի ռստեր բռնած, իրենց առաքինի ընկերու-  
հիին մարմինը կը տանէին, որ ծաղիկներով  
ծածկութեամբ էր: Դպիր տղաք անոնց կը հետեւէին  
օրհներգութիւններով, դպիրներուն ետեւէն կը յա-  
ռաջանային կղզիին ընտրանին ու սպայակոյտը,  
յետոյ կուգար կառավարիչը, որուն կը հետեւէր  
ժողովուրդին բազմութիւնը:

Կղզիին վարչութիւնը այսպէս տնօրինած  
էր, հարկ եղած պատիւը ընծայելու համար ա-  
ռաքինութեան: Բայց երբ անոր մարմինը այս  
լերան ստորոտը հասաւ, յուղարկաւորութեան  
թափօրը ամբողջովին խանգարուեցաւ, ի տես  
այն խրճիթներուն, ուր Վիրթինի երջանկութիւն  
սփռած էր տարիներով, և ուր մահուան յուսա-  
հատութիւնը կը տիրէր հիմա, օրհներգութիւնները  
և նուագները զաղրեցան, հառաչանքներ և հեծ-  
կլտութեան միայն լսելի եղան զաշտագետնին  
մէջ: Մօտակայ բնակարաններէն մանկամարդ  
աղջիկներու խումբեր կը հասնէին հոն, Վիրթի-  
նիին զագաղին քսելու համար իրենց թաշկինակ-  
ները, վարդարանները և ծաղկեպսակները, իբր  
սրբուհի մը սգեկոչելով զայն: Մայրերը Աս-



տուժմէ կը խնդրէին Վիրժինիին պէս աղջիկ մը ,  
պատանիները՝ անոր պէս հաւատարիմ սիրուհի-  
ներ , աղքատները՝ անոր պէս գթասիրտ բարե-  
կամուհի մը , գերիները՝ անոր պէս պատուական  
տիրուհի մը :

Երբ դագաղը հասաւ գերեզմանին տեղը ,  
Մատակասքարցի սեւամորթուհիներ և Մօղամ-  
պիքցի Գաֆրեր դագաղին շուրջը դրին պողպալից  
կողովներ և կերպասի կտորներ կախեցին մօտա-  
կայ ծառերէն , իրենց երկրին սովորութեան հա-  
ձույն . Պէնկայի և Մալապրիայի ծովեզերքի Հընդ-  
կուհիներ թոչուններով լեցուն վանդակներ բե-  
րին ու Վիրժինիի մարմնին վրայ աղատ արձա-  
կեցին զօրոնք . այսպէս՝ սիրելի էակի մը կո-  
րուստը կը շահագրգռէ բոլոր ազգերն ալ ու  
կ'ազդէ ամէն ազգէ մարդոց վրայ . ո-  
րովհետև մեծ է զօրութիւնը տարարաստի մը  
առաքինութեան , քանի որ իր գերեզմանին  
շուրջը կը միացնէ բոլոր կրօնքները :

Հարկ եղաւ պահապաններ զնել գերեզմանի  
փոսին քով , ու հոնկէ հեռացնել խեղճ մարդոց  
քանի մը աղջիկներ , որոնք կ'ուզէին փոսին մէջ  
նետուիլ անողայման , ըսելով թէ այս աշխարհի մէջ  
ո և է մխիթարանք չէին յուսար , ու իրենց ուրիշ  
բան չէր մնար ընել , եթէ ոչ մեռնիլ Վիրժինիին  
հետ , որ իրենց միակ բարերարուհին էր :

Վիրժինին թաղուեցաւ Բամբլըմուսի եկե-  
ղեցիին մօտ , արեւմտեան կողմը , հնդկեղէզներ  
բու թաւուտքի մը ստորոտը , ուր ախորժով կը  
հանգչէր իր մօրը եւ Մարկրիթի հետ՝ պատարա-  
գէ վերադարձին , Բօլի քով նստած՝ զոր այն  
ատեն իր հզրայրը կը կոչէր :

Յուզարկաւորութենէ դարձին , Պ . տը Լա  
Պուրտօնէ հոս ելաւ , իր բաղմաթիւ շքախումբին

մէկ մասին հետ : Իր ձեռքէն եկած օգնութիւնս  
ները խոստացաւ Տիկին տը Լա Թուրի և անոր  
բարեկամուհիին : Հակիրճ այլ բարկածայթ խօս-  
քերով արտայայտուեցաւ Տիկին տը Լա Թուրի  
անխիղճ հօրաքրոջ դէմ . յետոյ Բօլի մօտենա-  
լով՝ պէտք եղած մխիթարական խօսքերը ուղ-  
ղեց անոր :

— Կը փափաղէի որ դուք և ձեր ընտանի-  
քը երջանիկ ըլլայիք , ըսաւ կառավարիչը : Աստ-  
ւած վկայ է այդ մասին : Բարեկամս , պէտք է  
Ֆրանսա երթաք . ձեզի գործ պիտի դտնեմ հոն :  
Ձեր բացակայութեան ատեն , իմ մօրս պէս պի-  
տի հոգամ ձեր մայրը :

Ու այս խօսքերէն յետոյ՝ Պ . տը Լա Պուր-  
տօնէ իր ձեռքը երկարեց , բայց Բօլ ևս քաշեց  
ձեռքը ու գլուխը անդին դարձուց , կառավարի-  
չը հսկանելու համար :

Իսկ ևս մնացի անբախտ բարեկամուհիներ-  
րուս բնակարանին մէջ , թէ՛ անոնց և թէ Բօլի  
ընծայելու համար կարելի եղած բոլոր օգնու-  
թիւնները : Երեք շաբաթ յետոյ՝ Բօլ քալելու  
կարողութիւն ունեցաւ . բայց իր մարմինը քա-  
նի՛ կը զօրանար , վիշտը կը սաստկանար կար-  
ծես : Ամէն բանի դէմ անդգամ էր . իր աչքերը  
մարած էին ու ոչ մէկ պատասխան կուտար  
իրեն ուղղուած բոլոր հարցումներուն : Տիկին  
տը Լա Թուր , որ կէս-մեռել եղած էր , յաճախ  
կ'ըսէր Բօլի .

— Չաւա՛կս , որքան ատեն որ ձեզ տեսնեմ ,  
ինձի այնպէս պիտի թուի որ սիրելի Վիրթինիս  
կը տեսնեմ :

Վիրթինիին անունը լսելուն պէս՝ Բօլ սար-  
սուռ մը զգաց ու հեռացաւ , հակառակ մօրը

հրաւէրներուն, որ իր բարեկամութիւն քով կը կանչէր զայն: Բօլ պարտէզ կ'երթար առանձին ու հոն կը նստէր Վիրժինի հեղկընկուզենի տակ, աչքերը անոր աղբիւրին վրայ յառած: Կառավարչին վիրարոյժը, որ մեծ խնամով դարմանած էր Բօլը և այդ կիները, մեզի ըսաւ թէ երիտասարդին սեամաղձութիւնը փարատելու համար, ազատ ձգելու էր ուղածը ընելու, առանց հակառակելու անոր կամքին, և թէ ուրիշ ճար չկար, յաղթելու համար անոր ցոյց տուած յամառ լռութեան:

Ուստի որոշեցի հետեւիլ վիրարոյժին տուած խորհուրդին: Բօլ քիչ մը կազդուրուելուն պէս՝ առաջին գործը եղաւ ընակարանէն հեռանալ: Աչքէ չկորսնցնելու համար զայն, սկսայ ետեւէն յառաջանալ, Տօմինկի պատուիրելով որ պարէն առնէ ու մեզի ընկերանայ: Բօլ այս լեռնէն հազիւ վար իջած, իր ուրախութիւնը և ուժերը վերածնեցան կարծես: Նախ Բամբլըմուսի ճամբան բռնեց. երբ ևկեղեցիին մօտ հասաւ, հրնդկեղէգներու նրբուղիին մէջ, ուղղակի գնաց այն տեղը, ուր հողը նոր քրքրուած էր. հոն ծնրադրեց, ու աչքերը դէպի երկինք բարձրացնելով, երկար աղօթք մը ըրաւ:

Ասիկա բարեգուշակ համարեցի Բօլի բանականութեան համար, քանի որ գերագոյն էակին հանդէպ ունեցած վստահութիւնը ցոյց կուտար թէ իր հոգեկան կարողութիւնները սկսած էին գործել: Բօլի օրինակին հետեւելով՝ Տօմինկ ու ես ալ ծնրադրեցինք: Յետոյ ան ոտքի ելաւ ու ճամբան շարունակեց դէպի կղզիին հիւսիսակողմը, առանց ուշադրութիւն դարձնելու մեզի: Ես գիտէի թէ Բօլ տեղեկութիւն չունէր





Վիրժինիին թաղուած տեղէն և նոյն իսկ անոր  
մարմինը ծովէն հանուած ըլլալէն, ուստի հար-  
ցուցի թէ ինչո՛ւ աղօթած էր հնդկեղէզներուն  
ստորոտը, Բօլ պատասխանեց.

— Յաճախ իրարու հետ հոս գտնուած ենք :  
Բօլ իր ճամբան շարունակեց մինչեւ անտա-  
ռին մուտքը, ու այն տանն մութը կոխեց : Հոն  
սկսայ ճաշել, ու Բօլը հրաւիրեցի որ իմ օրինա-  
կիս հետեւի. յետոյ խոտին վրայ պառկեցանք,  
ծառի մը տակ : Յաջորդ օրը կարծեցի որ ետ  
պիտի դառնար ան : Արդարեւ, պահ մը դիտեց  
Բամբլըմուսի եկեղեցիին դաշտագետինը ու հրնդ-  
կեղէզներու երկար ուղին, և նոյնիսկ քանի մը  
շարժումներ ըրաւ, հոն վերադառնալու համար  
կարծես. սակայն յանկարծ մխրճուեցաւ անտա-  
ռին մէջ, իր ճամբան շարունակելով միշտ դէպի  
հիւսիս : Ես հասկցայ անոր մտադրութիւնը ու  
ջանացի ետ կեցնել զայն : Կէս օրին, Բուտր  
տ'Օո թաղը հասանք :

Բօլ յանկարծ ծովուն եզերքը իջաւ, այն  
տեղին դիմաց, ուր Սէն-Փէրան կորստեան մատ-  
նուած էր : Ամպը կզզին ու իր ջրանցքը տեսնե-  
լուն պէս, այդ պահուն հայելիի պէս միապա-  
ղաղ, գոչեց. «Վիրժինի, ո՛վ սիրելի Վիրժինիս»,  
ու նուազուն գետին ինկաւ իսկոյն : Տօմինկ ու  
ես անտառին մէջ տարինք Բօլը, ուր մեծ գրժ-  
ուարութեամբ սթափեցուցինք զայն : Ուշքի գա-  
լուն պէս՝ ուղեց ծովեզերք վերադառնալ, բայց  
ես թախանձեցի որ դառն վերջիշումներով չվե-  
րանորոգէ իր և մեր վիշտերը. ուստի ճամբան  
փոխեց ան : Վերջապէս, ութը օրուան մէջ, այ-  
ցելեց բոլոր այն վայրերը, ուր գտնուած էր իր  
մանկութեան ընկերոջ հետ :

Բօլ անցաւ այն արահետէն, ուր Ռիվիէր-  
Նուարի գերուհիին համար ներուժ խնդրած էր.  
յետոյ Եռաստին լերան զետեղերքը գնաց ու հոն  
նստաւ, չկարենալով այլեւս քալել. անտառին  
այն մասին մէջ կը գտնուէր, ուր Վիրժինիին  
հետ մոլորած էր: Բօլ սկսաւ արցունք թափել,  
երբ տեսաւ այն վայրերը, որոնք կը յիշեցնէին  
իրենց ունեցած մտահոգութիւնները, խաղերը,  
ճաշերը, իր սիրեցեալին բարեարտութիւնը, Մօն-  
թաներ-Լօնկ գետը, իմ տնակս, մօտակայ ջրը-  
վէժը, Վիրժինիին տնկած հնդկասեխենին, այն  
մարգագետինները, ուր Վիրժինիին ախորժ կը  
զգար վազելէ ու այն քառուղիները ուր հաճոյ-  
քով կ'երգէր: Այն միեւնոյն արձագանգները,  
որոնք Բօլի և Վիրժինիի ուրախութեան ճիշերը  
թնդացուցած էին, հիմա կը կրկնէին սա ցաւա-  
զին բառերը միայն. «Վիրժինի՛, իմ սիրեցեալ  
Վիրժինի»:

Այդ վայրի և թափառաշրջիկ կեանքին մէջ  
Բօլի աչքերը խոռոչացան, մոյնքը դեղնեցաւ ու  
առողջութիւնը հետզհետէ խանգարուեցաւ: Ես  
համոզուած թէ մեր կսկիծները կը կրկնապատ-  
կուին մեր հաճոյքներուն վերյիշումով, ու տար-  
փանքները առանձնութեան մէջ կը սաստկանան,  
որոշեցի իմ տարաբախտ բարեկամս հեռացնել իր  
կորուստը յիշեցնող վայրերէն ու տանիլ կղզիին  
այն կողմը, ուր շատ զբաղում կար: Այս նպա-  
տակով՝ Բօլը առաջնորդեցի գէպի այն բարձունք-  
ները, ուր կը գտնուին Ուիլիէմս թաղի բնակա-  
րանները. Բօլ բնաւ չէր գացած հոն:

Երկրագործութիւնը և վաճառականութիւնը  
կղզիին մէջ կը սփռէին ոգեւորութիւն ու պէս-  
պիսութիւն: Հոն կային շատ մը ատաղձագործ-

ներ, որոնք փայտերը կը տաշէին, և ուրիշներ  
որոնք տախտակներ կը սղոցէին, կառքեր կ'եր-  
թեւեկէին ճամբաներուն երկայնքը. եզներու և  
ձիերու հօտեր կ'արածէին ընդարձակ մարգագե-  
տիններու մէջ, ու դաշտերուն վրայ բնակարան-  
ներ կը գտնուէին ցիրուցան: Բարձր դիրքին  
շնորհիւ, եւրոպական բոյսերու զանազան տե-  
սակներ կը մշակուէին այդ տեղերուն մէջ: Հոս  
հոն, դաշտազետնին մէջ կը տեսնուէին ցորենի  
հունձքեր, դալարագեղ ելակենիներ՝ անտառ-  
ներու բացուտքներուն մէջ, ու վարդենիներու  
ցանկեր՝ ճամբաներու երկայնքը:

Հոն, օդին զովուժիւնը կը պրկէր ջիղերը  
և սպիտակամորթներու առողջութեան կը նպաս-  
տէր: Մեծ անտառներով շրջապատուած ու  
կղզիին մէջտեղը հաստատուած այդ բարձունք-  
ներուն վրայէն չէր տեսնուեր ո՛չ ծով, ոչ Բօս-  
լուի, ոչ Բամբլըմուսի եկեղեցին, և ոչ ալ ուրիշ  
ու բան որ Բօլի միտքը ձգէր վիրժինիին յի-  
շատակը: Նոյն իսկ լեռները, որոնք Բօս-լուիի  
կողմէ զանազան ճիւղերու բաժնուած են, Ուիլ-  
եէմսի դաշտազետիններու կողմը կ'երեւան եր-  
կայն սարաւանդի մը պէս՝ ուղղագիծ և ուղղա-  
հայեաց, ուրկէ վեր կը ցցուին սպառաժներու  
բուրգեր ամպածրար:

Ուստի Բօլը առաջնորդեցի այդ դաշտազե-  
տինները: Միշտ շարժման մէջ կը կը պահէի  
զայն. դիշեր ցերեկ անոր հետ կը քալէի արևին  
և անձրեւին տակ, դիտմամբ մոլորելով անտառ-  
ներու մէջ և հերկուած գետիններու վրայ, որ-  
պէսզի Բօլի միտքը զբաղի մարմնական յոգնու-  
թեամբ և մտածումները փոխուին անձանօթ  
վայրերու մէջ, ուր ճամբան ալ կը կորսնցնէ-



ինք : Բայց սիրահարի մը հոգին ամէն տեղ կը  
գտնէ սիրած անձին հետքերը : Ոչ մէկ բան սի-  
րելին մոռցնել կուտայ . ոչ գիշերը , ոչ ցերեկը , ո՛չ  
առանձնութեան մէջ տիրող հանդարտութիւնը ,  
ո՛չ բնակարաններու աղմուկը , և ոչ իսկ ժամա-  
նակը որ իրեն հետ կը քշէ կը տանի այնքան  
յիշատակներ : Մագնիսին դպող ասեղի մը պէս ,  
ի զուր կը շարժի սիրահարի հոգին . հանդիման  
պէս՝ զինքը քաշող բեւեռին կը դառնայ : Երբ  
Ուիլեմսի դաշտագետիններուն մէջտեղ մուտրած  
Բօլի կը հարցնէի . « Հիմա ո՞ւր պիտի երթանք » ,  
ան գէպի հիւսիս կը դառնար , ինծի ըսելով .  
« Ահա՛ մեր լեռները . հոն դառնա՛նք » :

Տեսայ որ փորձած բոլոր միջոցներս անօ-  
գուտ էին . ինծի կը մնար յարձակիլ անոր տար-  
փանքին վրայ իսկ , իմ տկար բնակահանութեանս  
բովանդակ ուժը գործածելով : Ուստի սա պա-  
տասխանը տուի .

— Այո՛ , ահա այն լեռները , ուր կը բնա-  
կէր ձեր սիրելի Վիրժինին , ահա՛ այն կենդա-  
նագիրը զոր իրեն տուած էիք և զոր սրտին վրայ  
կը կրէր մեռած սրահուն . իր վերջին շարժում-  
ներն ալ ձեզի համար էին :

Ու Բօլի երկարեցի այն փոքր կենդանագիրը  
զոր Վիրժինի անոր տուած էր հնդկընկուզենի-  
ներու աղբիւրին եզերքը : Երբ Բօլ տեսաւ այդ  
պատկերը , չարաշուք ուրախութիւն մը ի յայտ  
եկաւ իր աչքերուն մէջ : Իր տկար ձեռքերով՝  
անյազօրէն բռնեց կենդանագիրը ու բերնին տա-  
րաւ զայն : Իր կուրծքը ճնշուեցաւ , ու կէս մը  
արիւնոտ աչքերուն մէջ արցունքները քարա-  
ցան , առանց հոսելու : Ու ըսի անոր .

— Զաւա՛կս , ինծի մտիկ ըրէք , քանի որ

Ք. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ.

ձեր ու Վիրժինիին բարեկամը եղած եմ, և յա-  
ճախ ջանադած եմ ձեր բանականութիւնը դորա-  
ցնել կեանքի անակնկալ արկածներուն դէմ:  
Ձե՞ր թէ Վիրժինիին դժբախտութիւնն է որ  
այսքան դառնօրէն կ'ողբաք:

«Անտարակոյս, ձեր դժբախտութիւնը մեծ  
է: Ամէնէն սիրահամբոյր աղջիկը կորսնցուցած  
էք, որ ամէնէն արժանաւոր կիներ պիտի դառ-  
նար: Իր շահերը ձեզի համար զոհած էր, և իբր  
միակ վարձատրութիւն իր առաքինութեան,  
ձեզ նախընտրած էր քան թէ հարստութիւնը:  
Բայց կրնա՞ք ըսել թէ անհուն վշտերու աղբիւր  
չպիտի դառնար այն էակը, որմէ կ'ակնկալէիք  
անխառն երջանկութիւն մը: Վիրժինի ընչա-  
զուրկ և ժառանգազուրկ էր. ուրեմն ձեզի կը  
մնար անոր հետ բաժնել ձեր աշխատանքը: Իր  
կրթութեամբ աւելի փափկացած և իր դժբախ-  
տութեան պատճառով աւելի արիացած, օրէ օր  
աւելի պիտի ընկճուէր, ջանալով ձեր յոգնու-  
թիւններուն մասնակցիլ: Երբ Վիրժինի ձեզի  
ղաւակներ պարգեւէր, իր և ձեր հոգերը պիտի  
աւելնային, տեսնելով որ ձեզի հետ դժուարու-  
թիւն կը քաշէր ձեր ծնողքներու և նորակազմ  
ընտանիքի մը ապրուստը ճարելու:

«Հիմա ինձի պիտի ըսէք թէ կառավարիչը  
պիտի գնէր ձեզի: Ինչէ՞ն գիտէք, քանի որ  
գաղթավայրի մը մէջ յաճախ կը փոխուին վա-  
րիչները ու Լա Պուրտօնէի պէս կառավարիչներ  
չեն գտնուիր միշտ. թերեւս աննկարագիր ու ան-  
բարոյական վարիչներ պիտի գային հաս ու ձեր կո-  
ղակիցը պիտի սախալուէր դարպասել անոնց, պզտիկ  
օգնութիւն մը ձեռք բերելու համար: Եթէ եր-  
բեք տկարութիւն ցոյց տար ան, ցաւալի վի-

ճակ մը պիտի ունենայիք, իսկ եթէ զդաստ  
մնար, աղքատութեան պիտի մատնուէիք. բա-  
րերախտութիւն մը պիտի ըլլար, եթէ երբեք  
ձեր կնոջ գեղեցկութեան և առաքինութեան  
պատճառով չհալածուէիք այն անձերուն կողմէ  
իսկ, որոնցմէ պաշտպանութիւնը պիտի ակնկա-  
լէիք: Հիմա պիտի առարկէք թէ առանց հարս-  
տութեան պիտի կրնայիք պաշտպանել ձեր սի-  
րոյն առարկայ եղող անձը, ու ա՛ն աւելի ձեզի պիտի  
փարէր իր տկարութեան պատճառով. պիտի սփո-  
փէիք զայն ձեր մտահոգութիւններով ու պիտի  
ուրախացնէիք ձեր տրտմութեամբ, ու այսպէս  
ձեր սէրը պիտի աւելցնէիք փոխադարձ վիշտե-  
րով: Անտարակոյս, առաքինութիւնը և սէրը  
կ'ըմբռնեն այդ դասն հաճոյքները: Բայց ո՛չ  
եւս է Վիրժինի, ու դուք գիտէք թէ ձենէ  
յետոյ ան ամէնէն՝ աւելի սիրած է իր մայրը և ձե-  
րինը, որոնք գերեզման պիտի իջնեն ձեր ան-  
միսիթար կսկիծին պատճառով: Ձեր բարեկեն-  
դանութեամբ օգնեցէ՛ք անոնց, ինչպէս Վիրժի-  
նի կ'ընէր:

«Չաւա՛կս, բարեգործութիւնը երջանկու-  
թիւն կը պատճառէ առաքինի մարդուն. անկէ  
աւելի ապահով ու մեծ երջանկութիւն չկայ աշ-  
խարհի մէջ: Հաճոյքներու, հանգիստի, լիու-  
թեան, փառքի, հեշտանքի ծրագիրները ի՞նչ  
կ'արժեն տկար, ճամբորդ ու անցորդ մարդուն  
համար: Տեսէ՛ք թէ դէպի երջանկութեան քայ-  
լափոխ մը ի՛նչպէս ամէնքս գահավիժեց անդուն-  
դէ անդունդ: Իրաւ է որ զիմադրաւեցիք զանոնք,  
բայց ամէն ոք կը հաւատար որ Վիրժինիին ու-  
ղեւորութիւնը պիտի վերջանար իր և ձեր եր-  
ջանկութեամբ: Հարուստ ու տարիքոտ աղգա-

կանուհիի մը հրաւերները, իմաստուն կառա-  
վարչի մը խորհուրդները, գաղութի մը ծագող-  
ջոյնները, երէցի մը յորդորները և հեղինակու-  
թիւնը պատճառ եղանակի թիւիին գծախտու-  
թեան:

«Այսպէս՝ կորստեան կը դիմենք, նոյն իսկ  
խոհեմութեանը շնորհիւ այն անձերուն, որոնք  
մեզ կը կառավարեն: Անշուշտ, աւելի լաւ պիտի  
ըլլայ որ հաւատ չընծայենք անոնց, և ոչ ալ  
վստահինք խարեպատիր ընկերութեան մը ձայ-  
նին և ներշնչած յոյսերուն, այս դաշտագետին-  
ներուն մէջ շատ մը մարդիկ կը տեսնենք, որոնք  
գրադած են, իսկ շատ մը ուրիշ անձեր ալ որոնք  
Հնդկաստան պիտի երթան՝ բախտ փնտտելու  
համար, մինչ Եւրոպայի մէջ, առանց երկրէն  
դուրս ելլելու, ուրիշներու աշխատանքին ար-  
դիւնքը կը վայելեն հանգստօրէն, բայց ատոնց  
մէջէն՝ չկայ մէկը որ սահմանուած չըլլայ օրին  
մէկը կորսնցնելու իր ամէնէն աւելի սիրած բա-  
ները. մեծութիւն, հարստութիւն, կին, զա-  
ւակներ, բարեկամներ: Անոնք մեծ մասամբ ի-  
րենց անխոհեմութեան յիշատակը պիտի աւել-  
ցնեն իրենց կորուստին վրայ: Իսկ դուք բնաւ  
չպիտի մեղադրէք ինքզինքնիդ, երբ անդրա-  
դառնաք ձեր անձին վրայ, քանի որ հաւատա-  
րիմ գտնուած էք ձեր խօսքին: Երիտասարդու-  
թեան ծաղիկ հասակին մէջ, իմաստունի մը խո-  
հեմութիւնը ունեցած էք, բնութեան զգացու-  
մէն չչեղելով: Ձեր հայեացքները օրինաւոր էին,  
անբիծ, պարզ ու անշահախնդիր ըլլալնուն հա-  
մար. դուք վիրթինիի վրայ այնպիսի նուիրա-  
կան իրաւունքներ ունէիք որ ոչ մէկ հարստու-  
թիւն կրնար համակշռել զանոնք: Կորսնցուցիք

Վիրժիւնին, բայց ո՛չ ձեր անխոհեմութիւնը, ոչ  
ձեր ազահութիւնը և ոչ ալ ձեր կեղծ իմաստու-  
թիւնը պատճառ եղան այդ կորուստին, այլ  
նոյն ինքն Աստուած, որ ուրիշին կիրքերը գոր-  
ծիք ըրած է, ձեր սիրելիէն զրկելու համար.  
Աստուծմէ կախում ունին ձեր բոլոր բաները.  
ան դիտէ թէ ի՛նչ բան կը պատշաճի ձեզի, և  
իր իմաստութեամբ տեղի չի տար որ զզջումի և  
յուսահատութեան մատնուիք, որոնք կը յաջոր-  
դեն պատուհասներուն, թէև դուք պատճառ ե-  
ղած ըլլաք անոնց:

«Ահա ինչ որ կրնաք ըսել ձեր դժբախտու-  
թեան մէջ. ես արժանի չեմ եղած այդ պատու-  
հասին: Վիրժիւնիի դժբախտութի՞ւնը, իր վախ-  
ճա՞նը, թէ իր ներկայ վիճակն է որ կ'ողբաք:  
Ազնուականութեան, գեղեցկութեան և նոյն իսկ  
կայսրութեանց վերապահուած վիճակը ունեցած  
է ան: Մարդուն կեանքը իր բոլոր ծրագրերով  
կը նմանի փոքր աշտարակի մը, որուն կատարն է  
մահը: Վիրժիւնի ծնած օրէն դառապարտուած  
էր մեռնելու: Երանի՛ անոր որ կեանքի կապերը  
խղեց իր և ձեր մօրմէն առաջ, ձենէ առաջ, այ-  
սինքն քանիցս չմեռաւ իր վերջին մահէն առաջ:

«Չաւա՛կա, մահը բարիք մըն է բոլոր մար-  
դոց համար. դիշերն է այն վրդովուն ցերեկին  
զոր կեանք կը կոչենք: Մահուան քունին մէջ է  
• որ առյաւէտ կը հանգչին հիւանդութիւնները,  
ցաւերը, վիշտերը, սարսափները, որոնք անդա-  
դար կը խոռովեն հէզ ապրողները: Երբ աչքի  
առջեւ բերէք այն մարդիկը, որոնք ամէնէն ա-  
ւելի երջանիկ կ'երեւան, այն ատեն պիտի տես-  
նէք թէ ո՛րքան սուղ գնած են իրենց կարծեց-  
եալ երջանկութիւնը. այսպէս հանրային համա-

րու մը ձեռք բերած են ընտանեկան վիշտերով, հարստութիւնը՝ առողջութեան կորուստով, սիրուելու հազուագիւտ հաճոյքը՝ շարունակական զոհողութիւններով. յաճախ, ուրիշին շահերուն զոհելէ յետոյ իրենց կեանքը, շուրջերնին կը տեսնեն կեղծ բարեկամներ ու ապերախտ ազգականներ միայն: Բայց Վիրժինի երջանիկ եղաւ մինչև վերջին րոպէն: Բնութեան բարիքներով երջանիկ եղաւ մեզի հետ, ու առաքինութեան բարիքներով՝ մենէ հեռու. այն զարհուրելի վայրկեանին իսկ, որուն ականատես եղանք, Վիրժինի ինքզինքը երջանիկ կը զգար, երբ նայուածքը կը ձգէր առհասարակ իրեն համար կսկիծի մատնուած ամբողջ գաղութին, ինչպէս նաև ձեր վրայ, երբ այնքան խիզախօրէն օգնութեան կը փութայիք. այն ատեն կը տեսնէր որ ինք ո՛րքան սիրելի դարձած էր ամէնուն: Իր կեանքի անբժուութեան յիշատակով ապագային դէմ զօրացած. վտանգին հանդէպ գերագոյն քաջութիւն մը ցոյց տուաւ, և այսպէս ստացաւ այն վարձքը, որ երկինք կը վերապահէ առաքինութեան: Վիրժինի անվրդով դիմադրաւեց մահուան:

«Չաւա՛կս, Աստուած կեանքի բոլոր փորձանքներուն կ'ենթարկէ առաքինին, հասկցնելու համար թէ անոնց միջոցաւ միայն կրցած է երջանկութեան և փառքի հասնիլ: Երբ Աստուած ուզէ առաքինին հոչակաւոր դարձնել, մեծ թատրոնի մը մէջ կը դնէ զայն, մահուան դէմ պայքարելու համար. այն ատեն իր քաջութիւնը իբր օրինակ կը ծառայէ, և իր դժբախտութեանց յիշատակը ապագայ սերունդին արցունք թափել կուտայ առյաւէտ: Ահա՛ այն անմահ յիշատակարանը,

որ առաքինիին վերապահուած է երկրին վրայ,  
ուր ամէն ինչ վաղանցիկ է և թագաւորներէ  
մեծ մասին յիշատակն իսկ քիչ ատենէն կը թաղ-  
ուի յաւիտենական մոռացումի մէջ:

«Բայց Վիրժինի կենդանի է դեռ: Չաւա'կս,  
ինչպէս կը տեսնէք, աշխարհի մէջ ամէն բան  
կը փոխուի, ու ո՛չ մէկ բան կը կորսուի: Ոչ  
մէկ մարդկային արուեստ չի կրնար փճացնել  
նիւթի ամենափոքր մասնիկ մը. զգաստ, զգա-  
յուն, սիրասուն, առաքինի, երկիւղած մարդը  
կրնայ կորսուիլ, երբ զինքը շրջապատող տար-  
րերը անեղծ կը մնան: Ա՛յ, եթէ Վիրժինի եր-  
ջանիկ էր մեզի հետ, ՚իմա ա՛լ աւելի երջանիկ  
ըլլալու է: Չաւա'կս, Աստուած մը կայ. ամ-  
բողջ բնութիւնը կը յայտնաբերէ զայն, ու ես  
պէտք չունիմ ապացուցանելու ձեզի: Մարդիկ  
իրենց չարութեամբ է որ կ'ուրանան այն ար-  
դարութիւնը, ուրկէ կը վախնան: Աստուծոյ  
գոյութիւնը կը զգանք մեր սրտին մէջ, ու անոր  
գործերը մեր աչքերուն առջև պարզուած են:

«Կը կարծէ՞ք որ Աստուած անվարձ կը թո-  
ղու Վիրժինին: Կը կարծէ՞ք որ Արարիչը ալիք-  
ներէն դուրս չպիտի կրնար հանել Վիրժինին,  
որուն ազնիւ հոգիին ընծայած էր այնքան գե-  
ղեցիկ ձև մը և որուն մէջ աստուածային արուեստ  
մը կը տեսնէիք: Աստուած պարզեւած է մար-  
դոց արդի երջանկութիւնը, այնպիսի օրէնքներ-  
րու միջոցաւ, որոնք անծանօթ են ձեզի. ուրեմն  
ան չի՞ կրնար ուրիշ երջանկութիւն մը պատ-  
րաստել այնպիսի օրէնքներով, որոնք նմանա-  
պէս անծանօթ են ձեզի: Եթէ երբեք կարելի ըլ-  
լար խորհիլ անէութեան մէջ գտնուած ատեն,  
միթէ պիտի՞ կրնայինք գաղափար մը կսղ-

մել մեր գոյութեան մասին : Հիմա որ այս խա-  
ւարամած ու վաղանցիկ կեանքին մէջ կը գըտ-  
նուինք , միթէ կրնա՞նք նախատեսել թէ ի՞նչ  
կայ մահուընէ անդին , և թէ ի՞նչպէս անկէ  
դուրս պիտի ելլենք : Սա փոքր երկրագունդի մար-  
դուն պէս , Աստուած միթէ պէտք ունի՞ աշխար-  
հի , իբր թատր գործածելու համար զայն իր ի-  
մացականութեան ու բարութեան : Աստուած չի  
կրնա՞ր մարդկային կեանքը սփռել մահուան դաշ-  
տերուն մէջ :

« Ով կէանոսին մէջ չկա՞յ շիթ մը ջուր , որ կենդա-  
նի էակներով լեցուն չըլլայ , ու մենք անոնց  
պէտք չունենանք . մեր գլուխներուն վերև թա-  
ւալող այնքան աստղերուն մէջ չկա՞յ բան մը որ  
մեզի համար չըլլայ : Ի՞նչ , գերագոյն իմացակա-  
նութիւնը և աստուածային բարութիւնը հո՞ն մի-  
այն գոյութիւն ունին , ուր կը գտնուինք . միթէ  
ունայն անջրպետ մը և յաւերժական անէութիւն  
մը միայն կա՞ն այդ ճաճանչագեղ և անհամար  
լուսագունդերուն և զանոնք շրջապատող այդ  
անհուն լուսադաշտերուն մէջ , որոնք չեն մթազ-  
նիր ո՛չ փոթորիկներէն և ոչ ալ աղջամուղջէն :  
Մենք որ բան մը չենք տուած մեր անձին , եթէ  
համարձակէինք սահմաններ գծել այն զօրութեան  
առջև , որմէ ամէն բան ստացած ենք , այն ատեն  
պիտի կարծէինք թէ անոր տիրապետութեան  
սահմաններուն մէջ կը գտնուինք , ուր կեանքը  
կը մաքառի մահուան հետ , ու անմեղութիւնը՝  
բռնակալութեան հետ :

« Անտարակոյս , կայ տեղ մը , ուր առաքի-  
նութիւնը կը ստանայ իր վարձքը : Վիրժինի եր-  
ջանիկ է հիմա : Ա՛հ , եթէ ան կարենար հրեշ-  
տակներու օթեւանէն հաղորդակցիլ ձեզի հետ ,



իրբ հրաժեշտ պիտի ըսէր. «Ո՛վ Բօլ, կեանքը  
փորձութիւն մըն է: Ես հաւատարիմ գտնուեցայ  
բնութեան, սիրոյ և առաքինութեան օրէնքնե-  
րուն: Ծովերը կտրեցի անցայ, ծնողքիս հնա-  
զանդելու համար. հարստութենէ հրաժարեցայ,  
իմ խոստումս բռնելու համար, ու նախընտրեցի  
կեանքս զոհել քան թէ ամօթխածութիւնս վի-  
րաւորել: Երկինք իմ կեանքիս ընթացքը բաւա-  
րար կերպով լրացած նկատեց: Ես այլեւս ընդ  
միշտ ազատեցայ սղքատութենէ, զրպարտութե-  
նէ, փոթորիկներէ և ուրիշներու պարզած ցաւա-  
գին տեսարաններէն: Մարդոց սոսկում պատճա-  
ռող չարիքներէն և ոչ մէկը այլեւս չի կրնար  
վնասել ինձի, մինչ դուք կ'ողբաք իմ վրաս: Ես  
վճիտ ու անայլայլ եմ լոյսի մասնիկի մը պէս,  
իսկ դուք կեանքի աղջամուղջին մէջ կ'ուզէք  
մտցնել զիս:

«Ո՛վ Բօլ, ո՛վ իմ բարեկամս, յիշէ՛ երջան-  
կութեան այն օրերը, երբ առտուրնէ սկսեալ կը  
վայելէինք երկնքին ընծայած հեշտանքը, արե-  
ւուն հետ արթննալով ժայռերու սարերուն վրայ,  
ու անոր ճառագայթներուն հետ ժուռ գալով ան-  
տառներուն ծոցը: Մենք կը զմայլէինք հոն,  
առանց պատճառը հասկնալու: Մեր անմեղ ըղ-  
ճանքներուն մէջ կ'ուզէինք կատարեալ տեսո-  
ղութիւն ունենալ, արշալոյսին ճոխ երանգները  
վայելելու համար, կատարեալ հոտոտելիք՝ մեր  
տունկերուն բոյրերը զգալու համար, կատարեալ  
լսողութիւն՝ մեր թռչուններուն համերգները  
ունկնդրելու համար, կատարեալ սիրտ՝ այդ բա-  
րիքները ճանչնալու համար: Հիմա, զեղեցկու-  
թեան այս աղբերակին քով, ուրկէ կը հոսի ա-  
մէն ինչ որ հաճելի է երկրի վրայ, իմ հողիս կը

տեսնէ, կ'ըմբռնչխնէ, կը լսէ և իսկոյն կը շօշա-  
փէ այն բաները, զոր չէր կրնար զգալ տկար գոր-  
ծարաններու միջոցաւ:

«Ա՛հ, ո՞ր լեզուն պիտի կրնար նկարագրել  
յաւերժական շողշոշում ունեցող այս ափերը, ուր  
կը բնակիմ միշտ: Մենք անխառն հաճոյքով կը  
վայելենք բոլոր այն բաները, զոր անհուն զօրու-  
թիւն մը ու երկնային բարութիւն մը ստեղծած  
է, զժբախտ էակ մը սփռիելու համար, բոլոր  
այն բաները որոնք հաւաքական ցնծութեանց  
մէջ ներդաշնակութիւն կը դնեն, շնորհիւ միւ-  
նոյն երանութեամբ հրճուող անհամար էակնե-  
րու բարեկամութեան: Ուրեմն արիացի՛ր այն  
փորձանքին մէջ, որուն մատնուած ես, որպէս-  
զի քու Վիրժինիիդ երջանկութիւնը աւելցնես  
անսահման սիրով մը, հարսանիքով մը, որուն  
ջահերը անշէջ պիտի մնան: Հոն պիտի հանդար-  
տեցնեմ քու կակիճներդ, հոն պիտի սրբեմ քու  
արցունքներդ: Ո՛վ իմ բարեկամս, իմ երիտա-  
սարդ ամուսինս, քու հոգիդ բարձրացո՛ւր դէպի  
անհունը, վայրկեանի մը վշտերուդ տոկալու  
համար»:

Զգացած յուզումս պատճառ եղաւ որ խօսքս  
վերջացնեմ: Իսկ Բօլ աչքերը իմ վրաս սեւեռած,  
գոչեց. «Ոչ եւս է Վիրժինի, ոչ եւս է Վիրժի-  
նի», ու երկարատեւ նուազում մը յաջորդեց այդ  
ցաւազին խօսքերուն: Յետոյ Բօլ սթափելով  
ըսաւ.

— Քանի որ մահը բարիք մըն է, ու Վիր-  
ժինի երջանիկ է, կ'ուզեմ ես ալ մեռնիլ, Վիրժի-  
նիիս միանալու համար:

Այսպէս՝ միսիթարութեան համար առաջ բե-  
րած պատճառներս Բօլի յուսահատութիւնը ար-

ծարժելու ծառայեցին: Ես կը նմանէի մէկուն, որ կ'ուզէ ազատել գետի մը մէջ խորասուզուած բարեկամ մը, երբ ան չուզեր լողալ: Վիշտը ընկճած էր Բօլը: Ափսո՛ս, մանկութեան դժբախտութիւնները կը պատրաստեն մարդը՝ կեանքի մէջ մուտ գործելու, մինչ Բօլ բնաւ չէր կրած այդ դժբախտութիւնները:

Իր բնակարանը առաջնորդեցի Բօլը: Հոն գտայ մայրը և Տիկին տը Լա Թուրը՝ նուազկոտ վիճակի մէջ, որ աւելի սաստկացած էր: Մարկրիթ ամէնէն աւելի ընկճուած էր: Աշխուժ բնաւորութիւն ունեցողներուն վրայ ազդեցութիւն չեն գործեր թեթև վիշտերը, բայց անոնք ամէնէն քիչ կը տոկան մեծ վիշտերուն: Մարկրիթ ըսաւ ինձի.

— Ո՛վ բարի դրացիս, այս գիշեր Վիրժինին տեսայ, սպիտակ զգեստներով, հեշտազուարճ պուրակներու և պարտէզներու մէջ: Ան ըսաւ. «Նախանձելի երջանկութիւն մը կը վայելեմ»: Յետոյ Բօլի մօտեցաւ ծիծղուն դէմքով մը ու իր նետ բարձրացուց զայն: Մինչ կը ջանայի զաւակս բռնել, զգացի որ ես ալ երկրէն կը բաժնուէի ու անոր կը նետելի անբացատրելի հաճոյքով մը: Այն ատեն ուզեցի հրաժեշտ առնել իմ բարեկամուհիէս. իսկոյն տեսայ որ ան մեզի կը նետելէր Մառիի և Տօմինկի ընկերակցութեամբ: Բայց ինչ որ աւելի տարօրինակ կը թուի ինձի՝ սա է թէ Տիկին տը Լա Թուր նոյն գիշերն իսկ երազ մը տեսած է միեւնոյն պարագաներով:

Ու ես պատասխանեցի անոր.

— Բարեկամուհի՛ս, ես կը հաւատամ որ աշխարհի մէջ ո՛չ մէկ բան կը պատահի, առանց

Աստուծոյ հրամանին : Երազները երբեմն կը յայտ-  
ներերեն ճշմարտութիւնը :

Տիկին տը Լա Թուր ինծի պատմեց համա-  
նման երազ մը , զոր նոյն գիշերը տեսած էր : Այդ  
երկու կիներուն մէջ աւելորդապաշտութեան  
հակում մը չէի տեսած . ուստի ուշս գրաւեց ա-  
նոնց երազներու զուգադիպութիւնը , ու ներք-  
նապէս բնաւ չտարակուսեցայ անոնց իրակա-  
նացման մասին : Այն կարծիքը թէ ճշմարտու-  
թիւնը երբեմն ի յայտ կուգայ մեր քունին մէջ ,  
աշխարհի բոլոր ժողովուրդներուն մօտ ալ տա-  
րածուած է : Ամենահին մարդիկն ալ երազներու  
հաւատացած են . ի մէջ այլոց Աղեքսանդր , Կե-  
սար , Սկիպիոնները , երկու կատօնները և Բրու-  
տոս , որոնք տկարամիտներ չէին : Հին եւ նոր  
կտակարանները մեզի կ'ընծայեն շատ մը օրի-  
նակներ երազներու , որոնք իրականացած են :

Գալով ինծի , այդ մասին իմ անճնական  
փորձառութիւնս ունիմ , ու քանիցս փորձած եմ  
որ երազները մեզմով շահագրգռուող իմացակա-  
նութեան մը կողմէ եղած ազդարութիւններ են :  
Անկարելի է որ մարդ կարենայ դատողութեամբ  
պայքարիլ այնպիսի բաներու դէմ , որոնք մարդ-  
կային իմացողութենէն գերիվեր են . նոյնպէս  
չի կրնար արգիլել զանոնք : Սակայն , եթէ  
մարդկային բանականութիւնը Աստուծոյ պատ-  
կերն է , որով մարդ կարող կ'ըլլայ իր մտադրու-  
թիւնները մինչև աշխարհի միւս ծայրը հասցնե-  
լու գաղտնի և թաքուն միջոցներով , ինչո՞ւ ու-  
րեմն տիեզերքը վարող իմացականութիւնը մի-  
ևնոյն միջոցներուն չգիմէ , միեւնոյն վախճանին  
հասնելու համար :

Բարեկամ մը նամակով մը կը մխիթարէ իր

բարեկամը . այդ նամակը շատ մը երկիրներէ  
կ'անցնի , ազգերու ատելութեանց մէջ կը շքի ,  
ի վերջոյ ուրախութիւն կամ յոյս ընծայելու հա-  
մար մարդու մը . անմեղութեան պաշտպան գե-  
րագոյն էակը ինչո՞ւ չկրնայ թաքուն միջո-  
ցով մը օգնութեան հասնիլ առաքինի հոգիի մը ,  
որ իր յոյսը անոր վրայ դրած է : Արտաքին  
նշանի մը պէտք ունի՞ , իր կամքը կատարելու  
համար , քանի որ իր բոլոր գործերուն մէջ ներ-  
քին մղումով կը գործէ միշտ :

Ուրեմն ինչո՞ւ տարակուսիլ երազներու մա-  
սին : Կեանքը երազէ տարբեր բա՞ն մըն է իր  
վաղանցիկ ու սնտոի ծրագիրներով :

Ի՞նչ որ ալ ըլլայ , իմ տարաբախտ բարեկա-  
մուհիներուս երազը իրականացաւ շուտով : Վիրժի-  
նիի մահէն երկու ամիս յետոյ՝ Բօլ մեռաւ , միշտ  
անոր անունը յեղյեղելով : Մարկրիթ իր զաւկին  
մահէն ութը օր յետոյ հոգին աւանդեց այնպիսի  
բերկրանքով մը , որ առաքինութեան վերապահ-  
ուած է : Ամենէն գորովալից հրաժեշտը տուաւ  
Տիկին տը Լա Թուրի . «կը յուսամ թէ քաղցր ու  
յաւիտենական միացում մը պիտի ունենանք :  
Մահը ամէնէն մեծ բարիքն է , որուն պէտք է  
ցանկայ ամէն մարդ : Եթէ երբեք կեանքը պա-  
տիժ մըն է , ուրեմն պէտք մահուան բաղձալ .  
եթէ փորձութիւն մըն է , մաղթելու է որ կար-  
ճատեւ ըլլայ» :

Կառավարիչը ստանձնեց Տօմինկի և Մառիի  
ապրուստի հոգը , քանի որ անոնք չէին կրնար  
ծառայել այլեւս . արդէն շատ չապրեցան իրենց  
տիրուհիներու մահէն յետոյ : Գալով խեղճ Ֆիտէլի ,  
իւր տիրոջ մահէն քիչ յետոյ մեռաւ հիւժումէ :

Տիկին տը Լա Թուրը իմ տունս տարի , որ

հոգիի անհաւատալի մեծութեամբ մը կը տոկար  
այդքան ծանր կորուստներու : Ան Բօլը և Մար-  
կրիթը մխիթարած էր մինչեւ անոնց վերջին  
շունչը , իբր թէ անոնց վիշտը միայն ունենար :  
Երբ ոչ ևս էին Բօլ և Մարկրիթ , դարձեալ Տի-  
կին տը Լա Թուր անոնց վրայ կը խօսէր , որպէս  
սիրելիներու , որոնք իբր թէ մօտակայքը բնակէ-  
ին : Սակայն Տիկին տը Լա Թուր մէկ ամիս միայն  
վերապրեցաւ այնուհետեւ : Գալով իր հօրաքրոջ ,  
փոխանակ զայն մեղադրելու իր հասցուցած չա-  
րիքներուն համար , Աստուծոմէ կը խնդրէր որ  
ներէ զանոնք և հանդարտեցնէ մտային սոսկալի  
վրդովումները իր ազգականուհիին , որուն մատ-  
նուած էր ան , Վիրժինին անդթօրէն ճամբելէն  
անմիջապէս յետոյ , ինչպէս իմացանք ի վերջոյ :

Այդ անողորմ արարածը շուտով կրեց իր  
խստութեան պատիժը : Քանի մը նաւերու յա-  
ջորդական ժամանումներէն յետոյ իմացայ թէ  
Տիկին տը Լա Թուրի հօրաքոյրը ջղային հիւան-  
դութենէ կը տառապէր , որ անհանդուժելի  
կը դարձնէր թէ՛ կեանքը և թէ՛ մահը : Մերթ-  
ինքղինքը կը մեղադրէր իր հմայիչ ազգակա-  
նուհիին կանխահաս մահուան , անոր մօրը կորուս-  
տին համար , որ քիչ յետոյ պատահած էր : Մերթ-  
կ'ուրախանար , իր քովէն հեռացուցած ըլլալուն  
համար այդ երկու խեղճ արարածները , որոնք իր  
ընտանիքը անպատուած էին իրենց գժուճ հա-  
կումներով , ինչպէս կ'ըսէր ինք : Երբեմն ալ կը  
զայրանար , ի տես այն բազմաթիւ թշուառնե-  
րուն , որոնցմով լեցուած էր Բարիդ : Ու կը  
գոչէր .

— Ինչո՞ւ մեր գաղթավայրերը չեն զրկեր  
այս թափառաշրջիկները , որպէսզի հոն կորստեան  
մատնուին :

Ան կ'աւելցնէր թէ մարդասիրութեան ,  
կրօնքի գաղափարները , որոնք բոլոր ժողովուրդ-  
ներու կողմէ ընդունուած են , իշխաններու քա-  
ղաքականութեան գիւտերն են : Յետոյ ներհակ  
ծայրայեղութեամբ՝ աւելորդապաշտ սարսափներ  
կ'ուենեանար , որոնք մահացու սոսկումներով կը  
լեցնէին զինքը : Եւ ահա՛ , կը փութար իրեն  
խրատատու եղող հարուստ միանձնուհիներու մօտ ,  
ու առատ ողորմութիւններ կուտար անոնց ,  
խնդրելով որ Աստուծոյ բարկութիւնը իջեցնեն իր  
հարստութեան նուիրումով , իբր թէ Աստուծոյ  
հաճելի թուէին այն ինչքերը զոր չէր ուզած  
աղքատներուն շնորհել : Յաճախ իր աչքին առջև  
կուգային հրակէզ դաշտեր , բոցավառ լեռներ ,  
ուր զազրելի ուրուականներ կը թափառէին , ու  
անեղագոչ ձայնով կը կանչէին զինքը : Իր խոս-  
տովանահայրերուն ոտքը կ'իյնար , ու կուզէր  
չարչարանքներու , տանջանքներու մատնել իր  
անձը , որովհետեւ արդարադաա երկնքին տնօրի-  
նութեամբ՝ անգութ հոգիները սոսկալի բարե-  
պաշտութիւն մը կ'ուենեան :

Այսպէս անցան քանի մը տարիներ . Տիկին  
տը Լա թուրի հօրաքոյրը մերթ անաստուած ու  
աւելորդապաշտ , թէ՛ մահէն և թէ կեանքէն կը  
սոսկար : Բայց այդ շատ ցաւագին կեանքին վախ-  
ճանը դրաւ այն բանը , որուն զոհած էր բնու-  
թեան զգացումներն իսկ : Ան վիշտ զգաց , տես-  
նելով որ իր հարստութիւնը պիտի մնար այն  
ազգականներուն ձեռքը զոր կ'ատէր : Ուստի ջանաց  
օտարներու փոխանցել իր հարստութեան մեծա-  
գոյն մասը . ազգականները օգտուելով անոր ջղային  
նոպաներէն , որոնց ենթակայ էր , իբր խելագար  
արգելափակել տուին զայն , ու ինչքերն ալ մա-

տակարարեցին: Այսպէս իր հարստութիւնն ալ  
փճացաւ, և որովհետեւ իր սիրտը խստացած էր  
այդ հարստութեան պատճառով, անոր ցանկա-  
ցող մարդիկն ալ անզգայ դարձան: Ան մեռաւ,  
և ի լրումն դժբախտութեան, բաւական խելք  
ունեցաւ, հասկնալու համար թէ ինք կողոպտուած  
ու անարդուած էր այն անձերուն իսկ կողմէ,  
որոնք իրեն խորհուրդ տուած էին ամբողջ կեան-  
քին մէջ:

Միեւնոյն եղէգներուն տակ, Վիրժինիին  
քով թաղեցին Բօլը, ու անոնց շուրջը՝ գորովա-  
գութ մայրերը և ծառաները: Մարմարէ շի-  
րիմներ չկանգնեցին անոնց խոնարհ հողակոյտե-  
րուն վրայ, և ոչ ալ տապանագրեր՝ անոնց ա-  
ռաքինութիւններուն նուիրուած, բայց յիշա-  
տակնին անջնջելի մնացած է ամէն անոնց սրբ-  
տին մէջ, զոր երախտապարտ կացուցած են: Ա-  
նոնց ոգիները այն շքեղանքին պէտք չունին,  
որմէ խոյս տուած են կեանքի մէջ, բայց եթէ ա-  
նոնք տակաւին կը շահագրգռուին այս աշխարհի  
անցուդարձերով, անշուշտ հաճոյքով կը թափա-  
ռին տանիքին վրայ այն խրճիթին, ուր կը  
բնակի ժրաջան առաքինութիւնը, իրենց բախտէն  
դժգոհ աղքատները մխիթարելու, երիտասարդ  
սիրահարներուն մէջ վառ պահելու համար յարա-  
տեւ հուրք մը, բնական բարիքներու ճաշակը,  
աշխատասիրութիւնը և հարստութենէ երկն-  
չումը:

Ժողովուրդին ձայնը լուռ կը մնայ թագա-  
ւորներու փառքին համար բարձրացած յիշատա-  
կարաններուն հանդէպ, բայց այս կղզիին կարգ մը  
մասերուն տուած է այնպիսի անուններ, որոնք  
կը յաւերժացնեն Վիրժինիին կորուստը: Ամպր




կղզիին մօտ, խարակներուն մէջտեղ, կը տեսնուի վայր մը, որ Սեն-ժեռանի Անցի կը կոչուի, ուր ընկղմեցաւ համանուն նաւը, Վիրժինին եւրօպայէն բերած ատեն: Աղիսաբեր Հրուանդան կը կոչուի այն երկար հողածայրին վերջաւորութիւնը, զոր կը նշմարէք երեք փարսախս հեռու, ծովուն ալիքներով կիսովին ծածկուած, և ուր կէ Սեն-ժեռան չկրցաւ անցնիլ փոթորիկին առջի օրը: Ահա՛, մեր առջև, ձորակին ծայրը, Քերեզմանի Ծովախորը կը գտնուի, ուր Վիրժինի թաղուած գտնուեցաւ աւազին մէջ, իբր թէ ծովը իր ընտանիքին բերած ըլլար մարմինը, ու վերջին յարգանքները ընծայած էր անոր ամօթխածութեան՝ այն միւսնոյն ափունքին վրայ, զոր իր անբժուութեամբ պատուած էր:


Ո՛վ սիրակցորդ պատանիներ, ո՛վ անբախտ մայրեր, ո՛վ սիրասուն ընտանիք, հիմա միասին ձեր կորուստը կ'ողբան այն անտառները որոնք հովանի կ'ընծայէին ձեզի, այն աղբերակները որոնք ձեզի համար կը հոսէին:

Չենէ յետոյ ոչ ոք համարձակած է մշակել այս անմարդի երկիրը և ոչ ալ վերականգնել այս համեստ խրճիթները: Չեր այծերը վայրենի դարձած, ձեր մրգաստանները փճացած են: Շահէններու կռիւնները միայն կը լսուին, որոնք բարձրաձեւ կը թնչին հովտին ժայռերուն վերեւ: Իսկ ես, ձեզ այլեւս չտեսնելէս ի վեր, կը նմանիմ բարեկամներէ զուրկ մարդու մը, զաւակները կորսնցուցած հօր մը, թափառական ճամբորդի մը, երկրին վրայ, ուր մինակ մնացած եմ:

Այս խօսքերը ընելէ յետոյ, բարի ծերունին հեռացաւ արտասուածոր, մինչ ես քանիցս արցունք թափած էի սոյն չարաշուք պատմուածքի ընթացքին:

**ՎԵՐՋ**













[ 2m ]





June  
643

7  
2